

ISSN 1829-1155

Հիմնադիր՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԷԿՄԱՆԱԳՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆ

## ՍԱՅՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Խմբագրական  
խորհուրդ՝

Գաղթիկ Նարուկյունյան  
Վահե Սպեհիանյան  
Վոլոդյա Նովիաննիսյան  
Վալերի Պողոսյան  
Արուշան Նակորյան

Խմբագրության հասցեն՝  
Երևան, Բաղրամյան 10  
Հեռախոս՝ 58-81-71

**ՏԵՂԵԿԱԳԻՐ**

4(88)  
2017

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### • ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1339-1352)

- \* ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՔՆԵՐԻ ՊԱՇՏՈԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ  
ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ՀՀ ՕՐԵՆՍԳՐՔԻ 258-ՐԴ, 260-ՐԴ, 262-ՐԴ, 266-ՐԴ ԵՎ 267-ՐԴ  
ՀՈԴՎԱԾՆԵՐԻ, «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 5-ՐԴ  
ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ԵՎ 6-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1339 - 24 հունվարի 2017 թվականի) .....5
- \* ԱՄԱԲԴԱ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ, ՎԼԱԴԻՄԻՐ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ, ԱՐՄԵՆ  
ԱՂԱՋԱՆՅԱՆԻ ԵՎ ԱՐՄԻՆԵ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
«ՍՆԱԿՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 54-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ  
«Ա» ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1340 - 31 հունվարի 2017 թվականի) .....26
- \* 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՈՒՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՄՈԼԴՈՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՄԻԶԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ՝ ԱՌԱՆՑ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳՐԻ  
ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1341 - 7 փետրվարի 2017 թվականի) .....39
- \* 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ԴՈՒԲԱՅՈՒՄ ՍՈՒՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ  
ՄԻԱՅՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ  
ԱՆՎԱՆԱԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ  
ԵՎ ԱՀԱԲԵԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1342 - 7 փետրվարի 2017 թվականի) .....42
- \* 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՈՒՐԱԳՐՎԱԾ՝  
«ԲՆԱԿԱՆ ՄՈՐԹՈՒՅՑ ՀԱԳՈՒՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ, ՀԱԳՈՒՄԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ  
ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱՏԵՍՍԿՆԵՐ» ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԴԻՐՔԻ ՀԱԿԻ  
(ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ) ՆԵՐՆԵՐՈՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՈՒՄ  
ՆԵՐՆԵԼՈՒ ՓՈՐՁԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ 2015-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ  
ԻՐԱԿԱՆՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ի  
ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1343 - 7 փետրվարի 2017 թվականի) .....46

\* ԱՐԱՄ ՇԱՀԲԱԶՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ  
ՔԱՂԱՔԱՅԻԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 213-ՐԴ  
ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ԵՎ 4-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1344 - 7 փետրվարի 2017 թվականի) .....49

\* 1925 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-ԻՆ ԺՆԵՎՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՀԵՂՋՈՒՑԻՉ  
ԹՈՒՆԱՎՈՐՈՂ ԿԱՄ ԱՅԼ ԳԱԶԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ  
ՄԱՆՐԷԱԲԱՍԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ  
ԱՐՋԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1345 - 14 փետրվարի 2017 թվականի) .....59

\* 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՄԻԳՐԱՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ԿԵՆՏՐՈՆԻ (ՄՔՄՍԿ) ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ  
ՄՔՄՍԿ-Ի ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1346 - 14 փետրվարի 2017 թվականի) .....62

\* ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
«ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՎՁԱՆԱՅԻՆ  
ՃԱՆԱՊԱՐՀԻ (Մ6 ՎԱՆՉՈՐ-ՔԱԳՐԱՆՇԵԼ) ԲԱՐԵԼԱՎՄԱՆ  
ԾՐԱԳԻՐ» (ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ) ՎԱՐԿԱՅԻՆ  
ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1347 - 14 փետրվարի 2017 թվականի) .....67

\* ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱՆ ԵՎ ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ  
21-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ԵՎ 6-ՐԴ ՄԱՍԵՐԻ, 66-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ, 426.2-ՐԴ ԵՎ  
426.3-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ, 49-ՐԴ ԳԼԽԻ ՆՈՐՄԵՐԻ, ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ  
13-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ, 84-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ, «ՊԱՏԺԻՑ ԱԶԱՏԵԼԸ ՎԵՐՏԱՌՈՒԹՅԱՆԲ  
12-ՐԴ ԳԼԽԻ ՆՈՐՄԵՐԻ, «ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍ-ԳՐՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ  
(2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՆԻ 16-Ի ՀՕ-83-Ն)՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1348 - 14 փետրվարի 2017 թվականի) .....72

- \* 2016 թվականի օգոստոսի 12-ին բրազիլիացին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՐԱԶԻԼԻԱՅԻ  
ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ  
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ՝ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԱՍԻՆԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ  
(ՄԴ 1349 - 28 փետրվարի 2017 թվականի).....94
- \* 1990 թվականի ՀՈՒՆԻՍԻ 26-ին ՍՏԱՄԲՈՒԼՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՅԻՆ (ԿԻՑ  
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆՔ) ԱՄՐԱԳՐՎԱԾ՝ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴ 1350 - 28 փետրվարի 2017 թվականի) .....98
- \* 2016 թվականի ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-ին ՍՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԻԱՆԱՀԱՆ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ  
ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ (ՌԻԺԵՐԻ) ԵՎ  
ՌՈՒՍԻԱՆԱՀԱՆ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՌԻԺԵՐԻ ԶՈՐՔԵՐԻ ՌԻԺԵՐԻ  
ՄԻԱՅՅԱԼ ԽՄԲԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊՈՐՏՎԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՎՀԱՆԱՆԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴ 1351 - 28 փետրվարի 2017 թվականի) .....102
- \* 2016 թվականի ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-ին ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՖԲԱՆԱՍԿԱՆ  
ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ՄԻՋԵՎ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ՝ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴ 1352 - 28 փետրվարի 2017 թվականի) .....108

### • *ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ*

- \* ՀՐԱՎԵՐ ՔԵՍՔԻՉՈՒ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՑ .....111  
 \* ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԻՏԱԼԻԱՅԻ  
ՍԱՀՄԱՆԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ .....114  
 \* ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ՀՈՇՈՍՈՒՄ .....115  
 \* ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍՈՒՐԵ ԱԹՈՌՈՒՄ .....119



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՈԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԽՄԱՆ ՎՐԱ՝  
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆԱԽՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԳՐքԻ

258-ՐԴ, 260-ՐԴ, 262-ՐԴ, 266-ՐԴ ԵՎ 267-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ,  
«ՊՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ԵՎ  
6-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ՝

Քաղ.Երևան

24 հունվարի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝  
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլում-  
յանի (զեկուցող), Ֆ. Թոփյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհան-  
նիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրովյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի ներկայացուցիչներ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտ-  
պանի աշխատակազմի իրավական վերլուծության վարչության պետ Լ.  
Սարգսյանի և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի խորհրդական  
Ն.Փիրումյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային  
ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխա-  
տակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի և նույն  
վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ.  
Դանիելյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության  
(2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 68-րդ հոդվածների,

դրույց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Վարչական իրավախիստումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 258-րդ, 260-րդ, 262-րդ, 266-րդ և 267-րդ հոդվածների, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 16-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով Վարչական իրավախիստումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքը, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Վարչական իրավախիստումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքը ՀԽՍՀ Գերազույն խորհրդի կողմից ընդունվել է 1985թ. դեկտեմբերի 6-ին և ուժի մեջ է մտել 1986թ. հունիսի 1-ից:

Վարչական իրավախիստումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ «Խախտողի բերումը» վերտառությամբ 258-րդ հոդվածը սահմանում է.

«Վարչական իրավախիստման վերաբերյալ արձանագրություն կազմելու նպատակով, եթե արձանագրություն կազմելը պարտադիր է, երբ տեղում այն կազմել հնարավոր չէ, խախտողը ոստիկանության աշխատողի կողմից կարող է բերվել ոստիկանություն։

Տրանսպորտային միջոցներից օգտվելու կանոնների, երթևեկության կարգն ու անվտանգությունը պահպանելու կանոնների, տրանսպորտում բեռների անվթարության ապահովմանն ուղղված կանոնների, հրդեհային անվտանգության կանոնների, տրանսպորտում սանիտարահիգիենիկ և սանիտարահականամածարակային կանոնների խախտումներ կատարելու դեպքում խախտողը դրա համար լիազորված անձի կողմից կարող է բերվել ոստիկանություն, եթե նա չունի ինքնությունը հաստատող փաստաթղթեր և չկան վկաներ, որոնք կարող են անհրաժեշտ տվյալներ հաղորդել խախտողի մասին։

Բնապահպանական օրենսդրության խախտումների դեպքում արձանագրություն կազմելու նպատակով, եթե խախտողի անձը չի կարող պարզվել խախտման տեղում, բնապահպանության ոլորտում լիազորված մարմնի տեսուչները, այդ թվում՝ հասարակական տեսուչները, ինչպես նաև ոստիկանության աշխատակիցները կարող են այդ իրավախիս-

տումները կատարած անձանց բերել ոստիկանության շենք՝ իրավախախտումները կանխելու, խախտողի անձը պարզելու և իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու համար:

Դահպանվող օբյեկտների, այլ պետական կամ հանրային գույքի նկատմամբ ոտնձգության հետ կապված իրավախախտումներ կատարելու դեպքում խախտողը ռազմականացված պահպանության աշխատողների կողմից կարող է բերվել ռազմականացված պահպանության ծառայողական շենք կամ ոստիկանություն՝ իրավախախտումները կանխելու, իրավախախտողի անձը պարզելու և իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու համար:

Բերումը պետք է կատարվի հնարավորին չափ կարճ ժամկետում:

Բերված անձի գտնվելը կամավոր ժողովրդական դրուժինայի շտաբում չի կարող տևել մեկ ժամից ավելի»:

Օրենսգրքի 258-րդ հոդվածը փոփոխվել է 2002թ. դեկտեմբերի 11-ի ՀՕ-495-Ն և 2012թ. փետրվարի 7-ի ՀՕ-2-Ն օրենքներով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ «Վարչական ձերբակալում» վերտառությամբ 260-րդ հոդվածը սահմանում է.

«Վարչական ձերբակալման մասին կազմվում է արձանագրություն, որտեղ նշվում է այն կազմելու ժամանակաթիվն ու տեղը, արձանագրություն կազմող անձի պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը. տեղեկություններ ձերբակալվածի անձի մասին. ձերբակալման ժամանակը, տեղը և հիմքերը:

Արձանագրությունը ստորագրում են այն կազմող պաշտոնատար անձը և ձերբակալվածը: Արձանագրությունը ստորագրելուց ձերբակալվածի հրաժարվելու դեպքում դրանում այդ մասին նշում է արվում:

Վարչական իրավախախտում կատարելու համար ձերբակալված անձի խնդրանքով նրա գտնվելու վայրի մասին տեղյակ են պահվում հարազատները, աշխատանքի կամ ուսման վայրի աղմինիստրացիան: Անշափահասի ձերբակալման մասին նրա ծնողներին կամ նրանց փոխարինող անձանց տեղյակ պահելը պարտադիր է:

ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի նոյեմբերի 23-ի ՍԴՈ-1059 որոշմամբ 260-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Վարչական իրավախախտում կատարելու համար ձերբակալված անձի խնդրանքով նրա գտնվելու վայրի մասին տեղյակ են պահվում հարազատները, աշխատանքի կամ ուսման վայրի աղմինիստրացիան» դրույթը ձանաշվել է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին հակասող և անվավեր:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ «Վարչական ձերբակալման ժամկետները» վերտառությամբ 262-րդ հոդվածը սահմանում է.

«Վարչական իրավախախոռում կատարած անձի վարչական ձերբակալումը կարող է տևել ոչ ավելի, քան երեք ժամ, բացառիկ դեպքերում, հատուկ անհրաժեշտության կապակցությամբ ԽՍՀ Միության և Հայաստանի Հանրապետության օրենսդրական ակտերով կարող են սահմանվել վարչական ձերբակալման այլ ժամկետներ:

Սահմանային ռեժիմը կամ ԽՍՀՄ պետական սահմանի անցման կետերի ռեժիմը խախտող անձինք կարող են ձերբակալվել մինչև երեք ժամ տևողությամբ՝ արձանագրություն կազմելու համար, իսկ անհրաժեշտության դեպքում անձը և իրավախախտման հանգամանքները պարզելու համար՝ մինչև երեք օր ժամանակով, ձերբակալման պահից քսանչորս ժամվա ընթացքում այդ մասին գրավոր հաղորդելով դատախազին, կամ դատախազի սանկցիայով՝ մինչև տասը օր ժամանակով, եթե իրավախախտողները չունեն իրենց անձը հաստատող փաստաթղթեր: (Սույն մասն ուժը կորցրել է 2004թ. դեկտեմբերի 24-ին ընդունված ՀՕ-68-Ն օրենքով):

Վարչական ձերբակալման ժամկետը հաշվում է արձանագրություն կազմելու համար խախտողին բերելու պահից, իսկ հարբած վիճակում գտնվող անձին՝ նրա սրավիվելու ժամանակից:

Ընդունումից հետո օրենսգրքի 262-րդ հոդվածը փոփոխվել է 1988թ. օգոստոսի 29-ին, 1990թ. մարտի 10-ին, ինչպես նաև 1996թ. դեկտեմբերի 3-ի ՀՕ-102 և 2004թ. դեկտեմբերի 24-ի ՀՕ-68-Ն օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի նոյեմբերի 23-ի ՍԴՈ-1059 որոշմամբ 262-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները ճանաչվել են ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 3-րդ մասի և 103-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի պահանջներին հակասող և անվավեր: Նոյն որոշմամբ 262-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված՝ 262-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները նույնպես ճանաչվել են ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի և 16-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին հակասող և անվավեր:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ «Վարչական ձերբակալման, զննության և իրերի ու փաստաթղթերի վերցման գանգատարկումը» վերտառությամբ 266-րդ հոդվածը սահմանում է.

«Վարչական ձերբակալումը, անձնական գննությունը, իրերի զննությունը և իրերն ու փաստաթղթերը վերցնելը կարող են շահագրգության անձի կողմից գանգատարկվել վերադաս մարմնին (պաշտոնատար անձին) կամ դատախազին»:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ «Վարչական պատասխանատվության ննթարկվող անձի իրավունքներն ու պարտականությունները» վերտառությամբ 267-րդ հոդվածը սահմանում է.

«Վարչական պատասխանատվության ենթարկվող անձը իրավունք ունի ծանոթանալու գործի նյութերին, բացատրություններ տալու, ապացույցներ ներկայացնելու, միջնորդություններ հարուցելու, գործի քննության ընթացքում օգտվելու փաստաբանի իրավաբանական օգնությունից. ելույթ ունենալու մայրենի լեզվով և օգտվելու թարգմանի ծառայություններից, եթե չի տիրապետում այն լեզվին, որով տարվում է վարույթը. զանգատարկելու գործով որոշումը: Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվում է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ: Գործը կարող է այդ անձի բացակայությամբ քննվել միայն այն դեպքերում, եթե տվյալներ կան գործի քննության տեղի և ժամանակի մասին նրան ժամանակին ծանուցելու վերաբերյալ և եթե նրանից միջնորդություն չի ստացվել գործի քննությունը հետաձգելու մասին:»

Սույն օրենսգրքի 401-404, 406-4012, 53, 147 հոդվածի երկրորդ մասով, 172 հոդվածներով, 175 հոդվածի երրորդ մասով, 182 և 185 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելիս վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությունը պարտադիր է: Ոստիկանության կամ ժողովրդական դատավորի կանչով ներկայանալուց խուսափելու դեպքում այդ անձը կարող է ոստիկանության կողմից բերման ենթարկվել:

ԽՍՀ Միության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կարող են նախատեսվել նաև այլ դեպքեր, եթե վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայանալը գործը լուծող մարմնին (պաշտոնատար անձին) պարտադիր է:

Օրենսգրքի 267-րդ հոդվածը խմբագրվել է 1991թ. օգոստոսի 2-ին, 1995թ. մայիսի 19-ի ՀՕ-137 օրենքով, 1996թ. դեկտեմբերի 3-ի ՀՕ-102 օրենքով, փոփոխվել է 2011թ. մայիսի 26-ի ՀՕ-165-Ն օրենքով և 2012թ. փետրվարի 7-ի ՀՕ-2-Ն օրենքով:

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2001թ. ապրիլի 16-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2001թ. մայիսի 16-ին և ուժի մեջ է մտել 2001թ. հունիսի 10-ին:

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի՝ «Ոստիկանության գործունեությունը և մարդու անձեռնմխելիության երաշխիքները» վերտառությամբ 5-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերը (վերնագիրը խմբագրվել է 2006թ. հունիսի 1-ին ընդունված ՀՕ-123-Ն օրենքով) սահմանում են.

«...Մարդու ինքանորով իր իրավունքների ու պարտականությունների ծանուցումը կատարվում է գրավոր: Ծանուցման ենթակա իրավունքների ցանկը և ծանուցման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»

Ոստիկանությունը պարտավոր է ձերբակալված անձանց իրական

հնարավորություն ընձեռել օգտվելու իրավաբանական օգնություն ստանալու իրավունքից, ոստիկանություն բերելու պահից սկսած՝ երեք ժամվարներացքում, տեղյակ պահել նրանց հարազատներին, իսկ նրանց բացակայության դեպքում՝ աշխատանքի կամ ուսման վայրի վարչակազմին՝ նրանց գտնվելու վայրի մասին: Անհրաժեշտության դեպքում միջոցներ են ձեռնարկվում նրանց բժշկական և (կամ) այլ օգնություն ցույց տալու, ինչպես նաև ձերբակալման կապակցությամբ անձի կամ նրա ընտանիքի անդամների կյանքին, առողջությանը, գույքին սպառնացող վտանգը վերացնելու ուղղությամբ...»:

Օրենքի նշված հոդվածը խմբագրվել է 2006թ. հունիսի 1-ին ընդունված ՀՕ-123-Ն օրենքով:

2. Դիմողը գտնում է, որ Վարչական իրավախսումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի վիճարկվող դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության 26-րդ, 27-րդ, 75-րդ, 79-րդ և 81-րդ հոդվածներին, քանի որ չեն ապահովում անձի Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների իրացման համար որոշակիություն և չեն բովանդակում անձի ազատության իրավունքի ապահովման բավարար երաշխիքներ:

Դիմողը պնդում է, որ վարչական ձերբակալման վերաբերյալ առկա օրենսդրական կարգավորումները չեն պարունակում ազատությունից զրկված լինելու հանգամանքով պայմանավորված անձի ազատության իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման, ազատությունից զրկված անձի նկատմամբ վատ վերաբերունքի դեմ իրավական երաշխիքներ և ակնհայտ անհրաժեշտություն կա դրանք համապատասխանեցնել ՀՀ Սահմանադրության և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի պահանջներին:

Հատ դիմողի՝ Վարչական իրավախսումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 262-րդ հոդվածի ուժով անձը կարող է ձերբակալվել մինչև 3 ժամ տևողությամբ, որն ակնհայտ ազատությունից զրկում է համարվում, բայց մինչեւ ժամանակ չունի այն նվազագույն իրավունքները, որոնք բխում են ՀՀ Սահմանադրության 27-րդ և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածների երաշխիքային կարգավորումներից:

Դիմողն առանձին անդրադառնալով Վարչական իրավախսումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 262-րդ հոդվածի 3-րդ մասին՝ պնդում է, որ վարչական ձերբակալման ժամկետը խախտողին բերելու պահից հաշվելու մասին այդ դրույթը և իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունը հակասում է ՀՀ Սահմանադրության 27-րդ, 79-րդ և 81-րդ հոդվածներին այնքանով, որքանով «բերելու պահից» ձևակերպումը չի նույնացվում անձին փաստացի ազատությունից զրկելու պահի հետ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 266-րդ հոդվածի սահմանադրականությունը դիմողը վիճարկում է՝ պատճառաբանելով, որ այն չի նախատեսում վարչական ձերքակալման, ինչպես նաև բերման ենթարկելու և իրավախախտի բերման իրավաչափությունը դատական կարգով վիճարկելու և ազատությունից զրկման ոչ իրավաչափ լինելու դեպքում դատարանի կողմից անձին սեղմ ժամկետում ազատ արձակելու հնարավորություն:

Վիճարկվող դրույթների համեմատական վերլուծության արդյունքում դիմողը եզրակացնում է, որ հստակ տարանշատված չեն «վարչական ձերքակալման», «քերման ենթարկելու» և «բերելու» ինստիտուտների նպատակները, կիրառման հիմքերը, ամրագրված չեն ազատությունից զրկված անձի իրավունքները:

Դիմողը գտնում է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի շրջանակներում անձին բերելու և ձերքակալելու ընթացակարգերի կիրառման նպատակները՝ իրավախախտի անձը պարզելու, իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու առումով, մասնակիորեն համընկնում են, սակայն բավարար որոշակիությամբ հստակեցված չեն իրավունքի սահմանափակման տեսանկյունից նույնաբնույթ այդ իրավական կառուցակարգերի տարրերակից առանձնահատկությունները:

Դիմողի կարծիքով, վիճարկվող օրենսդրական ձևակերպումների պայմաններում արհեստական բաժանում է իրականացված ազատությունից զրկելու միասնական մեխանիզմի առանձին տարրերի միջև, որն իրավակիրառ պրակտիկայում առաջացրել է անձի՝ ձերքակալվածի կարգավիճակ ձեռք բերելու սկզբնական պահի ճիշտ հաշվարկման խնդիր:

Հստ դիմողի՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի կարգավորումից ուղղակիորեն բխում է վարչական ձերքակալման իրավաչափության վիճարկման արտադատական կարգ: Ինչ վերաբերում է ազատությունից զրկման այլ ընթացակարգերի՝ բերման ենթարկելու և իրավախախտի բերման իրավաչափության վիճարկման իրավունքի ապահովմանը, օրենսգրքի համապատասխան կարգավորումներն ուղղակի բացակայում են:

Դիմողը պնդում է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի շրջանակներում անձի ազատության իրավունքը երաշխավորող սահմանադրական և միջազգային իրավական դրույթներն արտացոլող հստակ ու որոշակի օրենսդրական կարգավորումների բացակայության պատճառով ձևակորել է կայուն ոչ իրավաչափ պրակտիկա: Մարդու իրավունքների պաշտպանը փաստարկել է, որ նման հետևության համար հիմք են հանդիսացել իր գործունեության ընթացքում քննության առնված բազմաթիվ դեպքեր կապված անձին ազատությունից զրկելու հիմքերը:

շներկայացնելու, նրա իրավունքները չպարզաբանելու, նրա գտնվելու վայրի մասին իր նախընտրած անձին չտեղեկացնելու, փաստաբանի մուտքը ոստիկանություն չթույլատրելու հետ: Այդպիսի դեպքերում ոստիկանությունը պատճառաբանել է, թե անձն ընդամենը բերման է ենթարկվել և երբ ձերբակալվի՝ նրան կտրվեն այդ հնարավորությունները:

Խնդրու առարկա ընթացակարգերի հստակ կարգավորումների բացակայությունը, ըստ դիմողի, հանգեցրել է իրավակիրառ պրակտիկայի ոչ իրավաչափությանը նաև այն առումով, որ գործնականում անձին ազատությունից փաստացի զրկման հստակ ընթացակարգ գոյություն չունի, որի շրջանակներում կապահովվեին ներգործության այդ միջոցի կիրառման իրավաչափության բոլոր երաշխիքները: Դիմողը գտնում է, որ իրավաչափության ապահովման տեսանկյունից հստակ կարգավորումներ են անհրաժեշտ նաև անձին ազատությունից զրկելու վերաբերյալ արձանագրության կազմմանը, դրա բովանդակությանը ներկայացվող պահանջների և այն ազատությունից զրկված անձին հանձնելու հետ կապված:

Դիմողը կարծում է, որ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի դրույթներն այնքանով, որքանով առնչվում են Վարչական իրավախախումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի իրավակարգավորումների առնչությամբ դիմումում արտահայտած իրավական դիրքորոշումներին, նույնպես հակասում են ՀՀ Սահմանադրության 26-րդ, 27-րդ, 75-րդ, 79-րդ և 81-րդ հոդվածներին:

Դիմողի կարծիքով, ծանուցման ենթակա իրավունքների ցանկը և ծանուցման կարգը կառավարության կողմից հաստատվել չի կարող, որովհետև «անձի անձնական ազատության իրավունքը սահմանափակող ընթացակարգերի բովանդակությունը նախևառաջ անձի իրավունքների ամրագրման և դրանց ապահովման առումով, պետք է բացահայտվի օրենքի մակարդակում»:

Դիմողը գտնում է, որ նշված օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասի կարգավորումն այնքանով, որքանով ամրագրում է ոստիկանության պարտականությունն ապահովելու անձի՝ իր գտնվելու վայրի մասին տեղեկացնելու իրավունքը ոստիկանություն բերելու պահից սկսած՝ երեք ժամվա ընթացքում, ուղղակիորեն չի ապահովում Սահմանադրության 27-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

3. Պատասխանողը, վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք իրավական դիրքորոշումներ, **համաձայնում է դիմուղի հետ**, որ Վարչական իրավախախումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված վարչական ձերբակալման, բերման ենթարկելու և իրավախախտին բերելու ինստիտուտները, Մարդու իրավունքների եվրո-

պական կոնվենցիայի 5-րդ հոդվածի իմաստով ազատությունից գրկում են հանդիսանում:

Դատասխանողը, համադրելով առանձին միջազգային իրավական փաստաթղթերում տեղ գտած իրավական երաշխիքները (ՍԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1988թ. դեկտեմբերի 9-ի թիվ 43/173 բանաձև, ԵԽ խորհրդարանական վեհաժողովի թիվ 2122 (2016) բանաձև) Վարչական իրավախախումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված իրավական երաշխիքների հետ, եզրահանգում է, որ վերջիններս ազատությունից գրկած անձանց չեն տրամադրում միջազգային չափանիշները բավարարող անհրաժեշտ բոլոր իրավական երաշխիքները:

Դատասխանողը գտնում է, որ Վարչական իրավախախումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ «Խախտողի բերումը» վերտառությամբ 258-րդ, ինչպես նաև 259-րդ և 267-րդ հոդվածներով հստակ նշված են իրավախախումների բերման, վարչական ձերբակալման և անձին բերման ենթարկելու առանձին իրավական հիմքեր, ինչը հնարավորություն է տալիս անձին ազատությունից գրկելու այս ձևերի համար սահմանել առանձնահատուկ իրավական ռեժիմներ հաշվի առնելով վերջիններիս ՀՀ Սահմանադրության և միջազգային պայմանագրերի շրջանակներում հետապնդվող իրավաչափ նպատակները: Այդ առումով խնդրում առարկա դրույթները համապատասխանում են օրենքին ներկայացվող իրավական որոշակիության՝ օրենքում օգտագործվող ձևակերպումների հստակության, բավարար մատչելիության պահանջներին:

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթների առնչությամբ պատասխանող կողմը համարում է, որ առկա է իրավական որոշակիության խնդիր: Դատասխանողի գնահատմամբ՝ միանշանակ չէ, թե այդ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասով ամրագրված «ոստիկանություն բերելու պահից սկսած՝ երեք ժամվա ընթացքում» պահանջը վերաբերում է ձերբակալված անձանց իրավաբանական օգնություն ստանալու իրավունքից օգտվելու իրական հնարավորություն ընձեռելուն, թե նրանց հարազատներին, իսկ նրանց բացակայության դեպքում՝ աշխատանքի կամ ուսման վայրի վարչակազմին նրանց գտնվելու վայրի մասին տեղյակ պահելուն: Դատասխանողը նշում է, որ թեև օրենքում անձի իրավունքների իրացման ավելի բարձր չափանիշ է կիրառվել, այնուամենայնիվ, այն դեպքերում, երբ անձի հարազատներին տեղյակ պահելը հնարավոր է շատ ավելի կարծ՝ երեք ժամը զգերազանցող ժամկետում, առկա է ոիսկ, որ իրավակիրառողն անհապաղ չի տեղեկացնի ելնելով «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի՝ նշված դրույթի տառացի մեկնաբանությունից, ուստի այս դրույթի ձևակերպումը ևս համարունչ չէ միջազգային չափանիշներին:

Դատասխանողի կարծիքով, ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի պահանջներից բխում է, որ անձի ազատությունը սահմանափակող

ընթացակարգերի բովանդակությունը բացահայտվի օրենքով, իսկ այն դեպքերում, երբ Սահմանադրությունը որոշակի իրավակարգավորում պատվիրակում է օրենսդրին, ապա վերջինիս կողմից այն չի կարող պատվիրակվել պետական որևէ այլ մարմնի: Հետևաբար, կոնկրետ դեպքում, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքով ծանուցման ենթակա իրավունքների ցանկն անհրաժեշտ է սահմանել օրենքով, ոչ թե ՀՀ կառավարության որոշմամբ:

Պատասխանողը հայտնում է նաև, որ ՀՀ արդարադատության նախարարության կողմից արդեն իսկ մշակվել է ՀՀ վարչական իրավախախումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծը, որով սույն գործով սահմանադրախրավական վեճի առարկա իրավակարգավորումների նկատմամբ ինստիտուցիոնալ մոտեցում է դրսուրվել հատուկ առանձնացնելով վարչական հարկադրանքի արդյունքում ազատությունից գրկված անձանց միջազգային չափանիշներին համահունչ իրավունքները և վարչական մարմնի համապատասխան պարտականությունները:

Պատասխանողը եզրահանգում է, որ Վարչական իրավախախումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 258-րդ, 260-րդ, 262-րդ, 266-րդ և 267-րդ հոդվածներով և «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դրույթները՝ կապված ՀՀ Սահմանադրության պահանջներին համապատասխանության հետ, խնդրահարույց են այնքանով, որքանով չեն ապահովում ազատությունից փաստացի գրկված անձանց համար համապատասխան անհրաժեշտ իրավական երաշխիքներ, իսկ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դրույթը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության պահանջներին:

4. ՀՀ սահմանադրական դատարանը նախ արձանագրում է, որ վիճարկվող իրավադրույթների սահմանադրականության մասին կողմերի դիրքորոշումներն ըստ էության համընկնում են և հարկ է համարում վերահստատել ՍԴՈ-1059 որոշմամբ իր արտահայտած իրավական դիրքորոշումն առ այն, որ «եթե դիմող և պատասխանող կողմերը համակարծիք են իրավական ակտի, տվյալ դեպքում օրենքի այս կամ այն դրույթի և Սահմանադրության նորմերի միջև ենթադրյալ հակասության վերաբերյալ, ապա նշված հակասությունն անհրաժեշտ է վերացնել իրավական ակտն ընդունած մարմնի իրավասության շրջանակում, ինչը պարզապես սահմանադրական պահանջ է»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ դիմողի կողմից վիճարկվում են Վարչական իրավախախումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 260-րդ և 262-րդ հոդվածներն ամբողջությամբ, այն դեպքում, եթե ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի նոյեմբերի 23-ի

**ՍԴՈ-1059** որոշմամբ 260-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Վարչական իրավա-իսախոտում կատարելու համար ձերբակալված անձի խնդրանքով նրա գտնվելու վայրի մասին տեղյակ են պահպում հարազատները, աշխա-տանքի կամ ուսման վայրի աղմինխստրացիան» դրույթը, ինչպես նաև 262-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները և դրանց հետ համակարգային առու-մով փոխկապակցված՝ 262-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն գործի վարույթը կարձվում է գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են նույն օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր: Օրենքի 32-րդ հոդ-վածի 3-րդ կետի համաձայն գործի քննությունը մերժվում է, եթե դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա է Սահմանադրական դատա-րանի որոշում:

Հետևաբար, Սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշմամբ Վարչական իրավախսումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 260-րդ և 262-րդ հոդվածների՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված դրույթների մասով գործի վարույթը ենթակա է կարձման:

5. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդ-վածի 7-րդ մասին համապատասխան՝ հաշվի առնելով մարդու և քաղա-քացու Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատու-թյունների ապահովման և պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների թույլատրելիու-թյունը, ինչպես նաև Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը, և ենելով դիմողի փաստարկներից՝ Սահմանադրական դատարանը սույն գործով անհրաժեշտ է համարում պարզել.

ա) վիճարկվող իրավակարգավորումների հիմքերն ու նպատակները,

բ) արդյո ք «խախտողի բերումը», «վարչական ձերբակալումը» և «բերման ենթարկումը» ՀՀ Սահմանադրության և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի իմաստով հանդիսանում են ազատությունից գրկում և ո՞ր պահից,

գ) արդյո ք վիճարկվող իրավակարգավորումների պայմաններում ապահովված են ազատությունից գրկած անձանց համար ՀՀ Սահմանա-դրությամբ և ՀՀ միջազգային պայմանագրերով ամրագրված իրավական երաշխիքները, այդ թվում՝ նման գործողությունների դեմ դատարան դի-մելու նրանց իրավունքը:

6.Վարչական իրավախսումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 258-րդ, 260-րդ հոդվածներով և 267-րդ հոդվածի

2-րդ մասով ամրագրված՝ «խախտողի բերում», «վարչական ձերբակալում», «բերման ենթարկում» միջոցառումները հարկադրանքի միջոցներ են, որոնց համար ամեն դեպքում հիմք է հանդիսանում կատարված կամ հնարավոր վարչական իրավախախտումը: Այդ միջոցների նպատակները տարբեր են:

Օրենսգրքի 258-րդ հոդվածով նախատեսված՝ խախտողի բերումը կիրառելի է իրավախախտում թույլ տված անձի նկատմամբ օրենքով սահմանված գործողության կատարումն ապահովելու վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու, որոշ դեպքերում նաև խախտողի անձը պարզելու և իրավախախտումը կանխելու նպատակով:

Օրենսգրքի 259-րդ հոդվածի համաձայն՝ վարչական ձերբակալումը հարկադրանքի միջոց է, որը թույլատրվում է կիրառել ՀՀ օրենսդրությամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում՝ վարչական իրավախախտումները կանխելու նպատակով, եթե սպառվել են ներգործության մյուս միջոցները, անձը պարզելու, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու նպատակով, եթե տեղում այն կազմելը հնարավոր չէ, և եթե արձանագրություն կազմելը պարտադիր է, գործերի ժամանակին ու ճիշտ քննությունը և վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով որոշումների կատարումն ապահովելու նպատակով:

Օրենսգրքի վերը նշված հոդվածներից հետևում է, որ խախտողին բերելու և ձերբակալման նպատակները հիմնականում համընկնում են:

Նույն օրենսգրքի 267-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ բերման ենթարկելու նպատակն է վարչական պատասխանատվության ենթարկվող անձին իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակից դարձնելը, երբ վերջինիս ներկայությունն օրենսգրքով սահմանված դեպքերում պարտադիր է, և նա խուսափում է ներկայանալուց:

Անկախ նպատակներից, բոլոր այս դեպքերում անձի նկատմամբ հարկադիր գործողություն է իրականացվում, որի արդյունքում նա զրկվում է տվյալ վայրը կամովին լրելու հնարավորությունից: Սույն գործով կողմերը համակարծիք են, որ բոլոր այս դեպքերում անձը փաստացի զրկվում է ազատությունից:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում նույնպես հաստատված է, որ անձին կանգնեցնելու և անձնական զննություն կատարելու՝ ոստիկանության լիազորության իրականացման ընթացքում հարկադրանքի տարրի օգտագործումն անձին ազատությունից զրկելու նշան է, անկախ նրանից, թե որքան է այդ միջոցառումը տևում (Krupko and others v. Russia, 26587/07, 26.06.2014; Foka v. Turkey, 28940/95, 24.06.2008; Brega and others v. Moldova, 61485/08,

24.04.2012 և այլն): Եվրոպական դատարանի նշված գործերից վերջինի դեպքում դիմողներից մեկը (երկրորդ դիմողը) ոստիկանների կողմից պահվել է տրոլեյբուսում և միայն մի քանի կանգառ հետո՝ 8 րոպե անց ազատ է արձակվել: ՄԻԵԴ-ը գտել է, որ չնայած դիմողի ազատությունից զրկումը եղել է շատ կարծ ժամանակով, այնուամենայնիվ, գործի նյութերից երևում է, որ ցույցին նրա մասնակցությանը խոշրնդութեալու ոչ իրավաչափ նպատակով նա զրկված է եղել այդ վայրը լքելու հնարավորությունից և, հետևաբար, խախտվել է նրա անձնական ազատության իրավունքը:

ՀՀ սահմանադրական դատարանն օրենսգրքի վերոհիշյալ հոդվածներով նախատեսված «խախտողի բերում», «վարչական ձերբակալում», «բերման ենթարկում» միջոցառումները համարելով ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասում և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված անձին ազատությունից զրկելու դեպքերի հետ, հաշվի առնելով նաև ՄԻԵԴ-ի վերը նշված իրավական դիրքորոշումը՝ արձանագրում է, որ դրանք անձին ազատությունից զրկող միջոցառումներ են, հետևաբար, դրանցից յուրաքանչյուրի ազդեցությունն անմիջականորեն կրող սուբյեկտների վրա տարածվում են ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային իրավական փաստաթղթերով սահմանված երաշխիքները:

ՀՀ սահմանադրական դատարանը, անդրադառնալով վիճարկվող հոդվածներում ազատությունից զրկելու՝ ձերբակալելու, բերելու, բերման ենթարկելու ստույգ պահի առնչությամբ կոնկրետ դրույթի բացակայության վերաբերյալ դիմողի փաստարկին՝ գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածում երաշխավորված՝ անձնական ազատության իրավունքին միջամտությունն սկսվում է անձնական ազատությունից փաստացի զրկելու պահից, անկախ այն հանգամանքից, թե ինչ եղանակով է տեղի ունենում՝ «խախտողի բերման», «վարչական ձերբակալման» թե «բերման ենթարկելու» միջոցով: Ազատությունից փաստացի զրկելու պահից անձի համար գործում են այդ անձանց համար Սահմանադրությամբ ամրագրված հիմնարար իրավունքները, անկախ նրանից՝ դրանք արտացոլված են վարչական իրավախիտումների վերաբերյալ օրենսդրությունում, թե՝ ոչ՝ որովհետև ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

7. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածում սպառիչ կերպով թվարկվում են այն դեպքերը, որոնց առկայության պարագայում անձն օրենքով սահմանված կարգով կարող է զրկվել անձնական ազատությունից: Ընդ

որում, ազատությունից զրկելը պետք է իրականացվի օրենքով ամրագրված հստակ ընթացակարգով, իսկ օրենքն իր հերթին պետք է բավարարի ՀՀ Սահմանադրության 78-րդ և 79-րդ հոդվածներով նախատեսված հիմնարար իրավունքների սահմանափակման համաշափության և որոշակիության սահմանադրական պահանջները:

Միևնույն ժամանակ, անձնական ազատությունից զրկվելու պահից սկսած Սահմանադրությունն անձի համար երաշխավորում է որոշ հիմնարար իրավունքներ, որոնցից անձն անարգել պետք է հնարավորություն ունենա օգտվելու: Մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է ազատությունից զրկվելու պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում նաև մեղադրանքի մասին:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ազատությունից զրկվելու պատճառների մասին տվյալ անձին «անհապաղ տեղեկացնելը» հանրային իշխանության ուղղակի պարտականությունն է և այդ հարցում հայեցողական մոտեցումն անթույլատրելի է:

Անդրադառնալով ազատությունից զրկված անձի տեղեկացված լինելու իրավունքին՝ ՄԻԵԴ-ը գտնում է, որ Սարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը նշում է այն տարրական երաշխիքը, որ յուրաքանչյուրը պետք է իմանա, թե ինչու է ձերբակալվել կամ կալանավորվել: Անձնական ազատությունից զրկվելու մասին անձին չիրազեկելը ՄԻԵԴ-ը համարում է Սարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածով ամրագրված հիմնարար երաշխիքների ամբողջական ժխտում և այդ իրավունքի առավել կրպիտ խախտում: ՄԻԵԴ-ը միաժամանակ նշել է, որ «Այնպիսի տեղեկությունների վերաբերյալ գրառումների բացակայությունը, ինչպիսիք են. ձերբակալման ամսաթիվը և ժամը, ազատազրկման վայրը, ձերբակալվածի ազգանունը, ինչպես նաև ձերբակալման պատճառների և ձերբակալող անձի ազգանունը, պետք է դիտարկել որպես ձերբակալման օրինականության և Կոնվենցիայի 5-րդ հոդվածի պահանջների հետ անհամատեղելի» (*Anguelova v. Bulgaria, application no. 38361/97, 13/06/2002, § 154*):

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ այդ մասին անհապաղ տեղեկացվի իր ընտրած անձը, որպիսի իրավունքը նույնպես անմիջականորեն գործող իրավունք է:

8. Սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ անկախ այն հանգամանքից, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 266-րդ հոդվածը նախատեսում է, որ Վարչական ձերբա-

կալումը կարող է գանգատարկվել վերադաս մարմնին կամ դատախազին և դրանց հետ մեկտեղ չի նշում դատարանին, չի նշանակում, որ այդ դրույթը բացառում է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով կանոնակարգված՝ անձի դատական պաշտպանության իրավունքը:

**Նախ՝** ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք, որը Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով անմիջականորեն գործող իրավունք է:

**Երկրորդ՝** ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված է, որ անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը, որի վերաբերյալ դատարանը սեղմ ժամկետում որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է:

**Երրորդ՝** նույնաբովանդակ նորմ է ամրագրված նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասում, իսկ նույն հոդվածի 5-րդ մասում սահմանված է, որ յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն այդ հոդվածի, ձերքակալման կամ կալանավորման զոհ է դարձել՝ հայցի ուժով օժտված փոխառուցման իրավունք ունի, ինչը ենթադրում է, որ անձին ազատությունից զրկելու իրավաչափությունը դատական կարգով վիճարկելու իրավունքը ներառում է ինչպես ազատությունից զրկված լինելու ժամանակահատվածում, այնպես էլ ազատությունից զրկված լինելու հանգամանքը դադարելուց հետո դրա իրավաչափությունը դատական կարգով վիճարկելու իրավունքները:

**Չորրորդ՝** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե՝ խոշրնդուներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար կամ չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վերը նշված հոդվածն անձին հստակ հնարավորություն է տալիս ազատությունից զրկելը՝ որպես պետական մարմնի գործողություն, վիճարկելու վարչական դատարանում։ ՀՀ կառավարությունը սույն գործով Սահմանադրական դատարանին ներկայացրած դիրքորոշումներում հայտնել է, որ վարչական ձերբակալման դատական կարգով բողոքարկման առնչությամբ ձևավորվել է կայուն դատական պրակտիկա և վկայակոչել է ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/9046/05/13, ՎԴ/8117/05/13, ՎԴ/2710/05/14 և ՎԴ 1702/05/14 գործերով կայացված վճիռները։

Այլ է խնդիրը, թե ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի կարգավորումները որքանով են հաշվի առնում ազատությունից զրկելու։ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում ամրագրված բոլոր միջոցառումները, դրանց առանձնահատկությունները, տևողությունը և այլն։ Վերջինս դուրս է սույն գործով բարձրացված սահմանադրահավական վեճի շրջանակներից։

9. ՀՀ սահմանադրական դատարանն անդրադառնալով «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի սահմանադրականության հարցին՝ արձանագրում է, որ վիճարկվող դրույթի ուժով ՀՀ կառավարության որոշմամբ ոչ թե սահմանափակվում է մարդու հիմնական իրավունքը կամ ազատությունը, այլ հաստատվում է ծանուցման ենթակա իրավունքների ցանկը և ծանուցման կարգը։ Նշված դրույթն ունի այնպիսի սահմանադրահավական բովանդակություն, համաձայն որի՝ ծանուցման ենթակա իրավունքների ցանկը ներառում է առնվազն ՀՀ Սահմանադրությամբ և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում, մասնավորապես, վարչական կարգով ազատությունից զրկվող անձանց համար նախատեսված բոլոր իրավունքները, ներառյալ իրավաբանական օգնություն ստանալու և բժշկական զննության ենթարկվելու իրավունքը։

Սահմանադրական դատարանը վիճամանակ արձանագրում է, որ օրենքի վերոհիշյալ հոդվածի համաձայն՝ ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 14-ի N 818-Ն որոշմամբ հաստատված ցանկն ընդգրկում է ազատությունից զրկված անձի համար ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված բոլոր իրավունքները, ներառյալ՝ սահմանափակման պահից իմանալու ոչ միայն իր ազատության սահմանափակման պատճառները, հիմքերը, այլև իր ազատությունը սահմանափակող ոստիկանության ծառայողի պաշտոնը, կոչումը, ազգանունը, բացատրություններ տալու փաստաբանի ներկայությամբ կամ իրաժարվելու բացատրություններ տալուց, ծանոթանալու իր իրավունքների ու ազատությունների սահմանափակմանն անմիջականորեն առնչվող փաստաթղթերին կամ նյութերին, անհրաժեշտության դեպքում ստանալու բժշկական օգնու-

թյուն, պահանջելու օրենքով նախատեսված միջոցներ ձեռնարկել իր ազատության սահմանափակման կապակցությամբ իր կամ ընտանիքի անդամների կյանքին, առողջությանը, գույքին սպառնացող վտանգը վերացնելու, ինչպես նաև իր տիրապետման տակ գտնվող՝ առանց հսկողության մնացած գույքը պահպանելու նպատակով, ինչպես նաև ծանոթանալու իր ազատության սահմանափակման օրինականությունը և հիմնավորվածությունը բողոքարկելու կարգին, ինչպես նաև ծանոթանալու իր ազատության սահմանափակման գործողություններն ու որոշումները բողոքարկելու վերադասության կարգով՝ կամ դատախազին, կամ դատարան:

Կառավարության նույն որոշմամբ սահմանված կարգի համաձայն՝ ցանկով նախատեսված իրավունքների մասին գրավոր ծանուցումը ուստիկանության ծառայողին չի ազատում օրենքով նախատեսված այլ իրավունքների մասին մարդուն ծանուցելու պարտականությունից:

Դիմողի այն փաստարկը, որ գործնականում չեն ապահովվում անգամ Կառավարության նշանակած որոշման պահանջները, ոչ թե տվյալ դրույթի սահմանադրականության, այլ համապատասխան իրավակիրառողի վարքագծի գնահատման և պատասխանատվության հարց է առաջացնում, որը Սահմանադրական դատարանի քննության առարկա չի հանդիսանում:

10. «Ուստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասի առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 27-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ազատությունից գրկված անձի ընտրած անձին այդ մասին անհապաղ տեղեկացնելու իրավունքի իրականացումը հետաձգվել կարող է միայն օրենքով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետով՝ հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակով:

Սահմանադրությունը չի բացառել այն, որ անհապաղ տեղեկացումը կարող է հանգեցնել նաև այլ անձանց կողմից համապատասխան տեղեկատվություն ստանալուն, ինչը կարող է դժվարացնել հանցագործությունների կանխումը կամ բացահայտումը: Հնարավոր հանցագործությունները կարող են առնչվել պետական անվտանգությանը, հասարակական կարգին, այլոց հիմնական իրավունքներին և ազատություններին, որոնց պաշտպանությունը ևս պետության խնդիրն է: Միաժամանակ, հաշվի առնելով ազատությունից գրկելու հարկադիր միջոցառման բնույթը, չի կարող բացառվել այդպիսի միջոցառման իրականացմանը խոշրնդուռ հանգամանքների գոյությունը, որոնք օբյեկտիվորեն դժվարացնում են անձի իրավունքների իրացմանն ուղղված պարտականությունների **անհապաղ** կատարումը: Այլ խնդիր է, որ «Ուստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասը չի վերաբերում միայն ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված տվյալ նպատակին,

այլ վերաբերում է անձնական ազատությունից գրկելու բոլոր դեպքերին, այդ թվում՝ Վարչական իրավախախոռումներին, ինչն անհամատեղելի է ՀՀ Սահմանադրության պահանջների հետ:

11. ՀՀ Սահմանադրական դատարանը Վարչական իրավախախոռումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի առնչությամբ իր ՍԴՈ-1048, ՍԴՈ-1059 որոշումներում արձանագրել է, որ վերոհիշյալ օրենսգրքում առկա են բազմաթիվ հոդվածներ, որոնք շարունակում են հղում կատարել ԽՍՀՄ օրենսդրությանը, օգտագործել «ԽՍՀՄ տարածք», «պատգամավորների տեղական խորհուրդներ», «սոցիալստավական սեփականություն», «սոցիալստավական օրինականություն», «ներքին գործերի մարմիններ» եզրույթները, սահմանել Վարչական իրավախախոռումների մասին օրենսդրության բնագավառում ԽՍՀՄ իրավասությանը ենթակա հարցերը և այլն, ինչն առաջացնում է իրավական պետությանն անհարիր իրավական վտանգ: Ընդ որում, Սահմանադրության ընդունումից հետո օրենսգրքի մի շարք հոդվածներում նախկինում կատարված փոփոխությունների արդյունքում «ԽՍՀՄ» հապավումը փոխարինվել է «ՀՀ» հապավումով, իսկ մի շարք այլ հոդվածներում, այդ թվում օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող 262-րդ և 267-րդ հոդվածներում, որոնցից առաջինում ՀՀ Ազգային ժողովի կողմից վերջին փոփոխությունը կատարվել է 2004 թվականի դեկտեմբերի 24-ին, իսկ վերջինում՝ 2012 թվականի փետրվարի 7-ին, անգամ «ԽՍՀՄ» հապավումը դեռևս շարունակում է պահպանվել:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Մկրտչյանն ընդդեմ Հայաստանի գործով (գործ N 6562/03) 2007 թվականի հունվարի 11-ին կայացրած վճռում ընդունելով, որ անցումային շրջանում գտնվող պետությանն անհրաժեշտ է որոշակի ժամանակ օրենսդրական համակարգի ստեղծման համար, այնուհանդերձ, մարդու հիմնարար իրավունքներին առնչվող օրենքի ընդունման համար «մոտ տասներեք տարվա ձգձգումը» ողջամիտ չի համարել (§ 43):

Վերը նշված հիմնախնդրի առնչությամբ ՀՀ Սահմանադրական դատարանը դեռևս 2012 թվականին ՍԴՈ-1048, ՍԴՈ-1059 որոշումներում նշել է Վարչական իրավախախոռումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքի ընդունման, առկա իրավակարգավորման շրջանակների հստակեցման անհրաժեշտությունը՝ ելնելով միջազգային ժամանակակից փորձի ուսումնասիրման արդյունքներից, և խորհրդային իրավակարգավորումների հատվածական փոփոխությունների ոչ նպատակահարմարությունը:

ՀՀ Սահմանադրական դատարանն ի գիտություն է ընդունում, որ ներկայումս մշակվել և ՀՀ արդարադատության նախարարության կողմից հանրային քննարկման է դրվել Վարչական իրավախախոռումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքի նախագիծը: Սակայն դատարանը միաժամանակ

նշում է, որ 2012 թվականի նոյեմբերի 23-ի ՍԴՈ-1059 որոշմանն առնչվող գործի քննության ժամանակ պարզվել է, որ ՀՀ վարչապետի 19.10.2010թ. 01/10.1 գրությամբ Ազգային ժողովին տեղեկացվել է, որ ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարությունում քննարկվում է օրենսգրքի նոր նախագիծը: 2010թ. նոյեմբերին նման նախագիծ ներկայացվել է Ազգային ժողով, սակայն 2011թ. փետրվարին այն հետ է կանչվել: Այդպիսի իրավիճակը համարելով Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի անվտանգությանն սպառնալիք՝ ՀՀ սահմանադրական դատարանն անհետաձգելի անհրաժեշտություն է համարել Վարչական իրավախախումների վերաբերյալ նոր օրենսգրքի ընդունումը:

ՀՀ կառավարության և ՀՀ Ազգային ժողովի կողմից ՀՀ սահմանադրական դատարանի նշված որոշման կատարումը չապահովվելու հետևանքով ոչ միայն առաջացել է որոշակի օրենսդրական բաց, այլև անձի ազատության իրավունքի ապահովման բնագավառում ձևավորվել է ոչ իրավաչափ իրավակիրաց պրակտիկա՝ հնարավոր դարձնելով անզամ Սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված իրավադրույթի՝ ոստիկանության կողմից շարունակական կիրառումը, ինչն իր հերթին երկրում սահմանադրական օրինականությանն ուղղված լուրջ սպառնալիք է:

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վերահաստատել ՍԴՈ-1059 որոշման 6-րդ կետի այն պահանջը, որ երկրում սահմանադրական օրինականության հաստատման տեսանկյունից անհետաձգելի անհրաժեշտություն է Վարչական իրավախախումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքի ընդունումը: Իսկ մինչ այդ դատական պրակտիկան պետք է հնարավորինս առաջնորդվի ՀՀ Սահմանադրության 3-րդ և 27-րդ հոդվածների այն դրույթների պահանջներով, որոնց համաձայն՝ «Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու իշխանական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք» և «Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է ազատությունից զրկվելու պատճառների ...մասին», «Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ այդ մասին անհապաղ տեղեկացվի իր ընտրած անձը: Այս իրավունքի իրականացումը կարող է հետաձգվել միայն օրենքով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետով՝ հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակով»:

Ելնելով գործի քննության արդյունքներից և դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխու-

թյուններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով, 60-րդ հոդվածի 1-ին կետով, 63, 64 և 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ռ Ո Շ Ե Ց 8.**

1. «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 258-րդ, 260-րդ, 262-րդ, 266-րդ և 267-րդ հոդվածների, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 260-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Վարչական իրավախախտում կատարելու համար ձերբակալված անձի խնդրանքով նրա գտնվելու վայրի մասին տեղյակ են պահպում հարազատները, աշխատանքի կամ ուսման վայրի արմինհստրացիան» դրույթի մասով և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի դրույթների մասով կարձել, քանի որ դրանց առնչությամբ առկա են ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներ, միաժամանակ շեշտելով, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1048, ՍԴՈ-1059 որոշումների ոչ պատշաճ կատարումը երկրում սահմանադրական օրինականության հաստատման լուրջ սպառնալիք է դարձել:

2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 260-րդ և 262-րդ հոդվածների մյուս դրույթները, ինչպես նաև 258-րդ և 267-րդ հոդվածները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանն այնպիսի սահմանադրախավական բովանդակությամբ, համաձայն որի՝ «խախտողի բերում», «վարչական ձերբակալում», «բերման ենթարկում» միջոցառումների դեպքում անձնական ազատությունից փաստացի գրկելու պահից սկսած ազատությունից գրկված անձի համար ապահովում են ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով և 64-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավունքները որպես անմիջականորեն գործող իրավունքներ:

3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 266-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը սահմանադրախավական այնպիսի բովանդակությամբ, համաձայն որի՝ այդ հոդվածով դատարանին չվկայակոչելը չի կարող մեկնաբանվել և կիրառվել այնպես, որ խոչընդոտի վարչական ձերբակալման իրավաչափությունը դատարանում վիճարկելու՝ անձի իրավունքի իրացմանը:

4. «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի

դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը սահմանադրաբարավական այնպիսի բովանդակությամբ, համաձայն որի ծանուցման ենթակա իրավունքների ցանկում միշտ պետք է ներառված լինեն առնվազն ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով և 64-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավունքները:


5. «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասը՝ այն մասով, որով չեն ապահովվում ազատությունից փաստացի զրկված անձանց համար այդ իսկ պահից իրավունքների պաշտպանության՝ սահմանադրորեն նախատեսված շրջանակներում, անհրաժեշտ իրավական երաշխիքներ, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի պահանջներին հակասող և անվավեր:

6. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

## ՆԱԽԱԳԱՀՈՂ

## Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

24 հունվարի 2017 թվականի  
ՄԴԱ-1339



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱՆԱԲԴԱ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ, ՎԼԱԴԻՄԻՐ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ, ԱՐՄԵՆ  
ԱՂԱՋԱՆՅԱՆԻ ԵՎ ԱՐՄԻՆԵ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ  
ՎՐԱ՝ «ՄԱԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 54-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ  
ՄԱՍԻ «Ա» ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ՝

Քաղ. Երևան

31 հունվարի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝  
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլում-  
յանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհան-  
նիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,  
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝  
դիմողների ներկայացուցիչներ Ա. Ղազարյանի, Ա. Զեյնալյանի,  
գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի  
պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատա-  
կազմի իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի և նույն վար-  
չության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ.  
Դանիելյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություն-  
ներով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի,  
«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ  
հոդվածների,

դրույթ նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Անահիտ Աղաջան-  
յանի, Վլադիմիր Աղաջանյանի, Արմեն Աղաջանյանի և Արմինե Աղաջան-

յանի դիմումի հիման վրա՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Անահիտ Աղաջանյանի, Վլադիմիր Աղաջանյանի, Արմեն Աղաջանյանի և Արմին Աղաջանյանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 8-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացարությունները, ինչպես նաև ուսումնասիրելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ռ Զ Ե Ց**.

1. «Սնանկության մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2006 թվականի դեկտեմբերի 25-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի հունվարի 22-ին և ուժի մեջ է մտել 2007 թվականի փետրվարի 10-ից:

Օրենքի՝ «Երրորդ անձանց կատարված փոխանցումները և գույքի օտարումը» վերտառությամբ 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը սահմանում է

«1. Կառավարիչը կարող է պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, դիմել և դատական կարգով հետ ստանալ

ա) պարտապանի կատարած անհատույց փոխանցումները (այդ թվում՝ ոչ դրամային) պարտապանի հետ փոխկապակցված անձանց, որոնք կատարվել են պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող հինգ տարվա ընթացքում»:

Օրենքի 54-րդ հոդվածը լրացվել է 23.06.11թ. ՀՕ-235-Ն և խմբագրվել՝ 17.06.16թ. ՀՕ-105-Ն ՀՀ օրենքներով, լրացվել է 27.10.16թ. ՀՕ-192-Ն ՀՀ օրենքով:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. 15.03.2013թ. սնանկության գործով կառավարիչը դիմել է Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ հետ ստանալու Անահիտ Աղաջանյանի և Վլադիմիր Աղաջանյանի կողմից նվիրատվությամբ իրենց որդուն՝ Արմեն Աղաջանյանին փոխանցված գույքերը: Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը թիվ ԵԱՆԴ/0497/02/13 քաղաքացիական գործով 2014թ. մայիսի 8-ին կայացրած վճռով հայցապահանջը բավարարել է անվավեր ճանաչելով Անահիտ Աղաջան-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

յանի և Արմեն Աղաջանյանի միջև 06.12.2011թ. կնքված՝ անշարժ գույքի նվիրատվության երկու պայմանագրերը՝ համապատասխան գույքերը վերադարձնելով Անահիտ Երվանդի Աղաջանյանին և դրանց նկատմամբ ճանաչելով նրա սեփականության իրավունքը, ինչպես նաև Վլադիմիր Աղաջանյանի և Արմեն Աղաջանյանի միջև 07.12.2011թ. կնքված՝ անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը՝ համապատասխան գույքը վերադարձնելով Վլադիմիր Աղաջանյանին և դրա նկատմամբ ճանաչելով նրա սեփականության իրավունքը:

Վերաբննիշ դատարանը տվյալ քաղաքացիական գործով 2015թ. հոկտեմբերի 15-ին կայացրած որոշմամբ մերժել է դիմողների վերաբննիշ բողոքը և Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2014թ. մայիսի 8-ի վճիռը թողել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԱՆԴ/0497/02/13 քաղաքացիական գործով 2016թ. փետրվարի 24-ին կայացրած որոշմամբ մերժել է դիմողների վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը:

3. Դիմողները գտնում են, որ օրենքի վիճարկվող դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերին, 78, 79 և 81-րդ հոդվածներին:

Դիմողները վկայակոչում են, մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-903, ՍԴՈ-943, ՍԴՈ-1009, ՍԴՈ-1073, ՍԴՈ-1153, ՍԴՈ-1282, ՍԴՈ-1293 որոշումներում սեփականության իրավունքի վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումները և եզրահանգում, որ սահմանադրաբարավական վեճի առարկա հանդիսացող դրույթը միաժամանակ միջամտում և սահմանափակում է դիմողների՝ որպես նվիրատուի և որպես նվիրառուի սեփականության իրավունքը: Այն, ըստ էության, ենթադրում է նվիրատուների սեփականության իրավունքի անհամաշափ սահմանափակում, քանի որ անձի՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքը տնօրինելու իրավունքը նա իրացնում է մինչև իրեն այդ սեփականության իրավունքից գրկող համապատասխան դատական ակտի ուժի մեջ մտնելը: Մինչ այդ սեփականատերն իր հայեցողությամբ որոշում է իրեն պատկանող գույքի ճակատագիրը: Մինչդեռ վիճարկվող դրույթը Սահմանադրությամբ չնախատեսված հիմքով միջամտում է անձի սեփականության իրավունքի իրականացմանը, քանի որ այն անձի սեփականությունը հանդիսացած գույքի կապակցությամբ կնքված անհատույց պայմանագրերն անվավեր ճանաչելու հիմք է հանդիսանում: Այս պայմանագրերի կնքումը, սակայն, անձի՝ իր սեփականությունից անարգել օգտվելու իրավունքի, մասնավորապես՝ այդ սեփականությունը տնօրինելու իրավունքի բաղկացուցիչ մասն է կազմում:

Վերլուծելով ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1009, ինչպես

նաև դրանում վկայակոչված ՍԴՈ-630 որոշումները՝ դիմողները գտնում են, որ սեփականության իրավունքի սահմանափակման երկու դեպք է հնարավոր՝ սեփականությունից զրկում և սեփականության հարկադիր օտարում, իսկ վիճարկվող դրույթում նախատեսված կարգավորումն այլ դեպք է, միջամտում է սեփականատիրոջ հայեցողությանը:

Հստ դիմողների՝ վիճարկվող դրույթը միաժամանակ ոչ իրավաչափորեն սահմանափակում է նվիրառուների՝ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքը: Նվիրառուն անհամաչափորեն զրկվում է, ոչ կեղծ պայմանագրի հիման վրա, օրինական ձանապարհով իրեն փոխանցված սեփականությունից: Ուստի անհատույց գործարքի անվավեր ձանաշումը, ըստ դիմողների, ՀՀ Սահմանադրությամբ չնախատեսված և չարդարացված միջամտություն է նվիրառուների սեփականության իրավունքին:

Ամփոփելով իրենց վերլուծությունը՝ դիմողները խնդրում են ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին, 78, 79 և 81-րդ հոդվածներին հակասող և անվավեր ձանաշել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով ամրագրված դրույթը կամ բացահայտել դրա սահմանադրափակական բովանդակությունը՝ սահմանելով կայացված դատական ակտերը նոր հանգամանք ի հայտ գալու հիմքով վերանայելու հնարավորություն:

4. Պատասխանող կողմն առարկելով դիմողների փաստարկներին՝ կարծում է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով սահմանված դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության պահանջներին: Իր դիրքորոշումը հիմնավորելու համար պատասխանողն օրենքի վիճարկվող դրույթը դիտարկում է երկու՝ սեփականության իրավունքի անձեռնմխելիության և իրավական որոշակիության տեսանկյուններից:

Օրենքի վիճարկվող դրույթը դիտարկելով սեփականության իրավունքի անձեռնմխելիության տեսանկյունից և վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 10-րդ և 60-րդ հոդվածները, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 1-ին Արձանագրության 1-ին հոդվածը՝ պատասխանող գտնում է, որ սեփականության իրավունքը բացարձակ չէ, այն ենթակա է իրավաչափ սահմանափակումների, որոնց հիմքերը նախատեսված են և՝ Սահմանադրությամբ, և՝ Եվրոպական կոնվենցիայով: Սանավորապես, Եվրոպական կոնվենցիայով նախատեսված սեփականության իրավունքի սահմանափակումները պետք է միաժամանակ բավարարեն հետևյալ չափանիշները նախատեսված լինեն օրենքով, բնակչության շահից և անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակությունում: Հստ պատասխանողի՝ ՀՀ Սահմանադրությամբ սահմանվել են այս չափանիշներին համապատասխան

սեփականության իրավունքի սահմանափակման հիմքեր:

Վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի 2008թ. մարտի 18-ի ՍԴՈ-741 որոշման 6-րդ կետում ամրագրված իրավական դիրքորոշումը՝ պատասխանողը գտնում է, որ նշված իրավական դիրքորոշմանը և ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան օրենսդիրը սահմանել է օրենքի սահմանադրախրավական վեճի առարկա դրույթը, որը նպատակ է հետապնդում քաղաքացիական հարաբերությունների բոլոր սուբյեկտների սեփականության իրավունքի և օրինական շահերի համակողմանի պաշտպանության: Բոլոր դեպքերում իր գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ պետության միջամտությունը ենթադրում է արդարացի հավասարակշռություն քաղաքացիական շրջանառության բոլոր մասնակիցների հիմնարար իրավունքների միջև: Նետսաբար, ըստ պատասխանողի, օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի դրույթով օրենսդիրը նպատակ է հետապնդել կանխել պարտապանների նկատմամբ պարտավորության կատարումից չարամտորեն խուսափելը պաշտպանելով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված «այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը», կոնկրետ դեպքում պարտապանների սեփականության իրավունքը:

Անդրադառնալով դիմողների կողմից ՀՀ սահմանադրական դատարանի 2006 թվականի ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման վկայակոչմանը՝ պատասխանողը գտնում է, որ ի տարբերություն 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեով ընդունված ՀՀ Սահմանադրության սեփականության իրավունքի բովանդակությունը և սահմանափակումների շրջանակը սահմանող 31-րդ հոդվածի տեքստի՝ ՀՀ գործող Սահմանադրությամբ նախկին 31-րդ հոդվածին համապատասխանող 60-րդ հոդվածում ավելացվել է 3-րդ մաս, որը սահմանում է սեփականության իրավունքի սահմանափակման հնարավորություն օրենքով հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Սահմանադրությամբ 31-րդ հոդվածի և դրան համապատասխանող գործող Սահմանադրության 60-րդ հոդվածի վերոգրյալ տարբերությունը, ըստ պատասխանողի, ոչ միայն նորմատիվ է, այլև բովանդակային, քանզի այն ընդլայնում է սեփականության իրավունքի սահմանափակման շրջանակները:

Օրենքի վիճարկող դրույթը դիտարկելով իրավական որոշակիության տեսանկյունից և վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի համապատասխան իրավական դիրքորոշումները՝ պատասխանողը գտնում է, որ այս առումով ինդրո առարկա դրույթը ևս ամբողջությամբ համապատասխանում է իրավական օրենքին ներկայացվող իրավական որոշակիության,

օրենքում օգտագործվող ձևակերպումների հատակության, բավա- րար մատչելիության, համապատասխան սուբյեկտների կողմից իրենց վարքագիծն օրենքի կարգադրագրերի պահանջներին համապատաս- խանեցնելու գործնական, ռեալ հնարավորության և օրենքի պահանջ- ներին չհետևելու դեպքում հնարավոր բացասական իրավական հետևանքների առաջացման կանխատեսելիության պահանջներին:

5. Հաշվի առնելով դիմող և պատասխանող կողմերի փաստարկները՝ սույն գործի քննության շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ «Նանկության մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթին՝ սեփականության իրավունքի սահմանա- փակման հիմնավորվածության տեսանկյունից, մասնավորապես բացա- հայտելով.

- արդյո ք պարտապանի՝ իրեն փոխկապակցված անձանց կատարած փոխանցումները սնանկության գործով կառավարչի կողմից հետ ստանա- լու՝ օրենքով սահմանված հնարավորությունը միջամտություն է սեփա- կանության իրավունքին,

- եթե առկա է սեփականության իրավունքին միջամտություն, արդյո ք այն հիմնավորված է ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածում ամրա- գրված որևէ նպատակով,

- եթե առկա է սեփականության իրավունքին միջամտություն, արդյո ք այն չի խախտում հիմնական իրավունքների սահմանափակման համա- շափության (հոդված 78) և որոշակիության (հոդված 79) սահմանա- դրական սկզբունքները, ինչպես նաև հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս Հայաստանի Հանրապետության վավերաց- րած մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան հաշվի առնելու սահմանա- դրական պահանջը (հոդված 81):

6. ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համա- ձայն՝ Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփակա- նությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրի- նելու իրավունք: Ժառանգելու իրավունքը երաշխավորվում է:

Սահմանադրական դատարանի գնահատմամբ ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում ամրագրված դրույթները կազմում են սեփականության իրավունքի հիմնական բովանդակությունը՝ ամրա- գրելով այն իրավագործությունները, որոնցից յուրաքանչյուր ոք անարգել պետք է կարողանա օգտվել սեփականության հիմնական իրավունքն իրա- կանացնելիս, այսինքն՝ անձը պետք է առանց որևէ խոչընդոտի կարողանա իրականացնել սեփականությունն իր հայեցողությամբ տիրա- պետելու իրավունքը, օգտագործելու իրավունքը, տնօրինելու իրավունքը,

ինչպես նաև ժառանգելու իրավունքը: Միևնույն ժամանակ, սահմանադիրը նշված իրավունքների իրականացումը երաշխավորելու՝ պետության պողիտիվ պարտականության կատարումը պայմանավորում է բացառապես օրինական հիմքերով ձեռք բերված սեփականությամբ: Հետևաբար, միայն օրինական հիմքով ձեռք բերված սեփականության դեպքում անձը հանրային իշխանություններից կարող է պահանջել սեփականության հիմնական իրավունքի մաս կազմող՝ վերը նշված իրավունքների իրականացման երաշխավորում:

Միաժամանակ, սահմանադիրը որոշակի դեպքերում և նպատակներով պայմանավորված՝ հնարավոր է համարում միջամտություն սեփականության իրավունքին նաև այն դեպքում, եթե նույնիսկ սեփականությունը ձեռք է բերվել օրինական հիմքով: Մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է սեփականության իրավունքի սահմանափակման հնարավորություն, ըստ որի՝

- սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով, որից բխում է, որ օրենքը պետք է բավարարի իրավական օրենքին ներկայացվող՝ Սահմանադրական դատարանի որոշումներում բազմիցս արտացոլված, պահանջները,

- սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով,

- սեփականության իրավունքի սահմանափակումը պետք է համապատասխանի որոշակիության և համաչափության սահմանադրական սկզբունքներին և չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ նշված պայմանների առկայությունն անհրաժեշտ է իրավունքն իրավաշափորեն սահմանափակելու համար:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:»

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոշնդրությում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապա-

հովելու համար»:

ՄԻԵԴ-ն իր բազմաթիվ վճիռներում անդրադարձել է սեփականության իրավունքին՝ արձանագրելով, որ թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը, հոշակելով սեփականության իրավունքը, միաժամանակ նախատեսում է սեփականության իրավունքի սահմանափակման հնարավորություն ի շահ հանրության, եթե այդ սահմանափակումը նախատեսված է օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով, և ընդհանուր շահերին համապատասխան սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար։ Միևնույն ժամանակ, ՄԻԵԴ-ը նշել է, որ ինչ հիմքով էլ տեղի ունենա միջամտությունը սեփականության իրավունքին, դա կարող է արդարացված համարվել բացառապես այն դեպքում, եթե այն տեղի է ունեցել ի շահ հանրության։ Միջամտությունն արդարացված համարվելու համար պետք է հետապնդի օրինաչափ նպատակ և լինի համաշափ։ Եվրոպական դատարանը որոշում է՝ **արդյոք արդար հալվասարակշռություն է ապահովվել հասարակության ընդհանուր շահերի և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև (Beyeler v. Italy, judgment 5 January 2000, §98, §107; Sporrong and Lonnroth v. Sweden, judgment of 23 September 1982, §61, §69):**

7. Օրենքի վիճարկվող դրույթի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կառավարչի դիտարկվող լիազորության իրականացման համար անհրաժեշտ է որոշակի պայմանների միաժամանակյա առկայություն, մասնավորապես՝

- պարտապանի կատարած անհատույց փոխանցումները հետ ստանալը կարող է տեղի ունենալ բացառապես դատական կարգով,

- պարտապանի կատարած անհատույց փոխանցումները հետ ստանալու հնարավորությունն ըստ էության կրում է **հայեցողական բնույթ**, քանի որ օրենսդիրն ամրագրել է «կարող է» եզրույթը,

- պարտապանի կատարած անհատույց փոխանցումները հետ ստանալու համար դատարան դիմելը կարող է տեղի ունենալ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում,

- պարտապանի կատարած փոխանցումները պետք է լինեն **անհատույց**,

- հետ ստանալու համար պարտապանի կատարած փոխանցումները պետք է պարտապանի հետ փոխկապակցված անձանց կատարված լինեն,

- փոխանցումները պետք է կատարված լինեն պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող հինգ տարվա ընթացքում։

Վիճարկվող դրույթի տառացի մեկնաբանության պարագայում այս

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

պայմանների առկայությունը բավարար է, որպեսզի կառավարիչն օգտվի վիճարկող դրույթով տրված հնարավորությունից: Օրենսդրի կողմից սահմանված պայմանները հստակ են, հնարավորություն են տալիս ցանկացած անձի հստակ ընկալել, թե ինչ պայմաններ է սահմանել օրենսդիրը, և դրանց համապատասխանեցնել իր վարքագիծը, ինչի պատճառով վիճարկող դրույթն իրավական որոշակիության սկզբունքի չափանիշների տեսանկյունից որևէ խնդիր չի առաջացնում:

8. ՀՀ Ազգային ժողովը սույն գործով ներկայացրած քացատրության մեջ նշել է, որ. «... օրենսդիրը 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի դրույթով նպատակ է հետապնդել կանխել պարտապանների նկատմամբ պարտավորության կատարումից չարամտորեն խուսափելը պաշտպանելով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված «այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը», կոնկրետ դեպքում՝ պարտապանների սեփականության իրավունքը»:

Վիճարկող դրույթի վերաբերյալ նույնական դիրքորոշում է ձևավորել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը թիվ ԵԿԴ/2304/02/10 քաղաքացիական գործով 2012 թվականի մարտի 23-ին կայացրած որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Հիմք ընդունելով վերոգրյալը՝ վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը նախատեսում է սնանկության վերաբերյալ գործով կառավարչի դատարան դիմելու իրավունքը՝ պարտապանի կողմից իրեն փոխկապակցված անձանց կատարված փոխանցումները հետ ստանալու պահանջով, որի նպատակը պարտապանի գույքի հավաքագրումն է՝ սնանկության վարույթի ընթացքում պարտատերերի պահանջների բավարարման նպատակով: Այսինքն՝ նշված նորմը սահմանում է սեփականության իրավունքի դադարման ինքնուրույն հիմքը»:

Հետագայում ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը թիվ ԵՔԴ/1165/02/08 քաղաքացիական գործով 2012 թվականի հոկտեմբերի 19-ին կայացրած որոշմամբ լրացրել է իր՝ վերը նշված իրավական դիրքորոշումը՝ ամրագրելով հետևյալը. «Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել նաև, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից հետևում է, որ այն նախատեսում է սնանկության վերաբերյալ գործով կառավարչի դատարան դիմելու իրավունքը՝ պարտապանի կողմից իրեն փոխկապակցված անձանց կատարված փոխանցումները հետ ստանալու պահանջով: Վերոնշյալ հոդվածով առանձնացվել են այնպիսի փոխանցումների տեսակներ, որոնք ակնհայտորեն վկայում են պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու պարտապանի

մտադրության մասին»:

Վերոգրյալի կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, ըստ հության, ՀՀ Ազգային ժողովը և ՀՀ վճռաբեկ դատարանը որպես վիճարկվող նորմի նպատակ են դիտարկում պարտատերերի նկատմամբ պարտավորության կատարումից չարամտորեն խուսափելը կանխելը, որով պետությունը թույլ չի տալիս խախտել պարտատերերի իրավունքը՝ դրանով իսկ պաշտպանելով այլոց՝ պարտատերերի հիմնական իրավունքները: Սահմանադրական դատարանի գնահատմամբ նման նպատակը համահունչ է ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված նպատակներին:

Նշված նպատակին հասնելու համար, և' ըստ ՀՀ Ազգային ժողովի բացատրության, և' ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշման, որպես միջոց է դիտարկվում վիճարկվող դրույթում նկարագրված փոխանցումները հետ ստանալը, քանի որ դրանք փոխանցումներ են կամ փոխանցումների տեսակներ են, որոնք վկայում են կամ ակնհայտորեն վկայում են պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու պարտապանի մտադրության մասին:

Սույն գործով Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանն իր վճռում, ինչպես նաև ՀՀ վերաբննիշ քաղաքացիական դատարանն իր որոշման մեջ չեն անդրադարձել այն հարցին, թե արդյոք պարտապանների իրականացրած փոխանցումների նպատակը պարտատերերի նկատմամբ պարտավորության կատարումից չարամտորեն խուսափելն է եղել, և արդյոք այդ փոխանցումներն ակնհայտորեն վկայում են պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու՝ պարտապանի մտադրության մասին:

Օրենքի վիճարկվող դրույթով սահմանված պայմաններին համապատասխանող փոխանցումներն ինքնին չեն կարող վկայել պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու՝ պարտապանի մտադրության մասին: Նման դիրքորոշման համար հիմք են հանդիսանում այն հանգամանքները, որ, նախ՝ նման մտադրության առկայությունը կամ բացակայությունը գնահատման ենթակա հանգամանքներ են, որոնք կարող են հաստատել դատարանի կողմից գործի կոնկրետ հանգամանքների բազմակողմանի ուսումնասիրման և գնահատման արդյունքում, երկրորդ՝ նշված պայմաններին համապատասխանող ոչ բոլոր փոխանցումները կարող են վկայել պարտապանի ոչ իրավաչափ մտադրության մասին: Եթե պարտապան ֆիզիկական անձը որևէ անհատույց փոխանցում է կատարել իր հետ փոխվագրակցված անձի, որից միայն երեք կամ չորս տարի հետո է ստանձնել որևէ պարտավորություն և դրանից կարձ ժամանակ անց սնանկ է ճանաչվել, շատ

դժվար կլինի նման փոխանցումը դիտարկել որպես պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու՝ պարտապահի մտադրության մասին ակնհայտորեն վկայող փոխանցում:

Նման դեպքերը, թեև համապատասխանում են վիճարկվող դրույթի սահմանած պայմաններին, սակայն չեն կարող ծառայել վիճարկվող դրույթի՝ օրենսդրի կողմից սահմանված և ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող նպատակին, հետևաբար, Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատարանները վիճարկվող դրույթը կիրառելիս դրա գործողության շրջանակից պետք է բացառեն այն անհատույց փոխանցումները, որոնք ակնհայտորեն չեն վկայում պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու՝ պարտապահի մտադրության մասին:

ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի 1-ին նախադասության համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար:

Սահմանադրական դատարանի գնահատմամբ օրենքի վիճարկվող դրույթում սահմանված պայմանները բավարարող բացառապես բոլոր փոխանցումները հետ ստանալը, հաշվի չառնելով այն հանգամանքը, որ դրանցից ոչ բոլորը կարող են ակնհայտորեն վկայել պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու՝ պարտապահի մտադրության մասին, չի կարող դիտարկվել որպես Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար անհրաժեշտ միջոց: Նման մոտեցումը կիսախտի ոչ միայն անձի սեփականության իրավունքը, այլև հիմնական իրավունքների սահմանափակման համաշափության սահմանադրական սկզբունքը:

9. Դիմողի բարձրացրած հարցերի առնչությամբ իրավակարգավորման մոտեցումներ են նախատեսված ՄԱԿ-ի միջազգային առևտրային իրավունքի հարցերով հանձնաժողովի կողմից 2004թ. հունիսի 25-ին ընդունված՝ Օրենսդիր մարմինների համար անվճարունակության մասին օրենսդրության հարցերով ուղեցույցում: Մասնավորապես:

- նշված ուղեցույցը իրավաբանական և ֆիզիկական անձպարտապահների նկատմամբ տարրերակված մոտեցում է առաջարկում այն առումով, որ ֆիզիկական անձանց գույքային զանգվածը որոշելիս թույլատրվում են որոշակի բացառություններ, մինչդեռ իրավաբանական անձանց դեպքում նման բացառություններ, որպես կանոն, չեն նախատեսվում: Ըստ ուղեցույցի՝ նման բացառությունների քանակը և արժեքային ծավալը պետք է հասցվի նվազագույնի, որն անհրաժեշտ է պարտապահի անձնական իրավունքների պաշտպանության և ապրելու միջոցների համար վաստակելու հնարավորություն տրամադրելու համար: Նման բացառությունները

սահմանելիս անհրաժեշտություն կլինի դիտարկել մարդու իրավունքների ոլորտում, այդ թվում միջազգային պայմանագրերով նախատեսված պարտավորությունների շրջանակներում կիրառվող պարտավորությունների հարցը, քանի որ նման բացառությունները կարող են առնչվել միջազգային պայմանագրերով պաշտպանվող պարտապանի և նրա ընտանիքի համապատասխան անդամներին,

- ուղեցույցը, հնարավոր համարելով այնպիսի դեպքերի առկայությունը, եթե երրորդ անձանց պատկանող ակտիվների ներառումը գույքային զանգվածում կարող է ունենալ որոշիչ դեր, նպատակահարմար է համարում օրենսդրությամբ նախատեսել որոշակի կառուցակարգ, որը թույլ կտա պահպանել երրորդ անձանց պատկանող ակտիվները անվճարունակության վերաբերյալ վարույթի ընթացքում երրորդ անձ հանդիսացող սեփականատիրոջ շահերի պահպանման և երրորդ անձի կողմից նման ներառումը վիճարկելու իրավունք վերապահելու պայմանով,

- ուղեցույցը ներկայացնում է տարբեր երկրների օրենսդրական փորձը՝ արձանագրելով, որ անվճարունակության մասին օրենքներով սահմանվում է, այսպես կոչված, կասկածելի ժամանակահատված, որի ընթացքում կնքված գործարքները ենթակա են չեղարկման: Ընդ որում, կարող է սահմանվել մեկ ընդհանուր ժամկետ կամ տարբեր ժամկետներ՝ կախված գործարքի տեսակից և այն հանգամանքից, թե գործարքի շահառուն փոխկապակցված է պարտապանի հետ, թե՝ ոչ: Կան երկրներ, որտեղ օրենսդրութեան նախատեսվում է կասկածելի ժամանակահատվածի համեմատարար կարձ ժամանակահատված, որի ընթացքում կնքված որոշ տեսակի գործարքներն ինքնարերաբար չեղյալ են համարվում, սակայն կիրառվում է նաև տևական ժամկետ, որի դեպքում լրացուցիչ տարրեր ենթակա են ապացուցման: Քանի որ որոշ գործարքներ կապված են դիտավորյալ հակաիրավական գործողությունների կատարման հետ, նման գործարքների չեղարկման ժամկետ ընդհանրապես չի սահմանվում: Կան երկրներ, որտեղ սահմանվում է բավականին տևական կասկածելի ժամանակահատված մեկից մինչև տասը տարի, որը, որպես կանոն, հաշվարկվում է վարույթի բացման օրվանից: Ուղեցույցի դրույթների համաձայն ցանկալի է, բացառությամբ դիտավորյալ հակաիրավական գործողությունների կատարման հետ կապված գործարքների, սահմանել կասկածելի ժամանակահատվածի հարաբերականորեն ոչ տևական ժամկետ կոմերցիոն որոշակիություն ապահովելու և վարկի մատչելության ու արժեքի վրա գործարքների չեղարկման վերաբերյալ դրույթների ցանկացած բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով:

Վերոգրյալի կապակցությամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի հետագա բարեփոխումների ժա-

մանակ անհրաժեշտ է հաշվի առնել ՄԱԿ-ի միջազգային առևտրային իրավունքի հարցերով հանձնաժողովի կողմից 2004թ. հունիսի 25-ին ընդունված՝ Օրենսդիր մարմինների համար անվճարունակության մասին օրենսդրության հարցերով ուղեցույցի դրույթները:

Ենելով գործի քննության արդյունքներից և դեկավարվելով ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը ՈՐՈՇԵՑ.

1. «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնպիսի սահմանադրախրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ կառավարիչը կարող է պարտապանին սնանկ ճանաշելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, դիմել և դատական կարգով հետ ստանալ պարտապանին սնանկ ճանաշելուն նախորդող հինգ տարվա ընթացքում պարտապանի հետ փոխկապակցված անձանց պարտապանի կատարած այն անհատույց փոխանցումները, որոնք դատարանի կողմից կգնահատվեն որպես պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու՝ պարտապանի մտադրության մասին ակնհայտորեն վկայող փոխանցումներ:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի հիմքով դիմողների նկատմամբ կայացված վերջնական դատական ակտն օրենքով սահմանված կարգով նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման, հաշվի առնելով, որ վեճի առարկա դրույթը դիմոդների նկատմամբ չի կիրառվել սույն որոշման մեջ Սահմանադրական դատարանի կողմից ներկայացված մեկնաբանությամբ:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

፲፻፲፭

Գ. ՀԱՅՈՒԹՅՈՒՆԻՑԱՌ

31 հունվարի 2017 թվականի  
ԱԴ-1340



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2016 թվականի Նոյեմբերի 16-ին Երեքաւոհս Ստորագրված՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՄՈԼԴՈՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ  
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ՝ ԱՌԱՏ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՂԱԳՐԻ  
ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ՝

Քաղ. Երևան

7 փետրվարի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Վ. Բալայանի (գեկուցող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Շ. Քոչարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դրնաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2016 թվականի նոյեմբերի 16-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Մոլդովայի Հանրապետության կառավարության

միջև քաղաքացիների՝ առանց մուտքի արտոնագրի այցելությունների մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահ՝ 16.01.2017 թվականին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության և Մոլդովայի Հանրապետության կառավարության միջև քաղաքացիների՝ առանց մուտքի արտոնագրի այցելությունների մասին համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2016 թվականի նոյեմբերի 16-ին՝ Երևանում:

2. Համաձայնազրի նպատակն է երկու պետությունների քաղաքացիների փոխադարձ այցելությունների ռեժիմի իրավական կանոնակարգումը:

3. Համաձայնագրով նախատեսվում է, որ Կողմերի պետությունների քաղաքացիները, այդ թվում երրորդ պետությունների տարածքներում մշտապես բնակվողները կամ ժամանակավորապես գտնվողները, կարող են առանց մուտքի արտոնագրի՝ արտասահման ուղևորվելու համար վավերական ճամփորդական փաստաթղթերի հիման վրա մուտք գործել, դուրս գալ, տարանցիկ տեղաշարժվել կամ գտնվել մյուս Կողմի պետության տարածքում անընդմեջ կամ մի քանի այցելությամբ 6 ամսվա ընթացքում 90 օրը չգերազանցող ժամկետով՝ սկսած առաջին անգամ երկիր մուտք գործելու ամսաթվից:

4. Համաձայնազրով Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության սկզբունքով, ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

• դիվանագիտական ուղիներով տեղեկատվություն փոխանակել գործող ճամփորդական փաստաթղթերը փոփոխելու մասին: Փոխանակել այդ փաստաթղթերի նմուշները ոչ ուշ, քան նշված փաստաթղթերը գործողության մեջ դնելուց 30 օր առաջ (հոդված 2, կետ 2),

• ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները Սոլլովյայի քաղաքացիներին տրամադրեն փաստաթղթերի կորստի մասին հայտարարությունը հաստատող տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետության տարածքում Համաձանագրի 2-րդ հոդվածում նշված

փաստաթղթերը կորցնելու դեպքում (հոդված 6, կետ 1),

• ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները ՀՀ քաղաքացիներին տրամադրեն Համաձայնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված Հայաստանի Հանրապետություն Վերադառնալու համար ճամփորդական փաստաթուղթ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան (հոդված 6, կետ 2),

• դիվանագիտական ուղիներով Մոլդովայի Հանրապետությանը ծանուցել Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելու, ելքի, գտնվելու պայմանների փոփոխության մասին, բայց ոչ ուշ, քանի այդ փոփոխություններն ուժի մեջ մտնելուց 30 օր առաջ (հոդված 7),

• անհապաղ տեղեկացնել Մոլդովայի Հանրապետությանը Համաձայնագրի 10-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմքով Համաձայնագրի գործողությունն ամբողջությամբ կամ մասամբ կասեցնելուն ուղղված միջոցառումների ձեռնարկման և դրանց Վերացման մասին՝ նման որոշում ընդունելուց 15 օր առաջ (հոդված 10, կետ 2):

5. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Համաձայնագիրը կնպաստի երկու երկրների միջև՝ բարիդրացիսական, փոխչափավետ հարաբերությունների հաստատմանը ՀՀ Սահմանադրության 13-րդ հոդվածի իրացմանը:

Ենելով գործի քննության արդյունքներից և դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ռ Ո Շ Ե Յ**.


1. 2016 թվականի նոյեմբերի 16-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Մոլդովայի Հանրապետության կառավարության միջև քաղաքացիների՝ առանց մուտքի արտոնագրի այցելությունների մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

## ՆԱԽԱԳԱՀՈՂ

## Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

7 փետրվարի 2017 թվականի  
ՍԴՈ-1341



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ԴՈՒԲԱՅՈՒՄ  
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՅՅԱԼ  
ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ  
ԱՆՎԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՍԱԳԱՎԱՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ  
ՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

7 փետրվարի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալյայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (գեկուցող).

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեք Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի տեղակալ Վ. Եղիազարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնքաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2016 թվականի նոյեմբերի 10-ին Դուբայում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետու-

թյան կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև անվտանգության բնագավառում համագործակցության և ահարեկչության դեմ պայքարի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ՝ գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի 2016 թվականի դեկտեմբերի 26-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց 8.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև անվտանգության բնագավառում համագործակցության և ահարեկչության դեմ պայքարի մասին համաձայնագիրը (Համաձայնագիր) ստորագրվել է 2016 թվականի նոյեմբերի 10-ին՝ Դուբայում:

Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարությունը (Կողմեր) կհամագործակցեն հանցագործության բոլոր դրսնորումների դեմ պայքարում՝ հատկապես հետևյալ բնագավառներում.

- կազմակերպված հանցավորություն և կոռուպցիա,
- անձի և սեփականության դեմ ուղղված հանցագործություններ,
- զենքի, զինամթերքի, պայթուցիկ, թունավոր և ռադիոակտիվ նյութերի, զանգվածային ոչնչացման և ոչ սովորական զենքերի, ինչպես նաև դրանց հետ կապված տեխնոլոգիաների ապօրինի շրջանառություն,
- մարդկանց թրաֆիկինգ և մարմնավաճառության ցանցեր,
- թմրամիջոցների, հոգեներգործուն նյութերի և դրանց պրեկուրսորների անօրինական արտադրություն, շրջանառություն և չարաշահում,
- տնտեսական հանցագործություններ,
- փողերի լվացում,
- ահարեկչության և ահարեկչության ֆինանսավորման դեմ պայքար,
- տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում կատարվող հանցագործություններ,
- արժույթների, պաշտոնական կամ իրավական փաստաթղթերի, արժեթղթերի կամ ֆինանսական գործիքների կեղծում, ինչպես նաև դրանց տարածում,

- մտավոր սեփականության դեմ ուղղված հանցագործություններ,
  - մշակութային արժեքների հափշտակում և մաքսանենգություն,
  - ավտոմեքենաների առևանգում և մաքսանենգություն,
  - երկուստեք համաձայնեցված՝ հանցագործության այլ տեսակներ:
- Համաձայնագրի դրույթների համաձայն՝ համագործակցությունը կիրականացվի Կողմերից յուրաքանչյուրի հարցումով կամ նախաձեռնությամբ:

Համաձայնագիրը չպետք է խոչընդոտի Կողմերի միջև իրավական համագործակցությանը հանձնման և քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության բնագավառներում, ինչպես նաև Կողմերի մասնակցությամբ այլ միջազգային պայմանագրերից բխող՝ Կողմերի իրավունքներին կամ պարտավորություններին:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները

ա) որպես հայցվող Կողմ կարող է ամբողջովին կամ մասնակիորեն մերժել Համաձայնագրի դրույթների համաձայն արված ցանկացած հարցման կատարումը, եթե նման հարցումը կարող է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությանը, անվտանգությանը, հասարակական կարգին կամ ցանկացած այլ ազգային շահի կամ կարող է հակասել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը կամ միջազգային պարտավորություններին,

բ) համագործակցության հարցումը կարող է մերժել, եթե այն գործողությունը, որի կապակցությամբ հարցումը փոխանցվել է, պատժելի չէ Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն,

գ) որպես հայցվող Կողմ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ ընթացակարգերը հարցման իրականացումն արագ և լիարժեք ապահովելու համար,

դ) հայցող Կողմի պահանջով ձեռնարկել բոլոր անհրաժեշտ ընթացակարգերը հարցման, դրա բովանդակության և կցված առդիրների գաղտնիությունը, ինչպես նաև իրականացվող համագործակցության վերաբերյալ փաստերի գաղտնիությունն ապահովելու համար,

ե) թույլ չտալ օգտագործել կամ հրապարակել Համաձայնագրի դրույթների համաձայն ստացված որևէ տեղեկատվություն կամ փաստաթուղթ հարցման մեջ սահմանված նպատակներից տարբեր նպատակներով՝ առանց բացահայտվող Կողմի նախնական գրավոր համաձայնության,

զ) կրել Համաձայնագրի համաձայն համագործակցության հարցման կատարման հետ կապված սովորական ծախսերը:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած

պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածի դրույթներին և, ի թիվս այլնի, ուղղված են Կողմերի միջև զարգացնելու բարեկամության և համագործակցության կապերը, ինչպես նաև նպաստելու անվտանգության պահպանման և հանցավորության դեմ պայքարի ոլորտներում համագործակցության խորացմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ռ Շ Ե Յ Ց**.

1. 2016 թվականի նոյեմբերի 10-ին Դուբայում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև անվտանգության բնագավառում համագործակցության և ահարեկչության դեմ պայքարի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

#### ՆԱԽԱԳԱՀՈՂ

#### Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

7 Փետրվարի 2017 թվականի  
ՍԴՈ-1342



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2016 թվականի Նոյեմբերի 23-ին ՄօսկվաՅում Ստորագրված՝  
«Բնական Մոլորակ Հագուստի Առարկաներ, Հագուստի  
Պարագաներ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿԱՆԵՐ» ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԴԻՐՔԻ  
ՀԱԿԻ (ՆՈԽՑԱԿԱՆԱՑՄԱՆ) ՆՇԱՆՆԵՐԸ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ  
ԴՐՈՇՄԱՎՈՐԻՄ ՆԵՐԴՆԵԼՈՒ ՓՈՐՉԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ 2015-2016  
թվականներին հրականացնելու ՄԱՍԻՆ» 2015 թվականի  
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-ի ՀԱՄԱՅՆՍՎՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ  
ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՐՋԱՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵջ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

7 փետրվարի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալյայնի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (զրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Վ. Միրումյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2016 թվականի նոյեմբերի 23-ին Մոսկվայում ստորագրված «Բնական մորթուց հազուսի առարկաներ, հազուսի պարագաներ և այլ արտադրատեսակներ» ապրանքային դիրքի հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորում ներդնելու փորձնական ծրագիրը 2015-2016 թվականներին իրականացնելու մասին» 2015 թվականի սեպտեմբերի 8-ի համաձայնագրի գործողության ժամկետը երկարածզելու մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 30.12.2016թ. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Բնական մորթուց հազուսի առարկաներ, հազուսի պարագաներ և այլ արտադրատեսակներ» ապրանքային դիրքի հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորում ներդնելու փորձնական ծրագիրը 2015-2016 թվականներին իրականացնելու մասին» 2015 թվականի սեպտեմբերի 8-ի համաձայնագրի գործողության ժամկետը երկարածզելու մասին արձանագրությունն (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2016 թվականի նոյեմբերի 23-ին Մոսկվայում՝ «Բնական մորթուց հազուսի առարկաներ, հազուսի պարագաներ և այլ արտադրատեսակներ» ապրանքային դիրքի հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորում ներդնելու փորձնական ծրագիրը 2015-2016 թվականներին իրականացնելու մասին» 2015 թվականի սեպտեմբերի 8-ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) գործողության ժամկետը երկարածզելու նպատակով:

2. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է երկարածզել Համաձայնագրի (ՀՀ կողմից վավերացվել է Ազգային ժողովի 2016 թվականի մարտի 16-ի ԱԺԴ-204-Ն որոշմամբ) գործողության ժամկետը երկու տարով՝ 2017թ. հունվարի 1-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը:

Ենթելով գործի քննության արդյունքներից և դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ռ Ո Շ Ե Ց**.

1. 2016 թվականի նոյեմբերի 23-ին Սուվորով ստորագրված՝ «Բնական մորթուց հազուստի առարկաներ, հազուստի պարագաներ և այլ արտադրատեսակներ» ապրանքային դիրքի հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորում ներդնելու փորձնական ծրագիրը 2015-2016 թվականներին իրականացնելու մասին» 2015 թվականի սեպտեմբերի 8-ի համաձայնագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում իրապարակման պահից:

### **ՆԱԽԱԳԱՀՈՂ**

### **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

7 փետրվարի 2017 թվականի  
ՍԴՈ-1343



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱՐԱՄ ՇԱՀԲԱԶՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 213-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ԵՎ 4-ՐԴ  
ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ՝

Քաղ. Երևան

7 փետրվարի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (գեղուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում՝  
դիմողի ներկայացուցիչ Տ. Եղորյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներքրավված՝ ՀՀ Ազգային ժողովի  
պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի  
իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի և նույն վարչության  
իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություն-ներով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի,  
«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ  
հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Արամ Շահբազյանի  
դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի  
213-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության  
Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերա-

բերյալ» գործը:

Գործի քննության արդին Արամ Շահբազյանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 3-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հունիսի 17-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Վերաքննիչ բողոքը վերադարձնելը» վերտառությամբ 213-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 3-րդ և 4-րդ մասերը սահմանում են.

«3. Սույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված հիմքով վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացվելու և որոշումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, կրկին ներկայացվելու դեպքում բողոքը համարվում է դատարանում ընդունված: Բողոքը կրկին ներկայացվելու դեպքում խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում:

4. Վերաքննիչ դատարանի՝ բողոքը վերադարձնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով՝ որոշումը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածը գործող խմբագրությամբ շարադրվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՀՕ-277-Ն օրենքով:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին:

Արամ Շահբազյանը Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան հայցադիմում է ներկայացրել ընդդեմ Նելլի Մամիկոնյանի՝ համապարտ պատասխանատվությամբ ստանձնած պարտավորությունների կատարմանը պարտավորեցնելու պահանջով: Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 20.05.2015թ. վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն: Հիշյալ վճռի դեմ ներկայացված

վերաքննիչ բողոքի հիման վրա ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.07.2015թ. որոշմամբ վերաքննիչ բողոքը վերադարձվել է: Հիշյալ որոշման դեմ ներկայացվել է վճռաբեկ բողոք: ՀՀ վճռաբեկ դատարանի 02.09.2015թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձվել է: Հիշյալ որոշման դեմ ներկայացվել է վճռաբեկ բողոքը կրկին ներկայացվել է: ՀՀ վճռաբեկ դատարանի 07.10.2015թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը թողնվել է առանց քննության: Հիշյալ որոշումն ստանալուց հետո 09.11.2015թ. կրկին ներկայացվել է վերաքննիչ բողոք: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.11.2015թ. որոշմամբ վերաքննիչ բողոքը վերադարձվել է: Հիշյալ որոշման դեմ ներկայացվել է վճռաբեկ բողոք: ՀՀ վճռաբեկ դատարանի 03.02.2016թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձվել է: Հիշյալ որոշման դեմ կրկին ներկայացված բողոքի հիման վրա 16.03.2016թ. ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացվել է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշում:

3. Դիմողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը հակասում են ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 61 (1)-րդ, 63 (1)-րդ, 78-րդ, 79-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներին:

Ըստ դիմողի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի Վիճակվող իրավակարգավորումներից, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությունից բխում է, որ այն դեպքում, եթե վերաքննիչ բողոքը դատարանի կողմից վերադարձվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի պահանջները պահպանված չլինելու հիմքով (հատկապես, պետական տուրքը վճարված չլինելու և տուրքի մասով արտոնություն կիրառելու միջնորդությունը մերժելու հիմքով) և վերաքննիչ բողոքը բերած անձը որոշել է իրացնել բողոքը վերադարձնելու մասին որոշումը վճռաբեկության կարգով բողոքարկելու իր իրավունքը, ապա վերջինս ինքնարերաբար զրկվում է իր բողոքը չբավարարվելու դեպքում վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելու հնարավորությունից: Դիմողը եզրահանգում է, որ վերաքննիչ բողոքը բերող անձի՝ բողոքը վերադարձնելու մասին վերաքննիչ դատարանի որոշումը բողոքարկելու իրավունքը նման իրավակարգավորման պայմաններում ձեռք է բերում գուտ պատրանքային բնույթ և խախտվում է այդ իրավունքի հությունը: Բողոքն անհիմն վերադարձվելու դեպքում անձն իրականում զրկված է այդ որոշման դեմ արդյունավետ պաշտպանության միջոցի հնարավորությունից, քանի որ վերջինս պետք է գիտակցի, որ վճռաբեկության կարգով որոշումը բողոքարկելու իրավունքից օգտվելը կարող է ուղղակիորեն զրկել վերջինիս ըստ հության լուծող դատական ակտն առհասարակ վերադաս դատական ատյանում վիճարկելու հնարա-

Վորությունից (վճռաբեկ բողոքի մերժման պարագայում):

Դիմողը գտնում է, որ վիճարկվող իրավակարգավորումների, դրանց տրված մեկնաբանությունների շրջանակներում, ինչպես նաև առկա օրենսդրական բացի և այն լրացնելու իրավական երաշխիքների բացակայության պայմաններում արգելափակվում է անձի վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտի արդյունավետ վիճարկման հնարավորությունը զրկելով վերջինիս դատական պաշտպանության և արդար դատաքննության (դատարանի մատչելիության) իրավունքներից:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված իրավակարգավորումները դատաիրավական պրակտիկայում վերջիններիս տրված իրավական մեկնաբանությունների լույսի ներքո ՀՀ Սահմանադրության պահանջներին համապատասխանության առումով խնդրահարույց են:

Պատասխանող կողմը, վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներում արտահայտված մի շարք իրավական դիրքորոշումներ, գտնում է, որ քննարկվող իրավիճակում առկա է իրավական անորոշություն այն առումով, որ նորմում հստակ չի նշվում՝ դատական ակտի բողոքարկման իրավունքից օգտվելու պարագայում արդյոք անձը զրկվում է թերությունները վերացնելու և բողոք կրկին ներկայացնելու հնարավորությունից, թե այդ դեպքում անձը պահպանում է թերությունները վերացնելու համար բողոք կրկին ներկայացնելու իրավունքը բողոքարկման արդյունքում վերադաս դատական ատյանի դատական ակտն ստանալու պահից երկշաբաթյա ժամկետում: Հաստ պատասխանողի եթե անձն օգտվում է բողոքարկման իրավունքից և չի հասնում իր համար դրական արդյունքի, պետք է ստանա թերությունները վերացնելու դեպքում բողոքը կրկին ներկայացնելու իրավական հնարավորություն: Հակառակ տրամաբանությունը քաղաքացիներին ոչ իրավաչափ ռիսկ է փոխանցում և չի կարող հետապնդել սահմանադրափրավական իրավաչափ նպատակ:

Պատասխանողը գտնում է նաև, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի գործող իրավակարգավորումների պայմաններում միջանկյալ դատական ակտը վերադաս դատական ատյանում բողոքարկելու դեպքերում բաց թողնված երկշաբաթյա ժամկետն իրավունքի ուժով (ex jure) պետք է համարվի հարգելի, ինչը կերաշխավորի անձի դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը:

5. Սույն գործի շրջանակներում, հաշվի առնելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել և գնահատել վերաբննից դատարանի բողոքը վերադարձնելու մասին որոշումը վճարեկության կարգով բողոքարկելու իրավակարգավորումների լիարժեքությունը դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների իրացման երաշխավորվածության և ապահովման համատեքստում:

6. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքներն ամրագրված են ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերով, որոնց համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք, ինչպես նաև անկախ և անաշառ դատարանի կողմից իր գործի արդարացի, իրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Իր մի շարք որոշումներով (ՍԴՈ-652, ՍԴՈ-690, ՍԴՈ-719, ՍԴՈ-765, ՍԴՈ-844, ՍԴՈ-873, ՍԴՈ-890, ՍԴՈ-932, ՍԴՈ-942, ՍԴՈ-1037, ՍԴՈ-1052, ՍԴՈ-1115, ՍԴՈ-1127, ՍԴՈ-1190, ՍԴՈ-1192, ՍԴՈ-1196, ՍԴՈ-1197, ՍԴՈ-1220, ՍԴՈ-1222, ՍԴՈ-1257, ՍԴՈ-1289) Սահմանադրական դատարանը հանգամանորեն անդրադարձել է արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափության խնդիրներին՝ դրանք դիտարկելով որպես դատական պաշտպանության իրավունքի անհրաժեշտ բաղադրատարրեր: Սասնավորապես.

- Վերաբննից կամ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցում դատարանները պետք է ունենան ոչ թե հայեցողական անսահմանափակ ազատություն, այլ օրենսդրորեն նախատեսված, հստակ, և անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով, բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք և պարտականություն (ՍԴՈ-690):

- Դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրկել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ (ՍԴՈ-1127):

- Ծննդացանական որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում (ՍԴՈ-1257):

Սույն գործի շրջանակներում ևս ՀՀ սահմանադրական դատարանը վերահստատում է իր վերոհիշյալ իրավական դիրքորոշումները և գտնում, որ օրենսդրական կարգավորումները պետք է հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր նախատեսեն:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր վճիռներում ևս բազմից անդրադարձել է դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքներին և նշել, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքը, որի մասնավոր տարր է հանդիսանում դատարանի մատչելիության իրավունքը, չի հանդիսանում բացարձակ իրավունք և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, հատկապես՝ գանգատի ընդունելիության պայմանների առնչությամբ, քանի որ այն իր էռությամբ պահանջում է պետության կողմից կարգավորում, որը կարող է փոփոխվել կախված ժամանակից և տեղից, ինչպես հասարակության, այնպես էլ կոնկրետ անձանց պահանջմունքներին և միջոցներին համապատասխան: Պետություններն այս առնչությամբ օգտվում են հայեցողության ազատությունից: Այնուամենայնիվ, դատարանի մատչելիության իրավունքը չի կարող սահմանափակվել այնպես և այն սահմաններով, որ վնասի նրա էռությունը: Դրանք համապատասխանում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին, եթե ունեն օրինական նպատակ և կիրառված միջոցների ու դրված նպատակի միջև գոյություն ունի արդար հավասարակշռություն (Golder v. United Kingdom, 21 Feb. 1975, Fayed v. United Kingdom, 25 Aug. 1994, Ashingdane v. United Kingdom, 28 May 1985, Garcia Manibardo v. Spain (15 Feb. 2000), 29.06.2000, Bellet v. France, 20 Nov. 1995, Philis v. Greece, 27 Aug. 1991, Tolstoy Miloslavsky v. United Kingdom, 23 Jun. 1995):

7. Վերաքննիչ բողոքը վերադարձնելու հետ կապված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (օրենսգիրք) դրույթների վերլուծության արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը սահմանել է վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքերը, կարգը և հետևանքները: Մասնավորապես, օրենսգրքի 210-րդ հոդվածի պահանջների (վերաքննիչ բողոքի ձևի և բովանդակության մասով) շպահպաննելու հիմք է վերաքննիչ բողոքը վերադարձնելու համար (օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ): Այս հիմքով վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացվելու և որոշումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, կրկին

ներկայացվելու դեպքում բողոքը համարվում է դատարանում ընդունված: Բողոքը կրկին ներկայացվելու դեպքում խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում: Հիշյալ կանոնակարգումն ամրագրված է օրենսգրքի 213-րդ հոդվածի սույն գործով վիճարկվող 3-րդ մասով:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 2016 թվականի հունիսի 28-ի ՍԴՈ-1290 որոշմամբ օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ մասը ձանաչել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61, 63 և 78-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր այն մասով, որ չի նախատեսում բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն չներկայացնելու հիմքով՝ վերաբնիշ բողոքը վերադարձնելուց հետո թույլ տրված խախտումը շտկելու և օրենքով սահմանված ժամկետում բողոքը կրկին ներկայացնելու հնարավորություն:

Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի բարձրացրած սահմանադրաբավական հարցն անմիջականորեն պայմանավորված չէ օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորումներով:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ օրենսգրքով սահմանված է վերաքննիչ դատարանի՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը վճռաբեկության կարգով անմիջականորեն բողոքարկելու իրավական հնարավորություն (օրենսգրքի 213-րդ հոդվածի 4-րդ մաս): Նորմատիվ այսպիսի կարգավորումը նպատակ է հետապնդում ստուգելու վերաքննիչ դատարանի համապատասխան բողոքարկվող ակտի օրինականությունը: Ընդ որում, վերաքննիչ դատարանի՝ բողոքը վերադարձնելու մասին որոշումը բողոքարկելու ժամկետն իրավաչափորեն հաշվարկվում է այն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, հանգամանք, որն ուղղված է իրավական որոշակիության սկզբունքի ապահովմանը՝ ժամկետի առումով բողոքարկերի համար կանխատեսելի դարձնելով իր դրսորելիք վարքագիծը: Սակայն նման իրավակարգավորումը չպետք է բացառի վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշման վերանայումից հետո վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքը մերժելու դեպքում անձի դատական պաշտպանության իրավունքի հետագա իրացման հնարավորությունը:

ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ վերաքննիչ դատարանի՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո, մի կողմից, վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները վերացնելը և այն կրկին ներկայացնելը և մյուս կողմից՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը վճռաբեկության կարգով բողոքարկելն օրենսդրի կողմից անձին տրված հավասարազոր իրավական հնարավորություններ են:

8. Սույն գործի շրջանակներում դիմող կողմը բարձրացնում է նաև օրենսդրական բացի հարց: ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք, մասնավորապես՝ ՍԴՈ-864, ՍԴՈ-914, ՍԴՈ-933 որոշումներում իրավունքի բացի սահմանադրականության հարցը քննության առնելու իրավասության վերաբերյալ արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ իրավակարգավորման բացի նորմատիվ իրավական լուծումը հանդիսանում է օրենսդիր իշխանության իրավասությունը: Մասնավորապես, համաձայն հիշյալ որոշումների՝ «Իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, եթե իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է»: ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավունքի բացի վերաբերյալ արտահայտված հիշյալ իրավական դիրքորոշումը կիրառելի է նաև սույն գործի շրջանակներում:

Օրենսգրքի 213-րդ հոդվածի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի կողմից սույն գործով բարձրացված սահմանադրականության հարցով իրավակարգավորման բաց առկա է: Օրենսդիրը կանոնակարգել է միայն վերաբնիշ դատարանի վերաբնիշ բողոքը վերադարձնելու մասին որոշումը վճռաբեկ դատարանի կողմից վերացվելու դեպքում բողոքը վերաբնիշ դատարանում ընդունելու հետ կապված հարաբերությունները: Այսպես, օրենսգրքի 213-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ վերաբնիշ դատարանի վերաբնիշ բողոքը վերադարձնելու մասին որոշումը վճռաբեկ դատարանի կողմից վերացվելու դեպքում բողոքը համարվում է վերաբնիշ դատարանում ընդունված՝ սկզբնական ներկայացնելու օրը: ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերաբնիշ դատարան՝ վերաբնիշ բողոքը վերադարձնելու մասին որոշումը համարվում է միջանկյալ դատական ակտ, որը բխում է օրենսգրքի 222-րդ հոդվածի 3-րդ մասից: Վճռաբեկ դատարանի կողմից հիշյալ որոշումը վերացնելու լիազորությունը սահմանված է օրենսգրքի 240-րդ հոդվածով: Հիշյալ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ միջանկյալ դատական ակտերի վերանայումից հետո վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, կամ կայացնում է նոր դատական ակտ, որն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից: Օրենսգրքի 213-րդ հոդվածի 5-րդ մասի և 240-րդ հոդվածի 2-րդ մասի համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ հասարակական հարաբերություններն իրավունքով կարգավորելուն ուղղված օրինա-

ստեղծ գործնթացում ոչ ամբողջական լուծում է տրվել: Մասնավորապես, իրավական անդրադարձ չի կատարվել այն հարցերին, թե ո՞ր պահից պետք է հաշվարկվի և ինչքա՞ն պետք է լինի վերաքննիչը բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու և կրկին ներկայացնելու ժամկետը բոլոր այն դեպքերում, եթե վճռաբեկ դատարանը վերաքննիչը դատարանի՝ բողոքը վերադարձնելու մասին որոշումը բողոքարկվելու արդյունքում կատարած վերանայումից հետո մերժում է վճռաբեկ բողոքը: Այն դեպքերում, եթե վերաքննիչը դատարանի՝ վերաքննիչը բողոքը վերադարձնելու մասին որոշման վերանայումից հետո վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքում է՝ դատական ակտը բողոքնելով օրինական ուժի մեջ, բողոքարկը պետք է ունենա այդ որոշումն ստանալուց հետո որոշակի ժամկետում վերաքննիչը դատարանի կողմից մատնանշված խախտումները վերացնելու և բողոքը կրկին ներկայացնելու հնարավորություն:

Ընդ որում, անհրաժեշտ է փաստել, որ նշված իրավակարգավորման բացն առկա է օրենսգրքի 213-րդ հոդվածում ընդհանրապես, որի հաղթահարումը, ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ, օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Ի դեպ, հարկ է նշել, որ պատասխանող կողմը ևս սույն գործով քննության առարկա հարցի վերաբերյալ փաստել է, որ առկա է իրավական անորոշություն:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ, ելնելով իրավունքի գերակայության սկզբունքից, մարդու իմանական իրավունքների անմիջականորեն գործողության սահմանադրական պահանջից, ինչպես նաև վերաքննիչը բողոքը վերադարձնելու հետ կապված օրենսդրական կարգավորումների ընդհանուր տրամաբանությունից, մինչև ՀՀ Ազգային ժողովի կողմից համապատասխան իրավակարգավորումներ սահմանելը դատական պրակտիկան պետք է առաջնորդվի, այն մոտեցմամբ, որ բոլոր այն դեպքերում, եթե վերաքննիչը դատարանի վերաքննիչը բողոքը վերադարձնելու մասին որոշումը վերանայելուց հետո վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը բողնելով օրինական ուժի մեջ, բողոքարկը պետք է հնարավորություն ունենա այդ որոշումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում վերացնել վերաքննիչը դատարանի կողմից մատնանշված վերաքննիչը բողոքում թույլ տրված խախտումները և վերաքննիչը բողոքը կրկին ներկայացնել՝ առաջնորդվելով դատական ակտի բողոքարկման իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացման անհրաժեշտությամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և դեկավարվելով ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով, 60-րդ հոդվածի 1-ին կետով, 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ռ Ե Ց**.

1. «Արամ Շահբաղյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասսամբ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ մասի մասով կարձել, քանի որ տվյալ նորմի առնչությամբ առկա է Սահմանադրական դատարանի որոշում:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ սույն որոշման մեջ Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

### **ՆԱԽԱԳԱՀՈՂ**

### **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

7 փետրվարի 2017 թվականի  
ՍԴՈ-1344



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

1925 թվականի Հունիսի 17-ին Ժնեվոյից  
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ  
ՀԵՂՋՈՒՑԻՉ, ԹՈՒՍՎՈՐՈՂ ԿԱՍ ԱՅԼ ԳԱԶԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ  
ԵՎ ՄԱՆՐԵԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՐԳԵԼՄԱՆ  
ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ՝

Քաղ. Երևան

14 փետրվարի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (զրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Շ. Քոչարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1925 թվականի հունիսի 17-ին Ժնեվոյի ստորագրված՝ Ռազմական գործողությունների

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ժամանակ հեղձուցիչ, թունավորող կամ այլ զագերի օգտագործման և մանրէաբանական պատերազմի միջոցների արգելման մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելով վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 23.01.2017թ. Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Ռազմական գործողությունների ժամանակ հեղձուցիչ, թունավորող կամ այլ զագերի օգտագործման և մանրէաբանական պատերազմի միջոցների արգելման մասին արձանագրությունն (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 1925 թվականի հունիսի 17-ին Ժնևում՝ պատերազմի ժամանակ հեղձուցիչ, թունավորող կամ այլ զագերի և բոլոր համանման հեղուկների, նյութերի կամ սարքերի օգտագործման արգելքի նպատակով:

2. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

• ընդունել պատերազմի ժամանակ հեղձուցիչ, թունավորող կամ այլ զագերի և բոլոր համանման հեղուկների, նյութերի կամ սարքերի օգտագործման արգելքը, համաձայնել տարածել այս արգելքը մանրէաբանական պատերազմի միջոցների վրա և համաձայնել այլ Պայմանավորվող կողմերի նկատմամբ պարտավորված լինել Արձանագրությամբ կատարված հայտարարության պայմանների համաձայն,

• ձեռնարկել բոլոր ջանքերը հորդորելու այլ պետություններին միանալու Արձանագրությանը,

• Արձանագրության վավերագրերը հասցեագրել Ֆրանսիայի Հանրապետության կառավարությանը:

3. 1925 թվականի հունիսի 17-ին Ժնևում ստորագրված՝ Ռազմական գործողությունների ժամանակ հեղձուցիչ, թունավորող կամ այլ զագերի օգտագործման և մանրէաբանական պատերազմի միջոցների արգելման մասին արձանագրության մեջ ամրագրված դրույթները համարունչ են ՀՀ Սահմանադրության 13-րդ հոդվածին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխու-

թյուններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ռ Ո Շ Ե Յ**.

1. 1925 թվականի հունիսի 17-ին Ժնևում ստորագրված՝ Ռազմական գործողությունների ժամանակ հեղձուցից, թունավորող կամ այլ գագերի օգտագործման և մանրէաբանական պատերազմի միջոցների արգելման մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

#### ՆԱԽԱԳԱՀՈՂ

#### Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

14 փետրվարի 2017 թվականի  
ՍԴՈ-1345



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2016 թվականի Նոյեմբերի 15-ին Երեքասույս ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՄԻԳՐԱՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԱԿՍԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ԿԵՆՏՐՈՆԻ (ՄՔՄՄԿ) ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄՔՄՄԿ-Ի ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

14 փետրվարի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝  
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլում-  
յանի, Ֆ. Թոփյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (գեկուցող), Վ. Հովհան-  
նիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Դետրոյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրա-  
պետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի  
Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Շ. Քոչար-  
յանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005  
թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդ-  
վածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնքաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2016 թվականի  
նոյեմբերի 15-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետու-

թյան կառավարության և Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի (ՄՔՄՄԿ) միջև Հայաստանի Հնրապետությունում ՄՔՄՄԿ-ի կարգավիճակի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հնրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ՝ գործը:

Գործի քննության առիթը Հնրապետության Նախագահի՝ 2017 թվականի հունվարի 24-ին Հայաստանի Հնրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հնրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հնրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հնրապետության կառավարության և Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի (ՄՔՄՄԿ) միջև Հայաստանի Հնրապետությունում ՄՔՄՄԿ-ի կարգավիճակի մասին համաձայնագիրը (այսուհետ Համաձայնագիր) ստորագրվել է 2016 թվականի նոյեմբերի 15-ին՝ Երևանում:

Համաձայնագիրը բաղկացած է ներածությունից և 14 հոդվածներից:

2. Համաձայնագրի նպատակն է սահմանել Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի (այսուհետ՝ ՄՔՄՄԿ) և նրա անձնակազմի կարգավիճակը, արտոնություններն ու անձեռնմխելիությունները Հայաստանի Հնրապետությունում: ՄՔՄՄԿ-ն իրավունք ունի հիմնելու իր ներկայացուցչությունը Հայաստանի Հնրապետությունում և աշխատանքի ընդունելու իր գործունեության իրականացման համար անհրաժեշտ տեղական և միջազգային անձնակազմ (հոդվ. 1):

3. Համաձայնագրով Հայաստանի Հնրապետությունը ճանաչում է ՄՔՄՄԿ-ի միջազգային իրավաբանական անձի կարգավիճակը և իրավունակությունը Հայաստանի Հնրապետությունում, մասնավորապես պայմանագրեր կնքելու, շարժական և անշարժ գույք ձեռք բերելու, տիրապետելու և տօնօրինելու, ինչպես նաև դատական հայց ներկայացնելու և որպես պատասխանող հանդես գալու (հոդվ. 2):

4. Եթե սույն Համաձայնագրում այլ բան նախատեսված չէ, բացառապես ՄՔՄՄԿ-ի որպես միջազգային կազմակերպության համար կանոններ ու կանոնակարգեր մշակելու ՄՔՄՄԿ-ի իրավունքով պայմանավորված, ներկայացուցչության ներսում կլիրառվեն Հայաստանի Հնրապետության օրենքները (հոդվ. 3, կետ 6):

5. Ըստ Համաձայնագրի ներկայացուցչությանը պատկանող կամ նրա

կողմից օգտագործվող շենքերը, արխիվը և բոլոր փաստաթղթերն ու նյութերն անձեռնմիելի են (հոդվ. 3, կետ 1): Ներկայացուցչության գույքը և ակտիվներն անձեռնմիելի են և ենթակա չեն վարչական կամ ժամանակավոր դատական սահմանափակումների (հոդվ. 4, կետ 2):

6. Համաձայնազրով նախատեսվում է, որ ներկայացուցչությունն անձեռնմիելիություն կունենա դատական գործընթացներից և հարկադիր կատարման միջոցներից, բացառությամբ

ա) այն առանձնահատուկ դեպքերի, երբ ներկայացուցչությունը հստակ կերպով հրաժարվել է անձեռնմիելիությունից,

բ) երրորդ կողմից քաղաքացիական հայցի դեպքում, որը հարուցվել է ներկայացուցչությանը պատկանող կամ նրա անունից շահագործվող շարժիչային փոխադրամիջոցով վթարի հետևանքով առաջացած վնասի կամ շարժիչային փոխադրամիջոցների պահպանումը, շահագործումն ու օգտագործումը կարգավորող կանոնակարգերի խախտման առնչությամբ,

գ) ներկայացուցչության կողմից իր անձնակազմին չվճարված աշխատավարձերի, վարձատրությունների կամ փոխհատուցումների առգրավման դեպքում՝ դատական իշխանությունների որոշման համաձայն (հոդվ. 4, կետ 1):

7. Համաձայնազրով նաև նախատեսվում է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Հայաստանի Հանրապետության առնչությամբ ներկայացուցչության անձնակազմն օգտվում է՝ արտոնություններից և անձեռնմիելիությունից, մասնավորապես դատական գործընթացների, անձնական և պաշտոնական ուղերենի առգրավման, պաշտոնական ուղերենի զննման, պաշտոնական բոլոր փաստաթղթերի, տվյալների և այլնի առնչությամբ (հոդվ. 8, կետ 1):

8. Սահմանափակված չլինելով ֆինանսական վերահսկողությամբ, կանոնակարգերով կամ որևէ տեսակի մորաթորիումով՝ ներկայացուցչությունը կարող է՝ ա) բացել և վարել ցանկացած արժույթով բանկային հաշիվ, բ) թույլատրելի ուղիներով գնել և ստանալ, պահել և տնօրինել ցանկացած արժույթ կամ արժեթույթը և գ) փոխանցել իր միջոցները, ավանդները կամ արժույթը մի երկրից մյուսը կամ նույն երկրի ներսում և փոխարկել իր մոտ եղած արժույթը ցանկացած այլ արժույթի (հոդվ. 5):

9. Համաձայնազրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետևյալ պարտավորությունները՝

- Հայաստանի Հանրապետության պետական հատուկ ծառայությունների աշխատակցի կամ պաշտոնյայի կամ ցանկացած հանրային պաշտոն զբաղեցնող այլ անձի ներկայացուցչություն մուտք գործելու համար ստանալ ներկայացուցչության ռեկավարի թույլտվությունը (հոդվ. 3, կետ 2),

- Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների միջոցով

պատշաճ կերպով ապահովել, որ ներկայացուցության անդորրը չխախսվի որևէ անձի կամ անձանց խմբի կողմից, որոնք կփորձեն չարտոնված կերպով մուտք գործել ներկայացուցության շենքեր (հոդվ. 3, կետ 3),

- ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները, որպեսզի ներկայացուցությանը տրամադրվեն անհրաժեշտ կոմունալ ծառայություններ (հոդվ. 3, կետ 4),

- ապահովել, որ ներկայացուցությունը կարողանա առանց գրաքննության կամ այլ միջամտության ուղարկել և ստանալ իր գործունեության հետ կապված հաղորդագրություններ (հոդվ. 3, կետ 5),

- ներկայացուցության գույքը, տարածքները, եկամուտները և այլ ակտիվներն ազատել հարկման բոլոր տեսակներից (հոդվ. 6, կետ 1),

- ներկայացուցությանը մատակարարվող ապրանքների և ծառայությունների գներում ներառված անուղղակի հարկերի, վարձակալության և լիզինգի հետ կապված վճարների նկատմամբ կիրառել Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնություններ (հոդվ. 6, կետ 2),

- ներկայացուցության կողմից ներմուծված կամ արտահանված՝ պաշտոնական գործունեության համար անհրաժեշտ ապրանքները, ներառյալ շարժիչային փոխադրամիջոցները և դրանց պահեստամասերը, ազատել մաքսատուրքերից և այլ վճարներից (բացի պահպանման, տեղափոխման և այդ բնույթի ծառայությունների դիմաց գանձվող վճարներից), ինչպես նաև ներմուծման և արտահանման վրա տարածվող արգելվներից և սահմանափակումներից (հոդվ. 6, կետ 3),

- ներկայացուցության յուրաքանչյուր փոխադրամիջոցի համար տրամադրել դիվանագիտական համարանիշ, որով այն կտարբերակվի որպես միջազգային կազմակերպության պաշտոնական փոխադրամիջոց (հոդվ. 6, կետ 5),

- Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն ներկայացուցության անձնակազմին և անձնակազմի անդամների հետ համատեղ բնակվող նրանց ընտանիքի անդամներին տրամադրել նույնականացման քարտեր՝ քարտափառոց լրացնելով (հոդվ. 7, կետ 2) և այլն:

10. Համաձայնագրով նախատեսված են նաև դրույթներ վեճերի կարգավորման (հոդվ. 11), դրանում լրացումներ ու փոփոխություններ կատարելու (հոդվ. 12) և դրա ուժի մեջ մտնելու (հոդվ. 13) կամ գործողության դադարեցման (հոդվ. 14) վերաբերյալ:

11. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ռ Ո Շ Ե Յ**.

1. 2016 թվականի նոյեմբերի 15-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Միջքաջիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի (ՄՔՄՄԿ) միջև Հայաստանի Հանրապետությունում ՄՔՄՄԿ-ի կարգավիճակի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

### **ՆԱԽԱԳԱՀՈՂ**

### **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

14 փետրվարի 2017 թվականի  
ՍԴՈ-1346



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ՝ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
«ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՐՁԱՆԱՅԻՆ  
ՃԱՆԱՊԱՐՀԻ (Մ6 ՎԱՆԱՉՈՐ-ՔԱԳՐԱՏԵՆ) ԲԱՐԵԼԱՎՄԱՆ  
ԾՐԱԳԻՐ» (ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾԱՌԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՍՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ՝

Քաղ. Երևան

14 փետրվարի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝  
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլում-  
յանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի,  
(զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնա-  
կան ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի,  
կայի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղա-  
կալ Ա. Առաքելյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության  
(2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ  
հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դոնքաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի  
Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2016 թվականի

նոյեմբերի 9-ին ստորագրված՝ «Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ձևնապարիի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագիր» (ընթացիկ գործառնություններ) վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության արդիք է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 16 հունվարի 2017թ. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով դիմումը, գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացարձությունը, հետազոտելով վարկային համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ձանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագիր» (ընթացիկ գործառնություններ) վարկային համաձայնագիրն (Վարկային համաձայնագիր) ստորագրվել է 2016 թվականի նոյեմբերի 9-ին՝ Հայաստանի Հանրապետությանը Մ6 մայրուղու Վանաձոր-Բագրատաշեն հատվածի տրանսպորտային արդյունավետության ու անվտանգության բարելավման համար 44.037.000 եվրո վարկ տրամադրելու նպատակով:

2. Ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանի Հանրապետության տարածքում Մ6 մայրուղու Վանաձոր-Բագրատաշեն հատվածի տրանսպորտային արդյունավետությունն ու անվտանգությունը: Ծրագիրը ներառում է Մ6 մայրուղու Վանաձոր-Բագրատաշեն հատվածի մոտ 51.5 կմ-ի վերակառուցում՝ բարելավված ճանապարհային ծածկույթով, անվտանգության ապահովման և կիմայի փոփոխությանը հարմարվելու միջոցներով և ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության (Ծրագրի իրականացման մարմին) ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդում և Ծրագրի իրականացման ուղղությամբ աջակցություն: Ծրագիրը պետք է ներառի խորհրդատվական ծառայությունների ապահովում շինարարության վերահսկման, Ծրագրի կառավարման, Ծրագրի առողջիւթյան, անվտանգության միջոցառումների իրականացմանն ուղղված աջակցության, պայմանագրի կառավարման, գնումներին ուղղված աջակցության, ճանապարհային անվտանգության և վերապատրաստումների համար:

3. Ըստ Վարկային համաձայնագրի՝ Ասիական զարգացման բանկը համաձայնում է Ասիական զարգացման բանկի ընթացիկ կապիտալ

ռեսուրսներից Հայաստանի Հանրապետությանը տրամադրել քառասունշրո միլիոն երեսունյոթ հազար եվրո (44.037.000 եվրո) (այսուհետ՝ Վարկ): Վարկն ունի հիմնական գումարի 22 տարի մարման ժամկետ և արտոնյալ ժամանակահատված՝ մինչև 2032թ. մայիսի 15-ը: Ծրագիրն ակնկալվում է ավարտել մինչև 2020թ. նոյեմբերի 30-ը:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- Ասիական զարգացման բանկին վճարել տոկոսադրույթ առհանված և շվճարված Վարկի մայր գումարի մասով (հոդված II, բաժին 2.02),

- Վարկային համաձայնագրի ժամկետից 60 օր հետո՝ կիսամյակային կտրվածքով, յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին և նոյեմբերի 15-ին, վճարել տարեկան 0.15%-ի չափով պարտավճար, որը հաշվարկվում է Վարկի ամբողջական գումարի մասով (հանած ժամանակ առ ժամանակ առհանված գումարները) (հոդված II, բաժիններ 2.03 և 2.04),

- սկսած 2032թ. մայիսի 15-ից մինչև 2038թ. նոյեմբերի 15-ը՝ յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին և նոյեմբերի 15-ին մարել Վարկի հաշվից առհանված Վարկի մայր գումարը՝ 2032թ. մայիսի 15-ից մինչև 2038թ. մայիսի 15-ը 7.142857%, իսկ 2038թ. նոյեմբերի 15-ին 7.142859% մասնաբաժիններով (հոդված II, բաժին 2.05, Առդիր 2, կետ 1),

- Վարկային միջոցներն օգտագործել Ծրագրի ծախսերը ֆինանսավորելու նպատակով՝ Վարկային համաձայնագրում սահմանված դրույթների համաձայն (հոդված III, բաժին 3.01),

- Ասիական զարգացման բանկի կողմից այլ որոշում չկայացվելու դեպքում Վարկային միջոցների հաշվին ֆինանսավորվող առարկաները գնել կամ ձեռք բերել Վարկային համաձայնագրի Առդիր 4-ում նախատեսված դրույթներով սահմանված կարգով, ինչպես նաև Ասիական զարգացման բանկի կողմից այլ որոշում չկայացվելու դեպքում Վարկային միջոցների հաշվին ֆինանսավորվող առարկաներն օգտագործել բացառապես Ծրագրի իրականացման նպատակով (հոդված III, բաժիններ 3.03 և 3.04),

- ապահովել Ծրագրի իրականացումը պատշաճ պատասխանատվությամբ ու արդյունավետությամբ և տեխնիկական, ֆինանսական, բիզնեսի և զարգացման ընդունելի գործընթացներին համապատասխան, ինչպես նաև Ծրագիրն իրականացնելիս և Ծրագրի կառույցները շահագործելիս կատարել կամ նպատել Վարկային համաձայնագրի Առդիր 5-ում նախատեսված պարտականությունների կատարմանը (հոդված IV, բաժին 4.01),

- Վարկային միջոցներից զատ Ասիական զարգացման բանկի համար ընդունելի պայմաններով ապահովել ֆինանսական միջոցների, կառույցների, ծառայությունների, հոդի և այլ անհրաժեշտ ռեսուրսների հասանելիությունը՝ Ծրագրը և Ծրագրի կառույցների շահագործումն ու

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

սպասարկումն իրականացնելու նպատակով (հոդված IV, բաժին 4.02),

- կիրառելիության դեպքում, Ծրագրին իրականացնելիս, ապահովել Ասիական զարգացման բանկի համար ընդունելի՝ իրազեկ և բարձր որակավորում ունեցող խորհրդատուների և կապալառուների ներգրավումը Հայաստանի Հանրապետությանը և Ասիական զարգացման բանկին բավարարող չափով և պայմաններով (հոդված IV, բաժին 4.03, կետ «ա»),

- ապահովել Ծրագրի իրականացումը՝ Հայաստանի Հանրապետության ու Ասիական զարգացման բանկի համար ընդունելի պլանների, նախագծման ստանդարտների, տեխնիկական բնութագրերի, աշխատանքային Առդիրների և շինարարության մեթոդների համաձայն, և Ասիական զարգացման բանկին տրամադրել այդ պլանները, նախագծման ստանդարտները, տեխնիկական բնութագրերը, աշխատանքային Առդիրները և դրանցում կատարված փոփոխությունների վերաբերյալ նյութն անմիջապես դրանք մշակելուց հետո և Ասիական զարգացման բանկի կողմից ողջամտորեն պահանջվող մանրամասնությամբ (հոդված IV, բաժին 4.03, կետ «բ»),

- ապահովել, որպեսզի Ծրագրի իրականացմանը և Ծրագրի կառույցների շահագործմանն առնչվող վարչությունների և գործակալությունների գործունեությունն իրականացվի և համակարգվի վարչարարական ճիշտ քաղաքականությանը և լնթացակարգերին համապատասխան (հոդված IV, բաժին 4.04),

- ապահովել Ծրագրի կառույցների շահագործումը, սպասարկումը և վերանորոգումը՝ տեխնիկական, ֆինանսական, բիզնեսի, զարգացման, շահագործման և սպասարկման՝ գործող սահուն գործընթացների համաձայն (հոդված IV, բաժին 4.07):

Հայաստանի Հանրապետությունը Վարկային համաձայնագրի համաձայն ստանձնել է նաև այլ պարտավորություններ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ռ Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2016 թվականի նոյեմբերի 9-ին ստորագրված «Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ձանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագիր» (ընթացիկ գործառնություններ) վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները հա-


մապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ**

14 փետրվարի 2017 թվականի  
ՍԴՈ-1347



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱՆ ԵՎ ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ  
ԸՆԴԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔԻ 21-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ԵՎ 6-ՐԴ ՄԱՍՆԵՐԻ, 66-ՐԴ  
ՀՈԴՎԱԾԻ, 426.2-ՐԴ ԵՎ 426.3-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ, 49-ՐԴ ԳԼԽԻ  
ՆՈՐՄԵՐԻ, ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 13-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ, 84-ՐԴ  
ՀՈԴՎԱԾԻ, «ՊԱՏԺԻՑ ԱԶԱՏԵԼԸ» ՎԵՐՏԱՌՈՒԹՅԱՄԲ 12-ՐԴ ԳԼԽԻ  
ՆՈՐՄԵՐԻ, «ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ (2016  
թվականի ՄԱՅԻՍԻ 16-Ի ՀՕ-83-Ն)՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

14 փետրվարի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝  
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ա.  
Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհան-  
նիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում՝

դիմողի՝ Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների  
ընդհանուր իրավասության դատարանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային  
ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի  
աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի և

նույն վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի, համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 71-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի, 66-րդ հոդվածի, 426.2-րդ և 426.3-րդ հոդվածների, 49-րդ գլխի նորմերի, ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի, 84-րդ հոդվածի, «Պատժից ազատելը» վերտառությամբ 12-րդ գլխի նորմերի, «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (2016 թվականի մայիսի 16-ի ՀՕ-83-Ն)՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 5-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքազրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Ր Զ Ե Յ .

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Կրկին անգամ դատվելու անթույլատրելիությունը» վերտառությամբ 21-րդ հոդվածի համաձայն.

«1. Ոչ ոք չի կարող կրկին անգամ դատվել նույն արարքի համար:

2. Նույն անձի վերաբերյալ, նույն դեպքի առիթով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը մեղադրանքն ավելի ծանրով փոխարինելու կամ ավելի խիստ պատիժ նշանակելու կամ մեկ այլ հիմքով, որն առաջ կբերի անձի վիճակի վատթարացում:

3. Քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարձելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման առկայությունը բացառում է քրեական գործը:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նորոգելը, եթե այն կարող է հանգեցնել անձի վիճակի վատթարացման, բացառությամբ սույն հոդվածի չորրորդ մասով նախատեսված դեպքերի:

4. Դատախազը քրեական գործը կարձելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի կայացրած որոշումը կարող է վերացնել որոշման պատճենը ստանալու պահից 7 օրվա ընթացքում։ Դրանից հետո քրեական հետապնդման մարմնի գործի վարույթը կարձելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը կարող է վերացվել մեկ անգամ և միայն զիսավոր դատախազի կողմից այդպիսի որոշում կայացնելուց հետո՝ վեց ամսվա ժամկետում։

5. Սույն հոդվածի երկրորդ և երրորդ մասերի կանոնները չեն գործում սույն օրենսգրքի 121 բաժնով նախատեսված դեպքերում։

6. Սույն հոդվածի երկրորդ մասի կանոնները չեն գործում այն բացառիկ դեպքերում, եթե գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրուելու պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը։

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածը փոփոխության և լրացման է ենթարկվել 25.05.2006թ. ՀՕ-91-Ն, 21.02.2007թ. ՀՕ-93-Ն և 28.11.2007թ. ՀՕ-270-Ն ՀՀ օրենքներով։

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Արդարացվածը» վերտառությամբ 66-րդ հոդվածի համաձայն։

«1. Արդարացված է այն անձը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել կամ քրեական գործով վարույթը կարձվել է սույն օրենսգրքի 35 հոդվածի առաջին մասի 1-3-րդ կետերով և երկրորդ մասով նախատեսված որևէ հիմքով, կամ որի նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ։

2. Արդարացվածն իրավունք ունի բողոքարկել իր նկատմամբ քրեական գործի վարույթը կարձելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերը կամ արդարացման դատավճիռը։

3. Արդարացվածն իրավունք ունի նաև պահանջել իրեն անօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու և դատապարտման հետևանքով պատճառված վնասի գույքային հատուցում ամբողջ ծավալով՝ հաշվի առնելով իրական հնարավոր բաց թողնված օգուտները։

4. Արդարացվածը որպես հատուցում իրավունք ունի ստանալ՝

1) աշխատավարձը, թոշակը, նպաստները, այլ եկամուտներ, որոնցից նա զրկվել է։

2) գույքի բռնագրավմամբ՝ այն պետության եկամուտ դարձնելու, քննություն իրականացնող մարմինների կողմից առգրավվելու, գույքի վրա կալանք դնելու հետևանքով պատճառված վնասը.

3) վճարված դատական ծախսերը.

4) փաստաբանին վճարված գումարները.

5) դատավճիռն ի կատար ածելիս վճարված կամ առգրավված տուգանքը:

5. Գումարները, որոնք ծախսվել են անձին անազատության մեջ պահելու համար, դատական ծախսերը, ինչպես նաև անազատության մեջ պարտադիր աշխատանքներ կատարելու համար այդ անձի աշխատավարձը չեն կարող հանվել այն գումարից, որը ենթակա է վճարման քրեական վարույթն իրականացնող մարմնի սխալի հետևանքով պատճառված վնասը հատուցելու համար:

6. Այն դեպքում, եթե քրեական գործի վարույթը կարգվել է, քրեական հետապնդումը դադարեցվել է կամ արդարացման դատավճիռ է կայացվել հանցազամի բացակայության հիմքով, սույն հորդվածով նախատեսված վնասի հատուցումը կատարվում է միայն քաղաքացիական դատավարության կարգով՝ քաղաքացիական հայցի լուծումից հետո:

7. Այն դեպքում, եթե արդարացման դատավճիռը կամ քրեական գործը կարձելու կամ հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը, որի հիման վրա կատարվել է վնասի հատուցում, վերացվել է և համապատասխան անձի նկատմամբ նույն գործով կայացվել է մեղադրական դատավճիռ, գումարները, որոնք վճարվել են որպես վնասի հատուցում, կարող է առգրավել դատարանը, որոշման կատարման շրջադարձման կարգով:

8. Արդարացվածն իրավունք ունի նաև՝

1) վերականգնվել նախկին աշխատանքում (նախկին պաշտոնում), իսկ դրա անհնարինության դեպքում՝ ստանալ համարժեք աշխատանք (պաշտոն) կամ նախկին աշխատանքը (պաշտոնը) կորցնելու հետևանքով պատճառված վնասի դրամական փոխհատուցում.

2) ազատազրկման, կալանքի կամ ազատության սահմանափակման ձևով պատիժը կրել, ինչպես նաև կարգապահական գումարտակում պահվելու ժամանակը բոլոր տեսակի աշխատանքային ստաժների մեջ հաշվակցել.

3) հետ ստանալ նախկինում զբաղեցրած բնակելի տարածքը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ստանալ բնակմակերեսով և գտնվելու վայրով համարժեք բնակելի տարածքը.

4) զինվորական և այլ կոչումների վերականգնման՝ հաշվի առնելով երկարամյա ծառայությունը:

9. Արդարացվածի պահանջով՝

1) դատարանը կամ քննություն իրականացնող մարմինները պարտա-

վոր են այդ մասին երկշաբաթյա ժամկետում հայտնել անձի նախկին և ներկա աշխատանքի, ուսման, բնակության վայր.

2) լրատվության միջոցը, որը հրապարակել է քրեական գործի վարույթով կասկածյալին կամ մեղադրյալին նշանակվող տեղեկություններ, պարտավոր է մեկ ամսվա ընթացքում հայտնել գործով կայացված վերջնական որոշման մասին:

10. Քրեական հետապնդման մարմինը պարտավոր է գրավոր ներողություն հայցել արդարացվածից:

11. Արդարացվածի մահվան կամ անզործունակության դեպքում պահանջի իրավունքը սույն հողվածի չորրորդ, հինգերորդ և իններորդ մասերով անզուտմ է նրա մոտակա հերթի ժառանգներին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածը լրացվել է 25.10.2011թ. ՀՕ-266-Ն ՀՀ օրենքով, որի համաձյն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասը «պատճառված» բարից հետո լրացվեց «վնասի» բառով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձինք» վերտառությամբ 426.2-րդ հոդվածի համաձայն.

«Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտը վերանալելու բողոքը ներկայացնելու իրավունք ունեն՝

1) այդ հանգամանքի հետ առնչվող գործին մասնակցած շահագործված անձինք, բազարությամբ ըրեական հետապնդման մարմինների.

2) аյն անձինք, ովքեր օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա դրույթյամբ ունեցել են այդ իրավունքը «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու հնարավորություն կամ նույն օրենքի 32 հոդվածի 3-րդ կամ 5-րդ կետերի ուժով գրկված են եղել սահմանադրական դատարանում իրենց գործի ըննության հնարավորությունից.

3) այն անձինք, ովքեր Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի կողմից համապատասխան դատական ակտի կայացման պահին ունեցել են միջազգային պայմանագրի պահանջներին (ժամկետներին) համապատասխան միջազգային դատարան դիմելու իրավունքը.

4) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը և նրա տեղակալները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.2-րդ հոդվածն օրենսգրքում լրացվել է 28.11.2007թ. ՀՕ-270-Ն ՀՀ օրենքով, իսկ այնուհետև փոփնխության է ենթարկվել 26.12.2008թ. ՀՕ-237-Ն և 20.05.2010թ. ՀՕ-96-Ն ՀՀ

օրենքներով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Դատական ակտերի վերանայման հիմքերն ու ժամկետները նոր երևան եկած հանգամանքների հետևանքով» վերտառությամբ 426.3-րդ հոդվածի համաձայն.

«1. Նոր երևան եկած հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են, եթե՝

1) օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված է վկայի, տուժողի ցուցմունքների, թարգմանչի կատարած թարգմանության ակնհայտ սխալ կամ փորձագետի եզրակացության ակնհայտ կեղծ լինելը, ինչպես նաև իրեղեն ապացույցների, քննչական ու դատական գործողությունների արձանագրությունների և այլ փաստաթղթերի կեղծված լինելը, որոնք հանգեցրել են չհիմնավորված կամ անօրինական դատավճիռ կայացնելուն.

2) օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված են դատավորների հանցավոր գործողությունները, որոնք նրանք թույլ են տվել տվյալ գործը քննելիս.

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված են գործի քննությունը կատարող անձանց այնպիսի հանցավոր գործողություններ, որոնք հանգեցրել են դատարանի չհիմնավորված և անօրինական դատավճիռ կամ գործը կարձելու վերաբերյալ որոշում կայացնելուն.

4) ի հայտ են եկել դատական ակտ կայացնելիս դատարանին անհայտ մնացած այլ հանգամանքներ, որոնք ինքնին կամ մինչև այդ պարզված հանգամանքների հետ ապացուցում են դատապարտյալի անմեղությունը կամ նրա կատարած հանցանքի նվազ ծանր կամ ավելի ծանր լինելը, քան այն, որի համար նա դատապարտվել է, ինչպես նաև ապացուցում են արդարացվածի կամ այն անձի մեղավորությունը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, կամ գործով վարույթը կարձվել է:

2. Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտը վերանայելու համար բողոք կարող է բերվել 4 ամսվա ընթացքում այն պահից, եթե բողոք բերող անձն իմացել է կամ կարող էր իմանալ դրանց ի հայտ գալու մասին:

3. Եթե վաղեմության ժամկետները լրանալու, համաներման ակտ ընդունվելու կամ առանձին անձանց ներում շնորհելու պատճառով, ինչպես նաև մեղադրյալի մահվան հետևանքով դատական ակտ կայացնելն անհնարին է, ապա սույն հոդվածի առաջին մասի 1-3-րդ կետերում մատնաշված նոր երևան եկած հանգամանքները պարզվում են սույն օրենսգրքով նախատեսված կարգով կատարվող քննությամբ:

4. Արդարացման դատավճիռի և գործով վարույթը կարձելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ որոշումների վերանայումը թույլատրվում է միայն քրեական պատասխանատվության ենթար-

կելու վաղեմության ժամկետների ընթացքում:

5. Այն դատական ակտի վերանայումը, որով մեղադրական դատավճիռ է կայացված այնպիսի հանգամանքներ ի հայտ գալու հետևանքով, որոնք ցույց են տալիս դատապարտյալի անմեղությունը կամ նրա կողմից ավելի թերև հանցանք կատարելը, քան այն, որի համար նա դատապարտվել է, ժամկետներով սահմանափակված չէ:

6. Դատապարտյալի մահը արգելք չէ նոր երևան եկած հանգամանքների հետևանքով դատական ակտը վերանայելուն՝ դատապարտյալի կամ այլ անձանց իրավունքների վերականգնման նպատակով:

7. Սույն հոդվածի դրույթները կիրառելի են նաև այն քրեական գործերով, որոնցով դատավճիռ չի կայացվել:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդվածն օրենսգրքում լրացվել է 28.11.2007թ. ՀՕ-270-Ն ՀՀ օրենքով, իսկ այսուհետև փոփոխության է ենթարկվել 26.12.2008թ. ՀՕ-237-Ն ՀՀ օրենքով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Դատական որոշումների կատարումը» վերտառությամբ 49-րդ գլուխը ներառում է 13 հոդված, որոնցով ամրագրված իրավակարգավորումները վերաբերում են դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելուն և դրանց ի կատար ածելուն, դատարանի որոշումը կատարման հանձնելու կարգադրությանը, դատական որոշումն ի կատար ածելու փուլում դատապարտյալի իրավունքների ապահովմանը, դատական որոշման վերաբերյալ կասկածները և անհստակությունները լուծելուն, դատական որոշման կատարումը հետաձգելուն, հիվանդության պատճառով պատիժը կրելուց ազատելուն, դատական որոշման կատարման հետաձգումը վերացնելուն, պատժից պայմանական վաղաժամկետ ազատելուն և պատիժն ավելի մեղմ պատճով փոխարինելուն, դատապարտյալի հետախուզմանը, ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ պատիժը կրելու ժամանակ պահելու պայմանները փոխելուն, բուժական հիմնարկում գտնվելու ժամանակը պատժի ժամկետի մեջ հաշվանցելուն:

ՀՀ քրեական օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2003թ. ապրիլի 18-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2003թ. ապրիլի 29-ին և ուժի մեջ է մտել 2003թ.օգոստոսի 1-ին:

ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Քրեական օրենքի հետադարձ ուժը» վերտառությամբ 13-րդ հոդվածի համաձայն՝

«1. Արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն:

2. Արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատրաբացնող օրենքը հետադարձ ուժ չունի:

3. Պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող և միաժամանակ պատասխանատվությունը մասնակիորեն խստացնող օրենքը հետադարձ ուժ ունի միայն այն մասով, որը մեղմացնում է պատասխանատվությունը»:

ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածը որևէ փոփոխության կամ լրացման չի ենթարկվել:

ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Դատվածությունը» վերտառությամբ 84-րդ հոդվածի համաձայն՝

«1. Անձը դատվածություն ունեցող է համարվում մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դատվածությունը մարվելու կամ հանվելու պահը:

2. Դատվածությունը, սույն օրենսգրքին համապատասխան, հաշվի է առնվում հանցագործության ռեցիդիվի դեպքում և պատիժ նշանակելիս:

3. Դատվածություն չունեցող են համարվում այն անձինք, ովքեր դատարանի դատավճոով դատապարտվել են առանց պատիժ նշանակելու կամ դատարանի դատավճոով ազատվել են պատիժը կրելուց կամ պատիժը կրել են այնպիսի արարքի համար, որի հանցավորությունն ու պատժելիությունը վերացված են օրենքով:

4. Դատվածությունը մարվում է

1) պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում՝ փորձաշրջանն անցնելուց հետո.

2) ազատազրկումից ավելի մեղմ պատժի դատապարտված անձանց նկատմամբ՝ նշանակված պատիժը կրելուց մեկ տարի անցնելուց հետո.

3) ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ՝ պատիժը կրելուց երեք տարի անցնելուց հետո.

4) ծանր հանցագործության համար ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ պատիժը կրելուց հինգ տարի անցնելուց հետո.

5) առանձնապես ծանր հանցագործության համար ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ՝ պատիժը կրելուց ութ տարի անցնելուց հետո:

5. Եթե անձն օրենքով սահմանված կարգով պայմանական վաղաժամկետ ազատվել է պատիժը կրելուց, կամ պատժի չկրած մասը փոխարինվել է ավելի մեղմ պատժով, ապա դատվածությունը մարելու ժամկետը հաշվարկվում է հիմնական պատիժը և լրացուցիչ պատիժը կրելուց ազատելու պահից:

6. Եթե անձը պատիժը կրելուց հետո դրսնորել է անբասիր վարքագիծ,

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ապա նրա խնդրանքով դատարանը կարող է դատվածությունը հանել մինչև դատվածությունը մարելու ժամկետը լրանալը, բայց ոչ շուտ, քան այդ ժամկետի կեսը լրանալը:

7. Եթե անձը մինչև դատվածությունը մարվելը նոր հանցանք է կատարում, ապա դատվածության մարման ժամկետն ընդհատվում է: Առաջին հանցագործության համար դատվածությունը մարվելու ժամկետը հաշվարկվում է վերստին՝ վերջին հանցագործության համար պատիժը (հիմնական և լրացուցիչ) փաստորեն կրելուց հետո: Այդ դեպքում անձը երկու հանցագործությունների համար էլ դատված է համարվում մինչև դրանցից առավել ծանր հանցագործության համար դատվածությունը մարվելու ժամկետը լրանալը:

8. Դատվածությունը հանելը կամ մարելը վերացնում է դատվածության հետ կապված իրավական բոլոր հետևանքները: Սույն նորմն արգելք չէ օրենքով սահմանափակումներ նախատեսելու դատավորի, դատախազի, քննչական կոմիտեի ծառայողի, հատուկ քննչական ծառայության ծառայողի, ուստիկանության ծառայողի, քրեակատարողական ծառայողի, ազգային անվտանգության մարմիններում ծառայողի պաշտոններ գրադեցնելու համար»:

ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածը փոփոխվել և լրացվել է 09.06.2004թ. ՀՕ-97-Ն, 22.02.2007թ. ՀՕ-127-Ն, 28.11.2007թ. ՀՕ-256-Ն, 19.05.2014թ. ՀՕ-33-Ն ՀՀ օրենքներով:

ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Պատժից ազատելը» վերտառությամբ 12-րդ գլուխը ներառում է 6 հոդվածներ, որոնցով ամրագրված իրավակարգավորումները վերաբերում են պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելուն, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելուն, հղի կանանց կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց պատիժը կրելը հետաձգելուն կամ պատժից ազատելուն, ծանր հիվանդության հետևանքով պատժից ազատելուն, արտակարգ հանգամանքների հետևանքով պատժից ազատելուն և մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով պատժից ազատելուն:

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-83-Ն ՀՀ օրենքը (այսուհետ՝ օրենք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2016թ. մայիսի 16-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2016թ. հունիսի 7-ին և ուժի մեջ է մտել 2016թ. հունիսի 25-ին:

Օրենքի 5-րդ հոդվածով ուժը կորցրած է ձանաչվել ՀՀ ՔՕ 215-րդ հոդվածը:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

11.02.2016 թվականին Ա. Կիրակոսյանը ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր

իրավասության առաջին ատյանի դատարանի ՏԴՀ/0074/01/15 դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտվել է տուգանքի՝ 1.000.000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամի չափով:

15.08.2016 թվականին ՀՀ ԱՆ ՔԿՎ այլընտրանքային պատիժների կատարման բաժնի Ավան և Նոր Նորք բաժանմունքի պետք միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խնդրելով վերանայել դատապարտյալ Ա. Կիրակոսյանի նկատմամբ 11.02.2016 թվականին ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից կայացված ՏԴՀ/0074/01/15 դատավճռոր: Որպես դատավճռի վերանայման հիմք է նշվել այն հանգամանքը, որ 25.06.2016 թվականին ուժի մեջ է մտել ՀՀ Ազգային ժողովի կողմից 2016թ. մայիսի 16-ին ընդունված՝ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-83-Ն ՀՀ օրենքը, որի 5-րդ հոդվածի համաձայն՝ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածը:

Իր հերթին, դատապարտյալ Ա. Կիրակոսյանը նույն դատարան ներկայացրած դիմումով խնդրել է իր նկատմամբ կիրառել «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-83-Ն օրենքը և վերանայել ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից կայացված ՏԴՀ/0074/01/15 դատավճռոր:

2016 թվականի հոկտեմբերի 4-ին դատարանը որոշել է կասեցնել գործի վարույթը և դիմել ՀՀ սահմանադրական դատարան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի, 66-րդ հոդվածի, 426.2-րդ և 426.3-րդ հոդվածների, 49-րդ գլխի նորմերի, ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի, 84-րդ հոդվածի, «Դատժից ազատելը» վերտառությամբ 12-րդ գլխի նորմերի, «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (2016 թվականի մայիսի 16-ի ՀՕ-83-Ն)՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու խնդրանքով:

3. Դիմողը, վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի մի շարք իրավական դիրքորոշումներ, գտնում է, որ

1) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերը, 426.2-րդ և 426.3-րդ հոդվածներն այնքանով, որքանով սահմանելով ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման հիմքերը, չեն նախատեսել արարքի հանցավորությունը և պատժելիությունը վերացնող օրենքին հետադարձ ուժ տալու նպատակով ուժի մեջ մտած դատավճիռները վերանայելու հնարավորություն, ինչպես նաև նույն օրենսգրքի՝ «Դատական որոշումների կատարումը» վերտառությամբ 49-րդ գլխի դրույթներն այնքանով, որքանով սահմանելով դատական ակտերի կա-

տարման փուլում ծագող հարցերի տեսակները, դրանց լուծման դատավարական կարգը և պայմանները, չեն նախատեսում արարքի հանցավորությունը և պատժելիությունը վերացնող օրենքին հետադարձ ուժ տալու հարցի լուծման հետ կապված որևէ դրույթ, հակասում են ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ, 68-րդ, 69-րդ, 72-րդ և 79-րդ հոդվածներին.

2) ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածը, 84-րդ հոդվածը, «Պատժից ազատելը» վերտառությամբ 12-րդ գլխի դրույթները և «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-83-Ն ՀՀ օրենքն այնքանով, որքանով չեն նախատեսում արարքի հանցավորությունը վերացնող օրենքի հիման վրա պատիժը կրող անձանց պատժից ազատելու առանձին կանոնակարգումներ, և հիշյալ հիմքով պատիժը կրելուց ազատված անձի դատվածությունը չի մարվում կամ հանվում օրենքի ուժով, ի տարբերություն այն անձանց, ովքեր դեռևս չեն դատապարտվել, և այն անձանց, ովքեր դատապարտվել և կրել են պատիժը, հակասում են ՀՀ Սահմանադրության 3-րդ, 28-րդ, 29-րդ, 72-րդ և 79-րդ հոդվածներին:

Հատ դիմողի՝

ա/ «... ՀՀ քրեական և քրեական դատավարական օրենսգրքերի համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանցում լիարժեք կանոնակարգված չեն ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածում ամրագրված դրույթների գործնական կիրառությունը պատշաճ պահովվելու համար անհրաժեշտ նյութաիրավական և դատավարական կառուցակարգերը, իսկ եղածներն ուղղակի խախտում են անձի իրավունքներն ու օրինական շահերը և դրանով իսկ ստեղծում են սահմանադրաիրավական ինտիր...»,

բ/ «... ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված նորմսկզբունքը, որը համահունչ է ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածին, ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր և հատուկ մասի հետազա դրույթներում մանրամասն կարգավորման չի ենթարկվել, որի արդյունքում ստեղծվել է իրավական անորոշություն և վտանգվել է ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի անմիջական կիրառությունը»:

Վերոհիշյալ հետևությունը դիմողը հիմնավորում է հետևյալ փաստարկներով. «...թեև քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածում նշվում է, որ արարքի հանցավորությունը վերացնող օրենքն ունի հետադարձ ուժ և տարածվում է նաև մինչ այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարքը կատարած այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը, առկայն ՀՀ քրեական օրենսգրքի պատժից ազատելու հիմքերը և պայմանները կանոնակարգող նորմերում նախատեսված չէ այդ հիմքով պատժից ազատելու որևէ դրույթ, ուստի հարց է ծագում, թե իրավակիրառողները և մասնավորապես դատարանները ՀՀ քրեական օրենսգրքի որ նորմի, դրույթի հիման վրա կամ որ դրույթով, նորմով դեկավարվելով պետք է

անձին ազատեն պատժից, այն ինչ իրավական հետևանքներ կարող է ունենալ անձի համար և այլն»:

Դիմողը պնդում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Պատժից ազատելը» վերտառությամբ 12-րդ գլխում, ինչպես նաև վիճարկվող օրենքում բացակայում են արարքի հանցավորությունը վերացնող օրենքի հիման վրա պատիժ կրող անձանց պատժից ազատելու վերաբերյալ դրույթներ։ Դիմողը նաև նշում է, որ «...արարքի հանցավորությունը վերանալու հիմքով անձին պատժից ազատելու դեպքում (որը կիրառվում է դատական պրակտիկայում) անձի համար առաջանում են անբարենպաստ իրավական հետևանքներ նույն հիմքով քրեական հետապնդման չենթարկվող և այն անձանց համեմատ, ովքեր կրել են պատիժը, սակայն ունեն դատվածություն, քանի որ պատժից ազատելու դեպքում, ի տարբերություն վերջին երկու դեպքերի, անձն ունենում է դատվածություն։ Ըստ դիմողի՝ նման տարբերակված մոտեցումը հետևանք է նրա, որ ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածում նախատեսված չէ, որ արարքի հանցավորությունը վերացնող օրենքին հետադարձ ուժ տալու հիմքով պատիժը կրելուց ազատվող անձը օրենքի ուժով համարվում է դատվածություն չունեցող կամ նրա դատվածությունը հանվում կամ մարվում է օրենքի ուժով։»

Դիմողը գտնում է, որ խնդրո առարկա իրավիճակում առաջանում է նաև խտրականության արգելման և օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքների ապահովման խնդիր, քանի որ՝ «...եթե քրեական գործով դեռևս դատավճիռ չի կայացվել կամ արդեն իսկ անձը կրել է իր նկատմամբ նշանակված պատիժը, ապա առաջին դեպքում՝ ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի Ս.Գրիգորյանի վերաբերյալ 2010 թվականի նոյեմբերի 5-ի Լ.Դ/0286/01/09 որոշման՝ այդ անձի նկատմամբ որոշում է կայացվում քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարծելու մասին՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով, այսինքն արդարացման հիմքով, իսկ երկրորդ դեպքում՝ օրենքի ուժով նա համարվում է դատվածություն չունեցող և ըստ այդմ՝ հավասարվում այն անձին, ով արդարացվածի կարգավիճակ է ձեռք բերում, մինչդեռ եթե անձը պատիժ է կրում, ապա արարքի հանցավորությունը վերացնող օրենքի հիման վրա անձին պատժից ազատելու դեպքում նա ունենում է դատվածություն, որպիսի պայմաններում, քայի այլ անձանց հետ անհավասար վիճակում հայտնվելուց, այդ անձի համար առաջանում են նաև դատվածության հետ կապված այլ իրավական հետևանքներ...»։

Դիմողը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12.1-րդ բաժնում ընդգրկված դրույթների և, մասնավորապես, 426.2-րդ և 426.3-րդ հոդվածների վերլուծության արդյունքում հանգում է այն եզրակացությանը, որ անձի վիճակը բարելավող նոր քրեական օրենքի ընդունումը չի հանդիսա-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նում նոր կամ նոր երեան եկած հանգամանք, և, հետեաբար, օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման հիմք չի հանդիսանում, որ նույն օրենսգրքի՝ դատական ակտերի կատարման փուլում ծագող հարցերը կանոնակարգող 49-րդ գլխի նորմերում բացակայում է հիշյալ օրենքին հետադարձ ուժ տալով անձին քրեական պատժից ազատելու վերաբերյալ որևէ դրույթ:

Դիմողը նշում է նաև, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում բացակայում են անձի վիճակը բարելավող քրեական օրենքին հետադարձ ուժ տալով դատավարական կարգին վերաբերող նորմեր:

4. Պատասխանողը նույնպես կարծում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում առկա է օրենքի բաց, ինչը չի ապահովում ՀՀ Սահմանադրության պահանջների լիակատար իրացումը:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար պատասխանողն արձանագրում է, որ թեև և ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածով, և՝ ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածով նախատեսվել է նյութափակական հիմք արարքի հանցավորությունը վերացնող օրենքների անձանց նկատմամբ հետադարձ ուժով կիրառվելու մասին, սակայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ այս ինստիտուտի կիրառման համար դատավարական կարգ ընդհանրապես նախատեսված չէ, ինչը, պատասխանողի կարծիքով, վտանգում է նյութափական նորմի պատշաճ իրացումը:

Օրենսդրական բացի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների ուսումնասիրության արդյունքներով պատասխանողն արձանագրում է, որ օրենսդրական բացը կարող է հակասահմանադրական ճանաչվել, եթե կոնկրետ գործով միաժամանակ առկա են Սահմանադրական դատարանի սահմանած չափանիշները՝ կոնկրետ սահմանադրական իրավունքի խախտում կամ այդ խախտման պոտենցիալ հնարավորություն և օրենսդրության մեջ այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքների բացակայություն։ Կոնկրետ դեպքում, ըստ պատասխանողի, առկա օրենսդրական բացը վտանգում է անձի՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածով (Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը), 63-րդ հոդվածով (Արդար դատաքննության իրավունքը) և 72-րդ հոդվածով (Հանցագործություններ սահմանելիս և պատիժներ նշանակելիս օրինականության սկզբունքը) երաշխավորված իրավունքների պատշաճ իրացումը, ինչն ստեղծում է սահմանադրական հիշյալ իրավունքների խախտման պոտենցիալ հնարավորություն, որը հնարավոր չէ հաղթահարել օրենսդրության մեջ առկա այլ իրավական երաշխիքներով։

Վերոգրյալի հիման վրա պատասխանողը գտնում է, որ ՀՀ Ազգային

ժողովի խնդիրն է լրացնել այդ բացը՝ ապահովելով ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների իրացման գործուն դատափրավական կառուցակարգ:

Համաձայնելով մինչև դատարանի վճիռ կայացնելը արարքի հանցավորությունը վերացնող օրենքի կիրառման ոլորտում գտնվող անձանց և պատժի կրման ժամանակ արարքի հանցավորությունը վերացնող օրենքի կիրառման ոլորտում գտնվող անձանց միջև անհավասար և խտրական վիճակի առաջացման վերաբերյալ դիմողի մոտեցմանը՝ պատասխանողը կարծիք է հայտնում, որ արարքի հանցավորությունը վերացնող օրենքի առկայության պայմաններում, անկախ այն կիրառելու դատավարական փուլից, անձը պետք է ստանա արդարացվածի կարգավիճակ, քանզի արարքի հանցավորությունը վերացնող օրենքով հաստատվում է հանցակազմի հատկանիշների բացակայության փաստը:

Վկայակոչելով իրավական անորոշության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի մի շարք իրավական դիրքորոշումներ՝ պատասխանողը կարծում է նաև, որ առկա օրենքի բացը հանգեցրել է իրավական անորոշության՝ իրավակիրառողի, այդ թվում՝ դատարանների համար: Ըստ պատասխանողի՝ կոնկրետ դեպքում օրենքի բացն ստեղծել է իրավական անորոշության այնպիսի մակարդակ, որ անզամ սույն գործով ՀՀ սահմանադրական դատարան դիմած դատարանը չի կարող հաղթահարել այն: Պատասխանող գտնում է, որ նման պայմաններում առավել ևս խոսք լինել չի կարող համապատասխան դրույթների իրավական որոշակիության մակարդակի բավարար լինելու մասին՝ քաղաքացիներին օրենքի պատվիրանների հասանելիության տեսակետից:

5. Սահմանադրական դատարանը հարկ է համարում նախ հստակեցնել սահմանադրափական վեճի շրջանակները և անդրադառնալ քննարկման առարկա դիմումի՝ ՀՀ Սահմանադրության /2005 թվականի փոփոխություններով/ 101-րդ հոդվածի 7-րդ կետով և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածով նախատեսված պահանջները բավարարելու հարցին: Խնդիրը նրանում է, որ նշված դրույթների պահանջներից մեկն այն է, որ դատարանների և գլխավոր դատախազի կողմից վիճարկվող նորմատիվ ակտը կամ դրա դրույթը պետք է **առնչվի վերջիններիս վարույթում գտնվող կոնկրետ գործին, նշված վարույթում գտնվող կոնկրետ գործով կիրառման ենթակա լինի:** Այսպես, դիմողի վարույթում գտնվող ԵԱՆԴ/0016/15/16 գործի փաստական հանգամանքներից բխում է, որ ՀՀ ԱՆ ՔՎՎ այլընտրանքային պատիժների կատարման բաժնի Ավան և Նոր Նորք բաժնունքի պետը և այնուհետև դատապարտյալ Ա. Կիրակոսյանը դատարան ներկայացրած համապատասխանաբար միջնորդությամբ և դիմումով խնդիրը են վերանայել դատապարտյալի նկատ-

մամբ կայացրած դատավճիռը, այն է՝ ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 11.02.2016թ. ՏԴ2/0074/01/15 օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, և դատապարտյալի նկատմամբ կիրառել վիճարկվող օրենքը:

Ուստիև, դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները բավարարելու հարցը պարզելու համար անհրաժեշտ է բացահայտել դատական ակտի վերանայման հասկացության բովանդակությունը՝ արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքը հետադարձությամբ կիրառելու հարցի համատեքստում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համակարգային վերլուծությունը վկայում է այն մասին, որ բացառությամբ մեկ դեպքի, որը չի առնչվում սույն գործի փաստական հանգամանքներին, մնացած բոլոր դեպքերում օրենսդիրն օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման հնարավորություն նախատեսել է միայն նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի շրջանակներում։ Բացի դրանից՝

- քրեական գործով դատարանի դատավճիռը և այլ որոշումները կարող են վերանայել միայն համապատասխան վերադաս դատարանները՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով /ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 6-րդ մաս/,

- արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքն ուժի մեջ մտնելուց հետո, եթե դատապարտյալը եռամսյա ժամկետում չի դիմում դատարան դատական ակտի վերանայման նպատակով, ապա դատախազը եռամսյա ժամկետը լրանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, համապատասխան միջնորդություն է ներկայացնում դատարան / ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասություն/,

- յուրաքանչյուր դատապարտյալ ունի սահմանված կարգով վերադաս դատարանի կողմից դատավճռի և որոշման վերանայման իրավունք / ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 7-րդ մաս/:

Սահմանադրական դատարանի գնահատմամբ դիմողի՝ վարույթում գտնվող կոնկրետ գործն անմիջականորեն առնչվում է արարքի պատժելիությունը վերացնող օրենքը հետադարձ ուժով կիրառելու արդյունքում դատական ակտի վերանայման հարցին, և վիճարկվող դրույթների և իրավական ակտի շրջանակներից դիմողի վարույթում գտնվող կոնկրետ գործին կարող են առնչվել միայն ՀՀ քրեական օրենսգրքի «Քրեական օրենքի հետադարձ ուժը» վերտառությամբ 13-րդ հոդվածը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի «Նոր երևան եկած

կամ նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձինք» վերտառությամբ 426.2-րդ հոդվածը և արարքի պատմելիությունը վերացնող ՀՕ-83-Ն օրենքը:

Դիմողի կողմից վիճարկվող մյուս դրույթներն իր վարույթում գտնվող գործին չեն առնչվում: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերը, ընդհանուր առմամբ, վերաբերում են այն բացառիկ դեպքերին, երբ օրենսդիրը թույլատրում է օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ որոշման և քրեական հետապնդման մարմնի գործի վարույթը կարգելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման առկայության պայմաններում քրեական գործը նորոգելը, եթե այն կարող է հանգեցնել անձի վիճակի վատթարացման, մինչդեռ տվյալ դեպքում արարքի պատմելիությունը վերացնող օրենքի հետադարձ կիրառումը բարելավում է անձի վիճակը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածը զիսավորապես ներառում է արդարացվածի իրավական կարգավիճակին առնչվող իրավակարգավորումներ, որոնք ևս անմիջականորեն չեն առնչվում արարքի պատմելիությունը վերացնող օրենքը հետադարձ կիրառումը բարելավում է անձի վիճակը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդվածով ամրագրված իրավակարգավորումը վերաբերելի է նոր երևան եկած հանգամանքների հետևանքով դատական ակտերի վերանայման հիմքերին և ժամկետներին, մինչդեռ արարքի հանցավորությունը և պատմելիությունը վերացնող օրենքին հետադարձ ուժ տալու նպատակով ուժի մեջ մտած դատավճիրները վերանայելու հնարավորություն սահմանելու հարցն այդ հոդվածի կարգավորման առարկայից դուրս է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ արարքի պատմելիությունը վերացնող օրենքի ուժի մեջ մտնելու հանգամանքն իր բնույթով և քրեադատավարական օրենսդրության ողջ տրամաբանության շրջանակներում նոր, այլ ոչ թե նոր երևան եկած հանգամանք է հանդիսանում, և նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման հիմքերը սահմանված են այլ հոդվածով՝ ամրագրված իրավակարգավորումների շրջանակներում՝ ՀՀ ՔԴՕ 426.4-րդ հոդվածով, որի սահմանադրականության հարցը դիմոնի կողմից չի բարձրացվում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ գլխի նորմերը, ինչպես նաև դատվածության իրավական հետևանքներին, դատվածությունը մարելու և հանելու հարցերին առնչվող ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածը և պատմից ազատելու հարցերին նվիրված՝ 12-րդ գլխի նորմերը նույնպես անմիջականորեն չեն առնչվում արարքի պատմելիությունը վերացնող օրենքը հետադարձ ուժով կիրառելու արդյունքում դատական ակտի վերանայման հարցին:

Հիմք ընդունելով վերոգրյալը ՀՀ սահմանադրական դատարանը գտ-

նում է, որ դիմումը մասամբ չի բավարարում «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, և սույն գործի վարույթը մասնակի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի, 66-րդ հոդվածի, 426.3-րդ հոդվածի, 49-րդ գլխի նորմերի, ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի, «Պատժից ազատելը» վերտառությամբ 12-րդ գլխի նորմերի մասով ենթակա է կարձման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետի և 32-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքերով։

Դիմումի ուսումնասիրությունից բխում է, որ դիմողը բարձրացնում է արարքի պատժելիությունը վերացնող օրենքը հետադարձությամբ կիրառելու գործնքացում օրենքի բացի և դրանով պայմանավորված՝ իրավական անորոշության խնդիր։ Հետևաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 13-րդ, 426.2-րդ հոդվածների և վիճարկվող ՀՕ-83-Ն օրենքի սահմանադրականության հարցը սույն գործով քննության առարկա կդարձվի բացառապես արարքի պատժելիությունը վերացնող օրենքը հետադարձությամբ կիրառելու մասով։

6. ՀՀ Սահմանադրության՝ «Հանցագործություններ սահմանելիս և պատիժներ նշանակելիս օրինականության սկզբունքը» վերտառությամբ 72-րդ հոդվածի երրորդ նախադասության համաձայն՝ **արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ**։

Սույն սահմանադրաբարավական վեճի շրջանակներում Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ հիշյալ դրույթի բովանդակությանը և դրա համատեքստում քննարկել արարքի պատժելիությունը վերացնող օրենքը հետադարձությամբ կիրառելու արդյունքում դատական ակտի վերանայման խնդիրը։ Այդ կապակցությամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ.

**առաջին՝** սահմանադիրն արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքների համար նախատեսում է վերջիններին՝ ժամանակի մեջ գործողության հատուկ կարգ, այն է՝ այդպիսի օրենքները տարածվում են մինչ այդ օրենքների ուժի մեջ մտնելը ծագած համապատասխան հարաբերությունների վրա,

**երկրորդ՝** ի տարբերություն անձի վիճակը բարելավող այլ օրենքների, սահմանադիրն արարքի պատժելիությունը վերացնող օրենքի հետադարձությունը չի պայմանավորում վերջինիս՝ այդ օրենքներով նախատեսված լինելու հանգամանքով,

**երրորդ՝** անմիջական գործողությամբ օժտված սահմանադրաբարավական վերոհիշյալ դրույթով ամրագրված իրավակարգավորման շրջանակներում սահմանադիրն արարքի պատժելիությունը վերացնող օրենքը հետադարձությամբ կիրառելու պահանջը տարածում է քրեադատա-

վարական և քրեակատարողական բոլոր գործընթացներում ներգրավված, ի թիվս այլոց, այն անձանց վրա, ում արարքի պատժելիությունը վերացվել է, և սահմանադրախրավական այս սկզբունքի գործողությունը չի պայմանավորում քրեադատավարական կամ քրեակատարողական այս կամ այն փուլով, ինչն արտացոլվել է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասում, որի համաձայն՝ արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն։

չորրորդ՝ ելնելով մարդու արժանապատվության անխախտելիության և մարդու անօտարելի արժանապատվության՝ իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմք հանդիսանալու սահմանադրախրավական պահանջներից և հիմնական իրավունքների անմիջականորեն գործողության սկզբունքից՝ անձի նկատմամբ արարքի պատժելիությունը վերացնող օրենքը հետադարձությամբ կիրառելը ենթադրում է, որ վերանում են արարքի պատժելիություն սահմանող օրենքի կիրառման արդյունքում անձի համար առաջացած բոլոր անբարենպաստ իրավական հետևանքները, այսինքն՝ անձի նկատմամբ արարքի պատժելիությունը վերացնող օրենքի հետադարձ կիրառումը վերականգնվում է մինչև արարքի պատժելիություն սահմանող օրենքի կիրառումն առկա վիճակը,

իինգերորդ՝ արարքի պատժելիությունը վերացնող օրենքի կիրառումը պետք է իրականացվի դատարանի կողմից արարքի համար պատիժ սահմանող օրենքի կիրառմամբ ընդունված դատավճռի վերանայման միջոցով։

Արարքի պատժելիությունը վերացնող օրենքի հետադարձ ուժի կիրառումն ապահովելու վերաբերյալ իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ արարքի պատժելիության վերացումը ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից /տես ՀՀ վճռաբեկ դատարանի 05.11.2010թ. ԼԴ/0286/01/09 որոշումը/ զնահատվում է որպես արարքի մեջ հանցակազմի բացակայություն, ինչը ենթադրում է, որ ապաքրեականացված արարքի փաստով քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարձման՝ հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի պահանջները։ Հատկանշական է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի հիշյալ իրավական դիրքորոշումը վերաբերելի է միայն քրեական գործով մինչդատական և դատական վարույթների շրջանակներում անձի նկատմամբ արարքի պատժելիությունը վերացնող օրենքը հետադարձությամբ կիրառելու հարցին։ Ընդ որում, ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի համակարգային վերլուծությունը վկայում է այն մասին, որ քրեական գործով մինչդատական վարույթի շրջանակներում հիշյալ օրենքի կիրառումն իրականացվում է քրեական հետապնդման մարմնի քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու, առաջադրված մեղադրանքը վերացնելու կամ մեղադրանքից հրաժարվելու մասին որոշումներով, իսկ դատական վարույթի շրջանակներում՝ դատարանի՝ քրեական գործի վարույթը կարձելու մասին որոշմամբ,

**Վեցերորդ՝** Սահմանադրության վերոհիշյալ դրույթից բխում է, որ արարքի պատժելիությունը վերացնող օրենքի կիրառման արդյունքում դատարանի կողմից դատավճռի վերանայման հիմքն արարքի պատժելիությունը վերացնող օրենքի ուժի մեջ մտնելու հանգամանքն է,

**յոթերորդ՝** պատիժը վերացնող օրենքը հետադարձությամբ կիրառելն անմիջականորեն առնչվում է անձի այնպիսի հիմնական իրավունքներին, ինչպիսիք են դատական պաշտպանության և արդար դատարքնության իրավունքները, և ինչպես հանցագործություններ սահմանելու և պատիժներ նշանակելու, այնպես էլ արարքի պատժելիությունը վերացնելու գործընթացները պետք է հիմնված լինեն ոչ միայն ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածով ամրագրված՝ հանցագործություններ սահմանելիս և պատիժներ նշանակելիս օրինականության սկզբունքի, այլ նաև հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության, հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համաչափության և որոշակիության սահմանադրահրավակական պահանջների անմիջական գործողության ապահովման վրա, քանի որ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

7. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համակարգային վերլուծությունը վկայում է այն մասին, որ օրենսդիրը ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածով և ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածով նախատեսված արարքի հանցագործությունը վերացնող օրենքների՝ անձանց նկատմամբ հետադարձ ուժով կիրառելու վերաբերյալ հատուկ քրեադատավարական կարգ չի սահմանում, սակայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի շրջանակներում ամրագրում է, որ արարքի հանցագործությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքն ուժի մեջ մտնելուց հետո, եթե դատապարտայալը եռամսյա ժամկետում չի դիմում դատարան դատական ակտի վերանայման նպատակով, ապա դատախազը եռամսյա ժամկետը լրանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, համապատասխան

**միջնորդություն է ներկայացնում դատարան:**

Սույն գործի շրջանակներում առկա է օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, իսկ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման հնարավորությունը, բացառությամբ մեկ դեպքի, որը չի առնչվում սույն գործի փաստական հանգամանքներին, օրենսդիրը պայմանավորում է միայն նոր կամ նոր երևան եկած հանգամանքների առկայությամբ: Ուստի Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող 426.2-րդ հոդվածի հետ համակարգային փոխապակցվածության մեջ գնահատել նաև նույն օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված իրավակարգավորումների սահմանադրականության հարցը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող 426.2-րդ հոդվածը, որպես նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձինք, ի թիվս այլոց, նշում է այդ հանգամանքին առնչվող գործին մասնակցած շահագրգուված անձանց (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի հիշյալ դրույթի իմաստով՝ դատապարտյալները), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին և նրա տեղակալներին (սահմանադիրը ՀՀ դատախազությունը դիտարկում է որպես միասնական համակարգ, ուստի Սահմանադրական դատարանը խնդրահարույց չի համարում այն հանգամանքը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածը որպես պատիճը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքն ուժի մեջ մտնելու հիմքով դատական ակտի վերանայման համար դատարան դիմող սույնելու նշում է դատախազին, իսկ նույն օրենսգրքի 426.2-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Գործերի վերանայման հիմքերն ու ժամկետները նոր հանգամանքների հետևանքով» վերտառությամբ 426.4-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանաբար սահմանում է.

«1. Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.

1) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը տվյալ քրեական գործով դատարանի կիրառած օրենքի դրույթը ձանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն ձանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրամիրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ.

2) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազ-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

գային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը.

2.1) Արդարադատության խորհուրդն ընդունել է որոշում, որով տվյալ դատական ակտը կայացրած դատավորը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով.

3) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված այլ նոր հանգամանքների դեպքերում...»:

Վերոգրյալի կապակցությամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ, արարքի պատմելիությունը վերացնող օրենքը հետադարձությամբ կիրառելու հատուկ քրեադատավարական կարգի բացակայության պայմաններում, մինչև ՀՀ Ազգային ժողովի կողմից համապատասխան իրավակարգավորումների հստակեցումը և իրավակարգավորման բացի հաղթահարումը, ելնելով ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի անմիջական գործողությունից և վերջինիս՝ սույն որոշման մեջ բացահայտված բովանդակությամբ կիրառումն ապահովելու, ինչպես նաև անձի հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանությունն ապահովելու համար իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում արարքի պատմելիությունը վերացնող օրենքի հետադարձ կիրառումը պատիճ կրող անձանց նկատմամբ անհրաժեշտ է իրականացնել նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վերաբերյալ իրավակարգավորումների շրջանակներում՝ արարքի պատմելիությունը վերացնող օրենքի ուժի մեջ մտնելը դիտարկելով որպես դատական ակտը վերանայելու համար նոր հանգամանք:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի շրջանակներում դատական ակտերի՝ նոր հանգամանքներով վերանայման հիմքերի ցանկում, ի թիվս այլնի, նախատեսված է նաև հետևյալ հիմքը՝ «ուժի մեջ է մտել արարքի հանցավորությունը վերացնող օրենք.» (տես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի «Նոր հանգամանքներով վերանայման հիմքերը» վերտառությամբ 442-րդ հոդվածը):

Ելնելով գործի քննության արդյունքներից և դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետով, 60-րդ հոդվածի 1-ին կետով, 63, 64 և 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ռ Ո Շ Ե Յ**.

1. «Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի, 66-րդ հոդվածի, 426.2-րդ և 426.3-րդ հոդվածների, 49-րդ գլխի նորմերի, ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի, 84-րդ հոդվածի, «Պատժից ազատելը» վերտառությամբ 12-րդ գլխի նորմերի, «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (2016 թվականի մայիսի 16-ի ՀՕ-83-Ն) Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասնակի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի, 66-րդ հոդվածի, 426.3-րդ հոդվածի, 49-րդ գլխի նորմերի, ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի, 12-րդ գլխի նորմերի մասով, կարձել:

2. ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-83-Ն ՀՀ օրենքը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

4. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.2-րդ հոդվածը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցվածության մեջ գտնվող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանն այնպիսի սահմանադրաբարվական բովանդակությամբ, համաձայն որի՝ ելնելով ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի անմիջական գործողությունից՝ արարքի պատժելիությունը վերացնող օրենքն ուժի մեջ մտնելն իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում պետք է ընկալվի որպես նոր հանգամանք, և օրինական ուժի մեջ մտած դատական ակտը նոր հանգամանքի հիմքով ենթակա է վերանայման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով:

5. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտած դատական ակտը նոր հանգամանքի հիմքով ենթակա է վերանայման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով:

## ՆԱԽԱԳԱՀՈՂ

## Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

14 փետրվարի 2017 թվականի  
ՄԴՈ-1348



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2016 թվականի օգոստոսի 12-ին ԲՐԱՋԻԼԻԱՅՈՒՄ  
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՐԱՋԻԼԻԱՅԻ ԴԱՇԱՅԻՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ՝

Քաղ. Երևան

28 փետրվարի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալյայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թռիյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (գեկուցող).

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Գ. Մելքոնյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնքաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2016 թվականի օգոստոսի 12-ին Բրազիլիայում ստորագրված՝ Հայաստանի Հանրա-

պետության կառավարության և Բրազիլիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև տեխնիկական համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2017 թվականի փետրվարի 8-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ռ Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության և Բրազիլիայի Դաշնային Հանրապետության կառավարության (Կողմեր) միջև տեխնիկական համագործակցության մասին համաձայնագիրը (Համաձայնագիր) ստորագրվել է 2016 թվականի օգոստոսի 12-ին Բրազիլիայում:

Համաձայնագրի նպատակն է Կողմերի նախանշած գերակա ոլորտներում տեխնիկական համագործակցության խթանումը:

Համաձայնագրի ներքո տեխնիկական համագործակցության ծրագրերը և նախագծերը կիրականացվեն լրացուցիչ համաձայնագրերի միջոցով:

Կողմերը համատեղ կամ առանձին կֆինանսավորեն իրենց հաստատած ծրագրերը, նախագծերը և գործողությունները և կարող են անհրաժեշտ ֆինանսավորում ներգրավել միջազգային կազմակերպություններից, հիմնադրամներից, տարածաշրջանային ու միջազգային ծրագրերից և այլ դոնորներից:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

ա) Երաշխավորել, որ Համաձայնագրի իրականացման ընթացքում ձեռքբերված փաստաթղթերը, տեղեկությունները և այլ տվյալները հասանելի չլինեն կամ չփոխանցվեն երրորդ կողմերի՝ առանց բրազիլական կողմի գրավոր համաձայնությունը նախապես ստանալու,

բ) Փոխադարձության սկզբունքի հիման վրա բրազիլական կողմի նշանակած անձնակազմին, ինչպես նաև նրանց խնամառուներին, եթե այդպիսիք կան, ովքեր Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ չեն կամ օտարերկրացիներ են, որոնք Հայաստանի Հանրապետության տարածքում մշտական բնակության իրավունք ունեն, Հայաստանի Հանրապետության տարածքում իրենց պարտականություններն իրականացնելու համար՝

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- տրամադրել դիվանագիտական ուղիներով հայցված վիզաներ՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառելի կանոններին համապատասխան.

- ազատել անձնական իրերի նկատմամբ գանձվող՝ ներմուծման հարկերից և այլ տուրքերից կեցության առաջին վեց ամսվա ընթացքում՝ բացառությամբ այն հարկերի, որոնք վերաբերում են սկզբնական բնակչությամբ՝ պահեստավորման, փոխադրման կամ նմանատիպ այլ ծառայություններին, եթե Հայաստանի Հանրապետությունում օրինական մնալու ժամանակահատվածը գերազանցում է մեկ տարին, ինչպես նաև տրամադրել նույն ազատումը և սահմանափակումները, եթե հիշյալ ապրանքները վերաբերություն են.

- ազատել Հայաստանի Հանրապետության տարածքում աշխատավարձերից գանձվող եկամտահարկից, եթե անձն աշխատանքի է ընդունվում բրազիլական կողմից հաստատությունների կողմից, իսկ Հայաստանի Հանրապետության հաստատությունների կողմից վճարվող վարձատրության կամ օրապահիկի դեպքում կիրառել Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը.

- տրամադրել անձեռնմխելիություն Համաձայնագրի ներքո ի պաշտոնե կատարած ցանկացած գործողության կազմակցությամբ դատական հետապնդումից.

- ճգնաժամային իրավիճակում տրամադրել հայրենիք վերադառնալու միջոցներ,

գ) այն ապրանքները, սարքավորումները և այլ իրերը, որոնք Համաձայնագրի ներքո ծրագրերի, նախագծերի և գործողությունների իրականացման նպատակով տրամադրել է բրազիլական կողմը, համապատասխան լրացուցիչ համաձայնագրերով սահմանված կարգով, ազատել արտահանման և ներմուծման հարկերից, տուրքերից և այլ գանձումներից՝ բացառությամբ մաքսային գանձումների, պահեստավորման, փոխադրման և հարակից այլ ծառայությունների դիմաց վճարների,

դ) երաշխավորել, որ Համաձայնագրի շրջանակում ծրագրերի, նախագծերի և գործողությունների իրականացման համար ապրանքների ներմուծման և արտահանման դեպքում ծրագիրն իրականացնող Հայաստանի Հանրապետության պետական հաստատությունը կրի այդ ապրանքների մաքսագերծման համար անհրաժեշտ միջոցների ձեռնարկման պատասխանատվությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածի դրույթներին և, ի թիվս այլնի, նպա-

տակառուղղված են ամրապնդելու Կողմերի ժողովուրդների բարեկամական կապերը և զարգացնելու տեխնիկական առաջընթացին նպաստող համագործակցությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝

**Ո Ռ Շ Ե Յ 8.**


1. 2016 թվականի օգոստոսի 12-ին Բրազիլիայում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Բրազիլիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև տեխնիկական համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

#### ՆԱԽԱԳԱՀՈՂ

#### Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

28 փետրվարի 2017 թվականի  
ՍԴՈ-1349



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

1990 թվականի Հունիսի 26-ին ՍՏԱՄԲՈՒԼՈՒՄ ՍՈՒՐԱԳՐՎԱԾ՝  
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ (ԿԻՑ  
ՀԱՅԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ**  
**ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱԴՐՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ**  
**ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

28 փետրվարի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Վ. Բալյայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ ՀՀ կառավարությանն առընթեք պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Վ. Միրումյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005թ. փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնքաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1990 թվականի հունիսի 26ին Ստամբուլում ստորագրված՝ Ժամանակավոր ներմուծման մասին կոնվենցիայում (կից հայտարարությամբ) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2017 թվականի փետրվարի 7-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցի գրավոր բացատրությունը, հետազոտելով կոնվենցիան (կից հայտարարությամբ) և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. Ժամանակավոր ներմուծման մասին կոնվենցիան (կից հայտարարությամբ) (այսուհետ՝ «Կոնվենցիա») ստորագրվել է 1990թ. հունիսի 26-ին՝ Ստամբուլում:

Կոնվենցիայի նպատակն է դյուրացնել ժամանակավոր ներմուծումը՝ պարզեցնելով եւ ներդաշնակեցնելով ընթացակարգերը, հետապնդելով տնտեսական, մարդասիրական, մշակութային, սոցիալական կամ գրոսաշրջային նպատակներ:

2. Կոնվենցիայի համաձայն Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետևյալ հիմնական պարտավորությունները.

- տրամադրել ժամանակավոր ներմուծման ռեժիմ՝ Կոնվենցիայի հավելվածներում նշված ապրանքների (ներառյալ՝ տրանսպորտային միջոցների) համար՝ ներմուծման տուրքերի եւ հարկերի վճարումից ամբողջական պայմանական ազատումով եւ առանց ներմուծման արգելքների կամ տնտեսական բնույթի սահմանափակումների կիրառման (հոդված 2),

- ներպետական մարսային փաստաթղթերի փոխարեն եւ որպես Կոնվենցիայի «Ա» հավելվածի 8-րդ հոդվածում նշված գումարների համար սահմանված երաշխիք, ընդունել վավեր համարվող ժամանակավոր ներմուծման փաստաթղթերը, որոնք տրամադրվում եւ օգտագործվում են այն ապրանքների համար (այդ թվում՝ տրանսպորտային միջոցների), որոնք ժամանակավոր ներմուծվել են Կոնվենցիայի մյուս հավելվածների համաձայն (հոդված 5),

- կասեցնել վերաբրտահանումն առգրավման ժամանակահատվածով, եթե ժամանակավոր ներմուծման իրավունք ստացած ապրանքները (այդ թվում՝ տրանսպորտային միջոցները) չեն կարող վերաբրտահանվել առգրավման հետեւանքով, բացառութամբ մասնավոր անձանց հայցի հիման վրա կատարված առգրավման (հոդված 7, մաս 3),

- նվազագույնի հասցնել Կոնվենցիայով նախատեսված պայմանների առնչությամբ պահանջվող մաքսային ձեւակերպումները, անհապաղ հրապարակել այդ ձեւակերպումներին առնչվող բոլոր կանոնակարգերը (հոդված 15),

- կիրառել օրենսդրությամբ նախատեսված պատժամիջոցներ Կոնվեն-

ցիայի դրույթների ցանկացած խախտման դեպքում, եթե խախտումը կատարվել կամ հայտնաբերվել է Հայաստանի Հանրապետության տարածքում (հոդված 20),

- համապատասխան պահանջի դեպքում եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շրջանակներում, Կոնվենցիալի դրույթների իրականացման նպատակով տրամադրել անհրաժեշտ տեղեկություններ Կոնվենցիալի անդամ պետություններին (հոդված 21):

3. Կոնվենցիայի բաղկացուցիչ մասն են կազմում «Ա», «Բ.1»-«Բ.9», «Գ», «Դ» և «Ե» հավելվածներն ու համապատասխան ենթահավելվածները: «Ա» հավելվածում սահմանված են ժամանակավոր ներմուծման համար անհրաժեշտ գործողությունները, մաքսային մարմինների և երաշխիքային ընկերությունների փոխգործակցության կարգը, նրանց պարտավորությունների և լիազորությունների, ինչպես նաև մաքսային ձեւակերպումների ընթացակարգերը: «Բ.1»-«Բ.9», «Գ», «Դ» և «Ե» հավելվածներում նկարագրված են այն ապրանքահամերն ու միջոցառումները, որոնց շրջանակներում պայմանավորվող կողմերն իրականացնում են Կոնվենցիայով սահմանված ժամանակավոր ներմուծման գործառույթներ:

4. Կոնվենցիային միանալու նպատակահարմարության դեպքում Հայաստանի Հանրապետության կողմից պետք է նշվի ընդունելի հավելվածները, սակայն «Ա» հավելվածի եւ առնվազն մեկ այլ հավելվածի ընդունումը համարվում է պարտադիր (հոդված 24, կետ 4):

Կոնվենցիայի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության հայտարարության համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունն ընդունում է Կոնվենցիայի «Ա», «Բ.1», «Բ.2», «Բ.3» և «Բ.5» հավելվածները:

5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկա Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրությամբ պետության առջև դրված սահմանադրախրավական ինուիրություններին:

Ելմելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005թ. փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ռ Ո Շ Ե Յ**.


1. 1990 թվականի հունիսի 26ին Ստամբուլում ստորագրված՝ Ժամանակավոր ներմուծման մասին կոնվենցիայում (կից հայտարարությամբ) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005թ. փոփոխություններով) 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

28 փետրվարի 2017 թվականի  
ՍԴՈ-1350

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2016 թվականի նոյեմբերի 30-ին սուսպազուս ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ  
ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ  
(ՈՒԺԵՐԻ) ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ  
ԶՈՐՔԵՐԻ ՈՒԺԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ԽՄԲԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՍ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

28 փետրվարի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Նազարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնքաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2016 թվականի նոյեմբերի 30-ին Մուկվայում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետու-

թյան և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի զորքերի (ուժերի) միացյալ խմբավորման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ՝ գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 07.02.2017թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ռ Զ Ե Ց**.

1. Համաձայնագիրն (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2016 թվականի նոյեմբերի 30-ին Մոսկվայում՝ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի զորքերի (ուժերի) միացյալ խմբավորման ստեղծման նպատակով։ Համաձայնագրով Հավաքական անվտանգության Կովկասյան տարածաշրջանում Կողմերի անվտանգության ապահովման նպատակով Կողմերն ստեղծում են Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի զորքերի (ուժերի) միացյալ խմբավորում։

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը համաձայնում է, որ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի զորքերի (ուժերի) միացյալ խմբավորումը ուժի մեջ մտնելու ու միջոցները մարտական պատրաստականության բարձր աստիճանի բերելու, ազգային բաղադրիչները միացյալ հրամանատարությանը վերանքակայեցնելու, խմբավորումը ծավալելու և կիրառելու կարգը սահմանվի Համաձայնագրին կից և դրա անբաժանելի մասը կազմող՝ «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի զորքերի (ուժերի) միացյալ խմբավորում մասին» կանոնակարգով։

3. Հիշյալ կանոնակարգով նախատեսվում է, որ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի զորքերի (ուժերի) միացյալ խմբավորումը, այսուհետև՝ Միացյալ խմբավորում, նախատեսված է տարածաշրջանում ռազմական անվտանգության ապահովման համար։ Կանոնակարգով նախատեսվում է նաև, որ

- Միացյալ խմբավորման կիրառման պլանավորումը կատարվում է խաղաղ ժամանակ Կողմերի զինված ուժերի գլխավոր շտաբների համա-

տեղ հրահանգի հիման վրա,

- Միացյալ խմբավորման կիրառման պլանը մշակվում է Միացյալ խմբավորման հրամանատարության և Հայաստանի Հանրապետության տարածքում տեղակայված ռուսաստանյան ռազմակայանի կազմից հատկացված օպերատիվ խմբի կողմից և հաստատվում է Կողմերի գինված ուժերի գլխավոր շտաբների պետերի կողմից,

- Միացյալ խմբավորման հրամանատարի համար օպերատիկ հրահանգը մշակվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զինավոր շտարի օպերատիկ վարչության և հարավային ռազմական օկրուզի հրամանատարության կողմից և ստորագրվում է Կողմերի զինված ուժերի զինավոր շտարների պետերի կողմից,

- համակրողմանի ապահովման տեսակների վերաբերյալ հրահանգային (կարգադրական) փաստաթղթերը մշակվում են Հայաստանի Հանրապետության գինված ուժերի գլխավոր շտաբի, հարավային ռազմական օկրուգի համապատասխան վարչությունների (ծառայությունների, բաժինների) կողմից և ստորագրվում են՝ Հայաստանի Հանրապետության գինված ուժերի գլխավոր շտաբի օպերատիվ վարչության պետի և Հայաստանի Հանրապետության գինված ուժերի գորատեսակների (վարչությունների, ծառայությունների, բաժինների) համապատասխան պետերի կողմից, հարավային ռազմական օկրուգի շտաբի պետի և հարավային ռազմական օկրուգի գորատեսակների (վարչությունների, ծառայությունների) համապատասխան պետերի կողմից,

- Միացյալ խմբավորման կառավարման համար ստեղծվում է Միացյալ հրամանատարություն, որը զիսավորում է Միացյալ խմբավորման հրամանատարը, որին նշանակում և ազատում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գերազույն զիսավոր հրամանատարը՝ համաձայնեցնելով Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի գերազույն զիսավոր հրամանատարի հետ,

- Հայաստանի Հանրապետության լիազորված մարմինները և Ռուսաստանի Դաշնության լիազորված մարմիններն (այսուհետև՝ Լիազորված մարմին) ամեն տարի պլանավորում են գորքերի (ուժերի) օպերատիվ և մարտական պատրաստության համատեղ միջոցառումներ, պատասխանատվություն են կրում պլանների մշակման, բայց բովանդակության, ներգրավվող գորքերի (ուժերի) կազմի, միջոցառումների անցկացման կարգի և դրանց համաձայնեցման, ինչպես նաև դրանց իրազործման համար,

- Միացյալ հրամանատարությունը կազմավորվում է ազգեստայի անմիջական սպառնալիքի դեպքում կամ պատերազմի ժամանակ, հանդիսանում է Միացյալ խմբավորման ռազմական կառավարման վերը և նախատեսված է Միացյալ խմբավորման վրա դրված

խնդիրների լրտման կազմակերպման ու ղեկավարման համար, Միացյալ խմբավորման հրամանատարին անմիջականորեն և օպերատիվ կարգով ենթակա գորքերի (ուժերի) կառավարման համար,

- Միացյալ խմբավորման կիրառման համար որոշումների ընդունումն իրականացվում է ռազմական անվտանգության ապահովման նպատակ-ներով, - Միացյալ խմբավորման տեղաբաշխման և կիրառման համար որոշումը համատեղ ընդունվում է Հայաստանի Հանրապետության գին-ված ուժերի գերազույն գլխավոր հրամանատարի և Ռուսաստանի Դաշնության գին-ված ուժերի գերազույն գլխավոր հրամանատարի կողմից,

- Միացյալ խմբավորման տեղաբաշխման և կիրառման համար որոշումների ընդունման մեջանիզմը նախատեսում է Կողմերի պետական և ռազմական կառավարման մարմինների գործունեության և փոխգործակցության հետևողականություն,

- Լիազորված մարմինները Կողմերի գործադիր իշխանության շահագրգիռ մարմինների հետ համատեղ մշակում և սահմանված կարգով ուսումնասիրման համար Հայաստանի Հանրապետության գին-ված ուժերի գերազույն գլխավոր հրամանատարին և Ռուսաստանի Դաշնության գին-ված ուժերի գերազույն գլխավոր հրամանատարին են ներկայացնում Միացյալ խմբավորման կիրառման և տեղաբաշխման մասին համատեղ որոշման նպաստիքը:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է նաև հետևյալ պարտավորությունները.

• Համաձայնագրի իրագործման նպատակով որպես Լիազորված մարմին նշանակել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը (հոդված 3),

• ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության Լիազորված մարմինը Ռուսաստանի Դաշնության Լիազորված մարմնի հետ համատեղ սահմանեն Միացյալ խմբավորման կազմը ռազմաքաղաքական իրավիճակի համատեղ վերլուծության և համաձայնեցված եզրահանգումների հիման վրա՝ հաշվի առնելով հնարավոր սպառնալիքների ուղղվածությունը, և գորքերի (ուժերի) կիրառման ընդհանուր մտահղացման հիման վրա (հոդված 4, կետ 1),

• ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության Լիազորված մարմինը Ռուսաստանի Դաշնության Լիազորված մարմնի հետ համատեղ սահմանեն խաղաղ ժամանակ փոխգործակցության կազմակերպման կարգը ռազմաքաղաքական իրավիճակի վերլուծության, միացյալ խմբավորման կիրառման ընդհանուր մտահղացման մշակման, դրա կիրառման համատեղ պլանավորման ժամանակ (հոդված 6, կետ 1),

• ազրեսիայի անմիջական սպառնալիքի ժամանակաշրջանում և պատերազմի ժամանակ Հայաստանի Հանրապետության գին-ված ուժերի

և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի միջև փոխգործակցության կազմակերպման նպատակով ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության Լիազորված մարմինը նախատեսի օպերատիվ խմբերի ուղարկումը Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբ և Ռուսաստանի Դաշնության հարավային ռազմական օկրուզի շտաբ (հոդված 6, կետ 2),

• ինքնուրույն իրականացնել Միացյալ իմբավորման կազմի մեջ առանձ նացված ՀՀ զորքերի (ուժերի) նյութատեխնիկական և ֆինանսական ապահովումը, ստեղծել և լրացնել նյութական միջոցների պաշար-ները մինչև համաձայնեցված շահարքանակները,

• ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության Լիազորված մարմինը Ռուսաստանի Դաշնության Լիազորված մարմնի հետ համատեղ աշխատանքներ իրականացնեն զորքերի, հետախուզության և զենքի, կառավարման մարմինների հաշվողական կենտրոնների կառավարման ավտոմատացված համակարգերի, տեխնիկական և նյութական բազայի միասնականացումն ապահովելու, ինչպես նաև մարտական գործողությունների և օպերատիվ-մարտավարական ինժիրների մաքեմատիկական մոդելների մշակումներն ապահովելու ուղղությամբ (հոդված 8, կետ 2):

5. Կողմերը փոխադարձաբար պարտավորվում են.

- Համաձայնագրի իրազործման ընթացքում փոխանցվող ցանկացած տեղեկություն, անկախ դրա տրամադրման ձևից, օգտագործել բացառապես Համաձայնագրի նպատակներին համապատասխան, մի Կողմի կողմից ստացված տեղեկությունը չօգտագործել ի վնաս մյուս Կողմի (հողված 9, պարբերություն 1),

- Երրորդ կողմի չփոխանցել Համաձայնագրի իրազործման ընթացքում ստեղծված կամ ստացված տեղեկությունը՝ առանց մյուս Կողմի նախնական գրավոր համաձայնության (հոդված 9, պարբերություն 2):

6. Համաձայնագրում հղում է կատարվում մի շարք միջազգային պայմանագրերի, մասնավորապես.

- 1995 թվականի մարտի 16-ի՝ «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին» պայմանագրին (ՀՀ կողմից վավերացվել է Ազգային ժողովի 1997 թվականի ապրիլի 29-ի ԱԺՌ-Ն-175-Ի որոշմամբ (ՍԴՌ-27)),

- 1997 թվականի օգոստոսի 29-ի՝ «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին» պայմանագրին (ՀՀ կողմից վավերացվել է Ազգային ժողովի 1998 թվականի փետրվարի 2-ի ԱԺՆ-Ն-221-1 որոշմամբ (ՍԴՈ-72)),

- 2010 թվականի դեկտեմբերի 10-ի՝ «Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության հավաքական անվտանգության համակարգի ուժերի և միջոցների կազմավորման և գործունեության կարգի մասին» համաձայնագրին (ՀՀ կողմից վավերացվել է Ազգային ժողովի 2011 թվականի սեպտեմբերի 14-ի ԱԺՌ-287-Ն որոշմամբ (ՍԴՌ-971)),

- 1992 թվականի մայիսի 15-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրին (ՀՀ կողմից վավերացվել է 1992 թվականի հուլիսի 28-ին՝ ԳԽ Հ.Ն-0676-Ի որոշմամբ),

- 2002 թվականի նոյեմբերի 5-ի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև գաղտնի տեղեկատվության փոխադարձաբար պաշտպանության մասին» համաձայնագրին (ՀՀ կողմից վավերացվել է ՀՀ Նախագահի 2003թ. հունվարի 9-ի ՆՀ-1255-Ն հրամանագրով):

7. Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության գինված ուժերի և Ռուսաստանի Դաշնության գինված ուժերի գորքերի միացյալ խմբավորման ստեղծումը, դրա ծավալման և կիրառման կարգը նախատեսվում է իրականացնել փոխահավետ համագործակցության և փոխհամաձայնության սկզբունքների հիման վրա, նպատակ ունենալով դիմակայել կողմից անվտանգության դեմ ուղղված մարտահրավերներին և սպառնալիքներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Շ Ե Յ**.


1. 2016 թվականի նոյեմբերի 30-ին Մոսկվայում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության գինված ուժերի և Ռուսաստանի Դաշնության գինված ուժերի գորքերի (ուժերի) միացյալ խմբավորման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

## ՆԱԽԱԳԱՀՈՂ

28 փետրվարի 2017 թվականի  
ՍԴՌ-1351

## Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2016 թվականի նոյեմբերի 9-ին Երեքաւոհս  
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՅՈՒՍԽԱՅԻՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ  
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ՄԻԶԵՎ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

28 փետրվարի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալյայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող).

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Հայրապետյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2016 թվականի նոյեմբերի 9-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Հյուսիսային շրջակա միջավայրի ֆինանսական

կորպորացիայի միջև շրջանակային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2017 թվականի փետրվարի 13-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության և Հյուսիսային շրջակա միջավայրի ֆինանսական կորպորացիայի (Կորպորացիա) միջև շրջանակային համաձայնագիրը (Համաձայնագիր) ստորագրվել է 2016 թվականի նոյեմբերի 9-ին՝ Երևանում:

Համաձայնագիրը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարության և Կորպորացիայի միջև համագործակցության ընդհանուր շրջանակը: Կորպորացիայի կողմից ֆինանսավորվելիք կոնկրետ ծրագրերի հատուկ դրույթներն ու պայմանները կսահմանվեն Կորպորացիայի կողմից՝ յուրաքանչյուր առանձին ֆինանսավորման պայմանագրում:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

ա) ընդունել, որ Կորպորացիան միջազգային ֆինանսական հաստատություն է, որը գնումների թափանցիկության, ներդրումների կատարման ընթացքում արդյունավետ կառավարման և շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատվության ու ազգային պարտքի վերածնակերպմանը շմասնակցելու առումով վարում է այլ միջազգային ֆինանսական հաստատություններին համանման քաղաքականությունն.

բ) ապահովել, որ Հայաստանի Հանրապետության տարածքում իր գործունեության առնչությամբ Կորպորացիան օգտվի միջազգային համաձայնագրերով միջազգային կազմակերպություններին տրված անձեռնմխելիությունից.

գ) Հայաստանի Հանրապետության տարածքում պետական հատվածին ֆինանսավորում տրամադրելիս Կորպորացիային ազատել մրցակցային եղանակով իրականացվող գնումների գործընթացից.

դ) ապահովել Համաձայնագրի շրջանակում Կորպորացիայի կողմից

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ֆինանսավորվող պետական հատվածի դրամաշնորհային ծրագրերի իրականացման ընթացքում առաջացող հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների վճարման պարտավորությունից ազատումը.

ե) Կորպորացիային ազատել վճարման սահմանափակումներից և ընթացիկ ու կապիտալ հաշիվների սահմանափակումներից, որոնք որևէ կերպ կանխում կամ խոչընդոտում են իր հանձնառությունների կատարմանը կամ ֆինանսավորման գործունեությանը.

զ) ապահովել Կորպորացիայի կողմից ֆինանսավորվող ներդրումների նպատակային օգտագործումը:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածի դրույթներին և ուղղված են Հայաստանի Հանրապետության կառավարության և Կորպորացիայի պայմանավորվող պետությունների համար հետաքրքրություն ներկայացնող ներդրումների համար տրամադրվող ֆինանսական միջոցների օգտագործման հարցում երկարաժամկետ համագործակցության հիմք ստեղծելուն:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ոեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ **Ո Ր Շ Ե Յ**.

1. 2016 թվականի նոյեմբերի 9-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Հյուսիսային շրջակա միջավայրի ֆինանսական կորպորացիայի միջև շրջանակային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:


2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

28 փետրվարի 2017 թվականի  
ՍԴՈ-1352

## ՀՐԱՎԵՐ ՔԵՍԲՐԻԶԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՑ



2017թ. Հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 3-ը Մեծ Բրիտանիայի Քեմբրիջի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի և հանրային իրավունքի կենտրոնի հրավերով ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ, «Սահմանադրական մշակույթ» միջազգային վերլուծական կենտրոնի հոգաբարձուների խորհրդի նախագահ, պրոֆեսոր Գ. Հարությունյանը «Սահմանադրական զարգացումների հիմնական միտումներն Արեւելյան Եվրպայի եւ նախկին ԽՍՀՄ տարածքի երկրներում» թեմայով դասախոսությամբ հանդես եկավ Քեմբրիջի Համալսարանի Հանրային իրավունքի կենտրոնի պրոֆեսորադասախոսական կազմի առջև։ Ներկաների հարցադրումների շրջանակներում վերլուծվեցին նաև ՀՀ սահմանադրական դատարանի նախադեպային բնույթ ունեցող մի շարք կարեւոր որոշումներ, ինչպես նաև համեմատա-

կան վերլուծության շրջանակներում ներկայացվեցին սահմանադրական զարգացումների բնորոշ գծերը Հայաստանի Հանրապետությունում:



Աշխատանքային այցի շրջանակներում տեղի ունեցան հանդիպումներ Քեմբրիջի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Ռիչարդ Ֆենտիմանի, Հանրային իրավունքի կենտրոնի նախագահ, պրոֆեսոր Դեյվիդ Ֆելդմանի և Իրավաբանական գրադարան դեկանավար պարոն Դեյվիդ Ուիլսի հետ:



Պարոն Հարությունյանը Քեմբրիջի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի եւ Հանրային իրավունքի կենտրոնի գրադարանին նվիրեց

անզլերեն լեզվով հրատարակված իր նոր մենագրությունները:



Քեմբրիջի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի դեկանի հետ հանդիպման ընթացքում քննարկվեցին Հայաստանի Հանրապետությունում ընթացող սահմանադրահրավական եւ օրենսդրական գարգացումները, սահմանադրական մշակույթի ձևավորման և զարգացման հարցում առկա հայրենական և միջազգային հիմնական մոտեցումները:



Քեմբրիջի համալսարանի Հանրային իրավունքի կենտրոնի

նախագահի հետ կայացած հանդիպման շրջանակներում քննարկվեցին կենտրոնի հետ հետագա համագործակցության հիմնական հեռանկարները։ Առանձնապես կարեւորվեց Հանրային իրավունքի կենտրոնի եւ «Սահմանադրական մշակույթ» միջազգային վերլուծական կենտրոնի փոխգործակցության ուղղությամբ ակտիվ քայլեր իրականացնելու անհրաժեշտությունը։

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԻՏԱԼԻԱՅԻ ՍԱՀՄԱՆԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

**Նոյեմբերի 16-ին** աշխատանքային այցով Հռոմում գտնվող ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ **Գ. Հարությունյանը** հանդիպում ունեցավ Իտալիայի Հանրապետության սահմանադրական դատարանում՝ փոխնախագահ պարոն Ջիորջիո Լատանցիի և դատավոր պարոն Զանկարլո Կորացիոյի հետ։

Իտալական կողմի խնդրանքով ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ **Գ. Հարությունյանը** ներկայացրեց սահմանադրախրավական բարեփոխումների ընթացքը Հայաստանի Հանրապետությունում։ Անդրադարձ կատարվեց երկու երկրների ընտրական օրենսդրություններին և կայուն ժողովրդավարական համակարգերի ամրապնդման գործում սահմանադրական դատարանների դերակատարմանը։

ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ **Գ. Հարությունյանը** ներկայացրեց ք. Հռոմում նոյեմբերի 17-18-ը «Սահմանադրական մշակույթ» միջազգային վերլուծական կենտրոնի և Արևելագիտության Պապական Ինստիտուտի համատեղ ջանքերով կազմակերպվող «Ժամանակակից անհատի հոգեւոր և իրավական վարքագիծին նետված մարտահրավերները և դրանց հաղթահարման հրամայականները» խորագրով միջազգային խորհրդաժողովի նպատակները և ակնկալվող արդյունքները, որի աշխատանքներին մասնակցելու են տարբեր երկրների ականավոր սահմանադրագետներ, սահմանադրական դատարանների անդամներ, սահմանադրական իրավունքի միջազգային փորձագետներ։

Հանդիպման ընթացքում հանգամանալից քննարկում ծավալվեց նաև երկու երկրների իրավական փոխգործակցության և դրա խորացման ուղղությամբ Հայաստանի և Իտալիայի սահմանադրական դատարանների մոտեցումների շուրջ հանդիպմանը մասնակցում էին նաև ՀՀ ՍԴ անդամ Ա. Գյուլումյանը եւ ՍԴ արտաքին կապերի բաժնի վարիչ Ա. Մինասյանը։

## ՄԻԶԱՋԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ՀՌՈՄՈՒՄ

**2017թ. Նոյեմբերի 17-18-ը «Սահմանադրական մշակույթ» միջազգային վերլուծական կենտրոնը, «ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի» հետ համատեղ, Սուրբ Աթոռի և Արևելագիտության պապական ինստիտուտի աջակցությամբ Հոռմի Արևելագիտության պապական ինստիտուտի Մեծ դահլիճում կազմակերպել էր «Ժամանակակից անհատի հոգևոր և իրավական վարքագծին նետված մարտահրավերները և դրանց հաղթահարման հրամայականները» խորագրով միջազգային խորհրդաժողով։ Խորհրդաժողովին մասնակցում էին մի շարք երկրների սահմանադրական դատարանների պատվիրակություններ, Սուրբ Աթոռի բարձրաստիճան պաշտոնյաներ, հանրահայտ սահմանադրագետներ Ավատրիայից, Հունգարիայից, Ռուսաստանից, Ալբենիայից, Վրաստանից, Մակեդոնիայից, Սերբիայից, Իոլանդիայից, Իսլանդիայից, Իտալիայից, Ֆրանսիայից, Տաջիկստանից։**



Խորհրդաժողովին բացման խոսքով հանդես եկան ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ, «Սահմանադրական մշակույթ» միջազգային վերլուծական կենտրոնի հոգաբարձուների խորհրդի նախագահ պրն Գ. Հարությունյանը և Արևելագիտության պապական ինստիտուտի ռեկտոր Դավիթ Նազարը։ Ողջունի խոսքերով հանդես եկան Եվրոպայի խորհրդի

Վենետիկի Հանձնաժողովի նախագահ պրն Ջ. Բուրիքիոն, Սուրբ Աթոռի Արևելյան եկեղեցիների ժողովի նախագահ, կարդինալ Լեռնարդո Սանդրին, Սուրբ Աթոռի օրենսդրական տեքստերի խորհրդի նախագահ, կարդինալ Ֆրանչեսկո Կոկոպալմերիոն, Արևելագիտության պապական ինստիտուտի կանոնական իրավունքի ֆակուլտետի դեկան հայր Զորջ Շոյսենը:



Խորհրդաժողովի առաջին նիստում (նախագահում էր Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախկին փոխնախագահ, Կենտրոնական Եվրոպական համալսարանի պրոֆեսոր Անդրաշ Շայոն) զեկուցումներով հանդես եկան ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ, «Սահմանադրական մշակույթ» միջազգային վերլուծական կենտրոնի հոգաբարձուների խորհրդի նախագահ, պրոֆեսոր Գագիկ Հարությունյանը «Մարդու սոցիալական և իրավական վարքագծի սահմանադրականացման երամայականները», Կոստվոյի մասնագիտական պալատների Սահմանադրական դատարանի նախագահող դատավոր, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախկին դատավոր տկն Էն Փաուեր-Շորդեն «Անհատի արժեքը ժամանակակից սահմանադրական մշակույթում և կենսաբժշկության եթեկական և իրավական մարտահրավերները», Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախկին դատավոր, պրոֆեսոր Բոշտյան Զուապանչիչը «Նասցիտուրուսի իրավասությեկտությունը և նրա կյանքի իրավունքը» և Մարդու իրավունքների

Եվրոպական դատարանի սեկցիայի նախագահ պրն Ռոբերտ Սպանոն՝ «Մարդու արժանապատվությունը և կյանքի իրավունքը» թեմաներով:



Հարց ու պատասխաններով քննարկվեցին զեկուցումներում արծարձված թեմաները:

Ընդմիջումից հետո երկրորդ նիստում (նախագահում էր ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ, «Սահմանադրական մշակույթ» միջազգային վերլուծական կենտրոնի հոգաբարձուների խորհրդի նախագահ, պրոֆեսոր Գագիկ Հարությունյանը) իրենց գեկույցները ներկայացրեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հայաստանի աստվածաշնչան ընկերության գլխավոր քարտուղար, արքեպիսկոպոս Եղիշիկ Պետրոսյանը «Ժամանակից անհատի հոգևոր և իրավական վարքագծի արդի մարտահրավերները. պետության և եկեղեցու դերը դրանց հաղթահարման գործում», Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախակին փոխնախագահ, Կենտրանական Եվրոպական համալսարանի պրոֆեսոր Անդրաշ Շայոն՝ «Համերաշխությունը (առլիդարությունը) ժամանակակից սահմանադրական մտքում» և Պոլսի Հայ կաթողիկե արքեպիսկոպոսական թեմի առաքելական կառավարիչ, Արևելագիտության պապական ինստիտուտի պրոֆեսոր, արքեպիսկոպոս Լևոն Զեքիեանը՝ «Արժեքի և արժեքների միջև դիալեկտիկան: Պատմական զարգացման և ժամանակակից հիմնախնդիրների փիլիոսփայական տեսանկյունը» թեմաներով:

Երկրորդ նիստուն ավարտվեց հարց ու պատասխաններով, թեմաների քննարկումներով:

Երրորդ նիստում (նախազահում էր Սերբիայի Հանրապետության սահմանադրական դատարանի նախազահ տկն Վեսնա Իլիչ-Պրելիչը) գեկուցումներով հանդես եկան Միջազգային իրավունքի ոռուսաստանյան ասցիացիայի փոխնախազահ, ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ կոմիտեի ընտրված անդամ, նախկին Հարավալավիայի և Ռուսակայի միջազգային քրեական տրիբունալների նախկին դատավոր, պրոֆեսոր Բախտիյար Տուզուլիսամերովը «Սահմանադրական ինդրից սահմանադրական հրամայականի. դատական մարմինների կողմից մահապատճի արգելման վերլուծությունը» և Վրաստանի սահմանադրական դատարանի նախկին փոխնախազահ, ՄԱԿ-ի՝ Մարդու իրավունքների կոմիտեի նախկին անդամ, Իլիայի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսոր Կոնստանտին Վարձելաշվիլին «Սահմանադրության սրբազն գիրքը. արժեքներ, իդեալներ և իրավունքներ հետխորհրդային իրականությունում» թեմաներով:

Երբորդ նիստի ավարտին հաջորդեցին հարց ու պատասխանները՝ թեմաների ընտրուսությունում:

Խորհրդաժողովի չորրորդ նիստում (նախազահում էր Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախկին դատավոր, պրոֆեսոր Բոշտյան Զուլանչիշը) գեկույցներով հանդես եկան Վենետիկի հանձնաժողովի անդամ, Սկոպյեի համալսարանի պրոֆեսոր տկն Տատյանա Կարակամիջևա-Յովանովսկան՝ «Սահմանադրական մշակույթը, լրասավորչականության մոտեցումը պոստ-սեկուլյար (հետաշխարհիկ) դարաշրջանում. ժամանակակից բալկանյան որոշ մոտեցումներ» և Սանկտ Պետերբուրգի պետական տնտեսագիտական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի գիտական դեկանար, սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ալեքսեյ Լիվերովսկին՝ «Եթոնկրոնական արժեքների իրավական իրազործումը պետությունների սահմանադրական զարգացման գործում» թեմաներով:

Չորրորդ նիստն ավարտվեց հարց ու պատասխաններով, թեմաների քննարկումներով:

Խորհրդաժողովի շրջանակներում տեղի ունեցավ «Սահմանադրական մշակույթ» միջազգային վերլուծական կենտրոնի կողմից սահմանված Մարդասիրական առաքելության Պատվո շքանշանի շնորհման արարողությունը: «Սահմանադրական մշակույթ» միջազգային վերլուծական կենտրոնի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ, ի հիշատակ պրն Վարուժան Բուրմայանի, շքանշանը շնորհվեց նրա տիկնոջը՝ տկն Հիլդա Տիրուիի Բուրմայանին: Միջազգային խորհրդաժողովի շրջանակներում նոյեմբերի 18-ին կազմակերպվեց երկու կլոր սեղան, որտեղ ներկայացվեց Գ. Հարությունյանի, Զ. Սարգսյանի և Ռ. Գևորգյանի կողմից մշակված սահմանադրական մշտադիտարկման մեթոդաբանությունը:

Միջազգային խորհրդաժողովի ավարտին Սուրբ Աթոռում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան պրն Միքայել Մինասյանի կողմից միջազգային խորհրդաժողովի մասնակիցների և դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչների համար տրվեց պաշտոնական ընթրիք, որի շրջանակներում ներկայացվեց Մերձավոր Արևելյում քրիստոնյաների իրավունքների պաշտպանությանն ուղղված «StandTogether» ծրագրի ներկայացումը:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՒՄ

2017թ. Նոյեմբերի 18-ին Հոռոմում ընթացող միջազգային խորհրդաժողովի շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ, «Սահմանադրական մշակույթ» միջազգային վերլուծական կենտրոնի հոգաբարձուների խորհրդի նախագահ պրն Գ. Հարությունյանը հանդիպեց Սուրբ Աթոռի պետական քարտուղար, կարդինալ Պիետրո Պառոլինի հետ:

Պրն Հարությունյանը Սուրբ Աթոռի պետական քարտուղարին տեղեկացրեց «Սահմանադրական մշակույթ» միջազգային վերլուծական կենտրոնի ստեղծման նպատակների, իրականացվող ծրագրերի, առաջիկա միջոցառումների մասին: Պետական քարտուղարի խնդրանքով պրն Հարությունյանը ներկայացրեց Հոռոմում ընթացող «Ժամանակակից անհատի հոգևոր և իրավական վարքագիծն նետված մարտահրավերները և դրանց հաղթահարման հրամայականները» խորագրով միջազգային խորհրդաժողովի ծրագիրը և դրա շրջանակներում քննարկված հիմնահարցերը:

Հանդիպման ժամանակ անդրադարձ կատարվեց Մերձավոր Արեւելյում քրիստոնյաների հետապնդման և նրանց իրավունքների պաշտպանության հարցում առավել հետևողական մոտեցման որդեգրման անհրաժեշտության մասին:

*ՀՀ ՍԴ մամուլի ծառայություն*

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության  
20 դեկտեմբերի 1996թ. կողեզրայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրության հասցեն՝  
Երևան, Բաղրամյան 10  
Հեռախոս՝ 011-588-171  
E-mail: armlaw@concourt.am.  
[http://www.concourt.am.](http://www.concourt.am)

Ստորագրված է տպագրության՝ 06.12.2017թ.

Դասիչ՝ 77754  
Գրաշափը՝ 70X100 1/16  
Տպաքանակը՝ 400

ՀՀ ՄԴ տեղեկագիրը ՀՀ  
բարձրագույն որակավորման  
հանձնաժողովի որոշմամբ ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի  
ատենախոսությունների հիմնական արդյունքների  
և դրույթների հրապարակման համար ընդունելի  
հրատարակությունների ցուցակում

---

Вестник Конституционного Суда Республики Армения N 4(88)2017  
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 4(88)2017  
Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie N 4(88)2017